Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

8-րդ դաս.

ԵՐԵՎԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
2012

Ներածություն

Սիրելի՛ աշակերտներ,

Ձեր առջև հասարակագիտության դասագիրքն է, որի նպատակն է օգնել Ձեզ մուտք գործելու մի նոր անծայրածիր ու հետաքրքիր աշխարհ, որտեղ կծանոթանաք բազմաթիվ կարևոր գաղափարների, կկարողանաք գտնել Ձեզ արդեն հուզող տարբեր հարցերի պատասխաններ, կսովորեք մտածել ու վերլուծել ավելի համակարգված ձևով….

Դուք ուսումնասիրելու եք հասարակագիտությունը դպրոցում Ձեր հետագա ուսումնառության բոլոր տարիների ընթացքում:

Իսկ ի՞նչ է հասարակագիտությունը: Եթե փորձենք բացատրել բառի կառուցվածքից ելնելով՝ կտեսնենք, որ “հասարակագիտություն” բառը կազմված է “**հասարակություն**” և “**գիտություն”** բառերից, այսինքն՝ ***այն գիտություն է հասարակության մասին***: Սակայն հասարակությունը մարդկանց ամբողջություն է, հետևապես այն նաև ***գիտություն է մարդու մասին***: Մարդուն և հասարակությունն ուսումնասիրող բազմաթիվ գիտություններ կան. *փիլիսոփայություն, գեղագիտություն, բարոյագիտություն, հոգեբանություն, տնտեսագիտություն, իրավագիտություն, քաղաքագիտություն* և այլն: Դրանք կուսումնասիրեք հետագայում՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Իսկ դպրոցում կուսումնասիրեք հասարակագիտությունը, որը պարունակում է վերոնշյալ գիտություններից այնպիսի տարրեր, որոնք կօգնեն Ձեզ հասունացման ու հասարակության լիարժեք ներկայացուցիչ դառնալու գործընթացում:

Հնարավոր է, որ բարձրաձայն կամ մտքի մեջ տարակուսեք, թե ինչու եք ուսումնասիրում “հասարակագիտություն” առարկան, մի՞թե առանց դրա հնարավոր չէ, չէ՞ որ ծնված օրվանից հասարակության մեջ ենք ապրում, էլ ի՞նչ կարիք կա հասարակագիտությունը հատուկ ուսումնասիրելու…

Բայց ամեն ինչ այնքան էլ պարզ չէ, քանի որ արդի հասարակությունը բավական բարդ համակարգ է, որը բաղկացած է տարբեր տարրերից, առանց որոնց ծանոթանալու հնարավոր չէ ապրել և գործել լիարժեք: Ձեզ կարող են հուզել մի շարք հարցեր, օրինակ՝ ինչպե՞ս հաղթահարել բախումը հասակակիցների հետ, ինչպե՞ս կողմնորոշվել լրատվության հորձանուտում, ի՞նչ իրավունքներ և ազատություններ ունեք Դուք և այլն, և այլն…

Ներկայացվող դասագրքում Դուք կգտնեք ներածական գիտելիքներ մարդու, նրան շրջապատող բնական ու հասարակական միջավայրի մասին, Ձեզ կներկայացվեն մի շարք հիմնարար արժեքներ, ինչպիսիք են ազատությունը և պատասխանատվությունը, արդարությունը, հավասարությունը և հանդուրժողականությունը, կծանոթանաք նաև “իշխանություն” հասկացությանը և դրա անհրաժեշտության ու չարաշահումների խնդրին: Կմտորեք, օրինակ, այն մասին, թե հակամարտությո՞ւնն է արդյունավետ, թե համագործակցությունը, ազատությունը նշանակում է ամենաթողությո՞ւն, թե՝ ոչ, իսկ պատասխանատվությունը բե՞ռ է, թե՝ առավելություն:

Դասագրքում ներկայացվող վերոնշյալ և մնացյալ բոլոր թեմաները կարևոր են, քանի որ դրանք մեծապես ազդում են մարդու և քաղաքացու ձևավորման վրա, իսկ *լավ մարդու և քաղաքացու ձևավորումը դպրոցական կրթության կարևորագույն նպատակներից է*: Հիշեք, որ առաջարկվող հարցերի քննարկումը չպետք է սահմանափակել միայն դասարանում, քանի որ դրանցից շատերի պատասխանները

պետք է որոնեք դասարանի պատերից դուրս՝ տանը, փողոցում, համայնքում և այլուր… Դասագրքում առաջարկվող թեմաները սերտելու համար չեն, որ մտապահեք ու պատմեք հաջորդ դասին՝ այնուհետև մոռանալով: Մտորե՛ք դրանց մասին, վերլուծեք տարբեր իրադրությունների հետ կապված, քննարկե՛ք, բանավիճե՛ք ու ձևավորե՛ք Ձեր սեփական մոտեցումները քննարկվող հարցերին, դրանց մասին զրուցե՛ք Ձեր ծնողների, ընտանիքի անդամների և ընկերների հետ:

Քննարկվող հարցերի շուրջ համարձակորեն արտահայտե՛ք Ձեր տեսակետները, փորձե՛ք հիմնավորել դրանք: *Հասարակագիտությունն ուսումնասիրում է բազմաթիվ հարցեր, որոնք պատրաստի պատասխաններ չունեն, դրանց պատասխանները յուրաքանչյուր սերունդ, յուրաքանչյուր մարդ ինքն է որոնում-գտնում իր կյանքի ընթացքում:* Գործո'ւն եղեք այդ հարցերին Ձեր ուրույն պատասխանների որոնման ընթացքում: Եղե'ք ակտիվ և որոնող…

Սիրով մաղթում ենք հաջողություն…

Ինչպե՞ս օգտվել այս դասագրքից

Դասագիրքը բաղկացած է գլուխներից, իսկ գլուխներն իրենց հերթին՝ դասերից: Դասերը սկսվում են նպատակների նկարագրությամբ: Ուշադիր կարդացեք դասի նպատակը սկզբում: Այնուհետև անդրադարձեք դրան վերջում՝ փորձելով պարզել, արդյոք յուրացրել եք այն գիտելիքներն ու հմտությունները, որ նախատեսված էին տվյալ դասին յուրացնելու համար: Յուրաքանչյուր դասում տրվում է հիմնական տեքստը, որը պետք է ուշադիր, խորամուխ լինելով ընթերցել: Դասի կարևոր հասկացություններն ու նոր բառերը տեքստում տրվում են թավ կամ շեղ տառերով: Որպես կանոն, բերվում են դրանց սահմանումները կամ մեկնաբանությունները: Այլ անծանոթ բառեր բացատրվում են տողատակի ծանոթագրություններում: Սովորե՛ք նոր բառերը: Եթե տեքստը կարդալիս հանդիպում եք անհասկանալի բառերի, որոնց բացատրությունները չեք գտնում, անպայման նայե'ք բառարաններում, ինտերնետում կամ հարցրե՛ք ուսուցչին: Տեքստը լրիվ հասկանալու և իրոք յուրացնելու (այլ ոչ թե մեխանիկորեն սերտելու) համար կարևոր է, որ ըմբռնեք բոլոր բառերի ու արտահայտությունների իմաստը:

Տեքստից հետո տրվում են հարցեր մտորելու կամ քննարկելու համար: Փորձե'ք գտնել այդ հարցերի Ձեր պատասխանները, դրանք քննարկե՛ք ընկերների, ընտանիքի անդամների հետ: Կարևոր է, որ դասի շրջանակներում յուրացված գաղափարներն ու հմտությունները կարողանաք տանել կյանք, օգտագործել ամենօրյա Ձեր վարքում, քանի որ հասարակագիտության ուսումնասիրումը ոչ միայն տեսական դասընթաց է, այլև գործնական “ապրելու արվեստ”:

Բացի հիմնական տեքստերից դասագրքում տրվում են լրացուցիչ և հետաքրքրաշարժ ընթերցանության նյութեր, որոնք կարող են օգնել խորացնելու Ձեր գիտելիքները քննարկվող թեմաների մասին: Դասագրքում կան նյութեր “Ծանի'ր զքեզ” խորագրի ներքո, որոնք Ձեզանից ամեն մեկին հնարավորություն կտան ինքնավերլուծություն կատարել ու ավելի լավ ճանաչել ինքն իրեն:

Ուսումնասիրե՛ք դասագրքի նկարազարդումները: Դրանք Ձեզ հնարավորություն կտան ավելի ցայտուն պատկերացնել մի շարք իրողություններ, որոնց մասին խոսվում է տեքստում: Դասագրքում կան նաև աղյուսակներ և գծապատկերներ: Արտապատկերե՛ք դրանք Ձեր տետրերում և բոլոր գրառումները

կատարե'ք միայն տետրերում: Ձեզանից հետո այս դասագիրքն օգտագործելու են նաև այլ աշակերտներ: Խնդրում ենք խնամքով վերաբերվել:

Դասագրքի մասին Ձեր կարծիքներն ու առաջարկությունները կարող եք ուղարկել հեղինակներին էլ. Փոստի krtutjun@yahoo.com և jaapsilva@yahoo.co.uk հասցեներով:

Մաղթում ենք արդյունավետ ուսումնառություն:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 1 - 2. ՄԱՐԴԸ ԵՎ ՆՐԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԲՆԱԿԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Դասի նպատակը

Սովորելով այս դասը՝ Դուք կկարողանաք վերլուծել “մարդ”, “բնություն” և “հասարակություն” հասկացություններն ու մեկնաբանել բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը: Ինչպես նաև կկարողանաք ամբողջական պատկերացում կազմել հասարակություն-բնություն հարաբերությունների մասին՝ մտորելով այն խնդրի շուրջ, թե մարդկային հասարակությունն ինչպիսի վերաբերմունք պետք է դրսևորի բնության հանդեպ, որպեսզի վերջինս շարունակի գոյատևել իր բազմազանության և ներդաշնակության մեջ, և որպեսզի հաջորդ սերունդները հնարավորություն ունենան ապրելու մաքուր և անվտանգ միջավայրում:

ՄԱՐԴԸ

ԸՆԹԵՐՑԵ'Ք ՏԵՔՍՏԸ

…Դառնամ փառաբանեմ… փառաբանեմ մարդուն՝ այն էակին միակ,
Որ ծիծաղել գիտի, որ արտասվել գիտի, երգել գիտի,
Թող որ գիտի նաև իր նմանին դարձնել անշնչացած դիակ,
Բայց և գիտի գրկե'լ, գիտի գրել գրքե'ր, հերկե'լ գիտի…

Պարույր Սևակ

- Մտածեք, թե ինչ հատկություններով է մարդը տարբերվում մնացած բոլոր կենդանիներից: Գուցե նրանով, որ երկոտանի՞ է, գուցե նրանով, որ ծիծաղել գիտի՞: Գուցե այլ որևէ հատկանիշով…

Տիեզերքում կան բազմաթիվ հետաքրքիր երևույթներ, բնության մեջ հանդիպում ենք տարբեր զարմանահրաշ էակների, սակայն իմաստասերների[1] համար ամենահանելուկային ու զարմանալի էակը մնում է հենց ինքը՝ մարդը: Մարդն անբացատրելի է, խորհրդավոր, նրանում եղած ամենակարևորը աչքով չի տեսնվում, և մարդը մնում է առեղծված ինքն իր համար: Ժամանակակից գիտությունը, իմաստասիրությունը և կրոնը բացահայտել են մարդու էության բազմաթիվ կողմեր, սակայն, այնուամենայնիվ, մարդկայինի գաղտնիքը դեռ հեռու է լիովին պարզվելուց: Դժվար

[1] Իմաստասեր – փիլիսոփա, իմաստությունը սիրող , մտածող, որն, ի թիվս այլ հարցերի ուսումնասիրում է նաև մարդուն:

է տալ մարդու միանաշանակ ու վերջնական սահմանում, սակայն հնարավոր է բացահայտել մարդու էությունը՝ թվարկելով նրան բնորոշ էական հատկությունները:

Վերլուծելով տարբեր մարդկային հատկանիշներ՝ իմաստասերները եզրակացնում են, որ դրանց մեջ կան որոշիչ, **էական հատկություններ**, որոնք սկզբունքորեն կարևոր են մարդ էակին բնութագրելիս, և կան *երկրորդական, պատահական հատկություններ*, որոնք մարդը կարող է ունենալ կամ չունենալ: Օրինակ՝ տարբեր մարդկանց մազերի, մաշկի, աչքերի գույնը կարող է լինել տարբեր, բայց նրանք բոլորը, միևնույն է, կմնան մարդ: Իսկ եթե մարդը կորցնի որևէ էական հատկություն, նա այլևս չի կարող մարդ լինել:

- Ի՞նչ եք կարծում, փոքր հասակում հասարակությունից դուրս մնացած ու միայն որպես կենդանի մեծացած էակները՝ ‘մաուգլիները’, մա՞րդ են, թե՞ ոչ: Արդյոք կարելի՞ է համարվել մարդ՝ առանց մտածելու կարողության, առանց լեզվի: Մարդը միայն կենսաբանական էա՞կն է, թե՞ մարդ լինելու համար այլ հատկություններ էլ են պետք:

Մարդ էակին նկարագրելու համար մտածողներն օգտագործում են տարբեր բառակապակցություններ՝ փորձելով մարդու բոլոր հատկանիշներից առանձնացնել կարևորագույնը: Դուք գիտեք, որ մարդու կենսաբանական տեսակը կոչվում է ”*հոմո սապիենս*”՝ **բանական մարդ:** Իմաստասերները մարդուն անվանում են նաև “*հոմո ֆաբեր*”՝ **ստեղծագործ մարդ**՝ կարևորելով մարդու արարելու կարողությունը: Մեկ այլ մոտեցմամբ նրան կոչում են “*հոմո ագենս*”՝ **գործող մարդ**, նկատի ունենալով, որ մարդու ողջ կյանքը գործունեություն է: Փաստորեն, մարդու էական հատկություններ են բանական, գործող և ստեղծագործող լինելը:

Միջնադարյան հայ մեծ իմաստասեր Դավիթ Անհաղթը մարդուն սահմանում է հետևյալ կերպ. *մարդը բանական, մահկանացու, մտածելու և գիտենալու ունակ կենդանի է*: Իսկ ըստ հին հույն իմաստասեր Արիստոտելի՝ *մարդը հասարակական կենդանի է*: Տեսնում եք, որ երկու սահմանումներում էլ երևում է մարդու երկակի բնույթը. այն է՝ մարդը և՛ կենդանի է, և՛ մտածելու ունակ, բանական, հասարակական էակ:

Իմաստասերները “մարդ” բառն օգտագործելով նկատի են ունենում ոչ միայն առանձին կոնկրետ մարդուն, այլ նաև ողջ մարդկությանն առհասարակ, վերլուծելով նրա վարքը զարգացման ողջ ընթացքում:

Հարցեր մտորելու համար.

- Ի՞նչ եք կարծում, մարդիկ ավելի շատ նմա՞ն են միմյանց, թե՞ տարբեր:
- Ո՞ր հատկություններն եք բարձր գնահատում Ձեր սիրելի մարդկանց մեջ:

- Որո՞նք են մարդու էական և ոչ էական, պատահական հատկությունները:
- Մարդու ինչպիսի՞ սահմանումներ գիտեք:
- Մարդու ի՞նչ էական հատկություններ կարող եք թվարկել:
- Կա՞ն արդյոք մարդուն բնորոշ գծեր, որոնց մասին դասի տեքստում գրված չէ:
- Դավիթ Անհաղթը նշում է, որ միայն մարդն է ծիծաղող կենդանի: Պարույր Սևակը դասի բնաբան հանդիսացող բանաստեղծության մեջ համաձայնում է դրան: Իսկ Դուք համաձա՞յն եք այդ մտքին, թե՝ ոչ: Ինչու՞:
- Փորձեք բացատրել Սևակի հետևյալ միտքը. “ *Հանճար լինելուց առաջ և լինելու համար հարկավոր է նախ լինել մարդկային, որովհետև ճահճուտում ոչ միայն լոտոս, այլև սովորական ջրաշուշան էլ չի բուսնի, ինչպես որ հոտած ջրափոսերում էլ չի աճի փշոտ կողա՛կ անգամ, էլ ո՛ւր մնաց իշխան-կարմրախայտ*”:

ԾԱՆԻ՛Ր ԶՔԵԶ

Հին Հունաստանի հնագույն քաղաքներից մեկում՝ Դելփիքում, կար արվեստների հովանավոր Ապոլոն աստծուն նվիրված տաճար, որի պատերին քանդակված էին յոթ հին իմաստունների հետևյալ ասույթները:

“Չափն ամենից կարևոր է”
“Զսպի՛ր բարկությունդ”
“Ոչինչ չափից ավելի”
“Հիշի՛ր, որ կյանքը վերջավոր է”
“Վատերն ամենուր մեծամասնություն են կազմում”
“Ոչ մեկի փոխարեն պատասխան մի՛ տուր”
“Ճանաչի՛ր ինքդ քեզ”:

Հույները կարևոր գործեր անելուց առաջ սովորաբար գալիս էին այդ տաճարն ու ձգտում ստանալ աստվածների օրհնությունն իրենց գործերին, նրանք նաև կարդում էին վերոնշալ ասույթներն ու մտորում դրանց մասին:

Վերջին՝ “Ճանաչի՛ր ինքդ քեզ” ասույթը դարձավ հույն մեծ իմաստասեր Սոկրատեսի գլխավոր պատգամը մարդուն: Սոկրատեսը նկատել էր, որ մարդիկ հաճախ պատկերացում էլ չեն ունենում այն նյութի մասին, որի շուրջ տաքացած կարող են վիճել: “Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ” ասում էր նա, փորձելով ցույց տալ, որ մարդը շարունակաբար պետք է որոնի ճշմարտությունը ոչ միայն իրեն շրջապատող աշխարհի, այլև հենց իր մասին: Մարդը չի ճանաչում իրեն և պետք է ձգտի ինքնաճանաչողության:

Միջնադարի հայ մեծ իմաստասեր Դավիթ Անհաղթը Սոկրատեսի “Ճանաչի՛ր ինքդ քեզ” պատգամը փոխանցում է հայ ընթերցողին՝ գրաբարի գեղեցիկ արտահայտությամբ ***“Ծանի՛ր զքեզ”***

Այսուհետ այս խորագրի ներքո կգտնեք որոշակի հիմնախնդիրներ, որոնց տեսանկյունից պետք է դիտարկումներ կատարեք և գրառեք արդյունքները: Դրանք կօգնեն զարգացնել Ձեր ինքնավերլուծության հմտությունները:

Իսկ այժմ դարձյալ կարդացեք հույն իմաստունների ասույթները և մտորեք, թե դրանցից որոնք կարող էին զարդարել արդի տաճարների պատերը՝ որոնք եք պիտանի համարում ժամանակակից մարդու համար և ինչո՞ւ:

ՄԱՐԴՈՒՆ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԲՆԱԿԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Օ՜, բնություն, օ՜ մայր- մշտահոլով, մշտագո և մշտատև,-
Դո՛ւ, որ փոխվում ես հար, բայց մնում ես – կաս բազմաձև…

Եղիշե Չարենց

Իրավամբ, եթե մենք "հրաշք" ենք անվանում բնության վրա մարդու ունեցած իշխանությունը, պետք է ընդունենք, որ այդ "հրաշքն" ավելի շատ արտահայտվում է աղետների ձևով…

Ֆրենսիս Բեկոն

Մարդը կենդանի է, բնության զավակ և, հետևապես, չի կարող գոյատևել առանց բնական միջավայրի: Իսկ ի՞նչ է բնությունը:

Ընդանուր առմամբ կարելի է ասել, որ **բնությունն այն միջավայրն է, որտեղ գոյատևում են մարդը, գոյություն ունեցող ամեն ինչը, ողջ աշխարհն իր բազմազան ձևերով**: Բնության գաղափարը շատ լայն է. բնություն են և՛ հեռավոր աստղերը, և՛ աչքով անտեսանելի ատոմներն ու մոլեկուլները, և՛ հսկա փղերն ու կետերը, և՛ ամենափոքրիկ հողաթափիկ ինֆուզորիաները, բնություն են անսահման օվկիանոսները, անտառներն ու գետերը: Բնություն է երկրի վրա եղած կենսաբազմազանությունը, բնություն է տիեզերքն իր ամբողջության մեջ: Բնությունը բազմազան է, անհնար է որևէ ձեռնարկի մեջ թվարկել նրա բոլոր ձևերը՝ սկսած անկենդան բնությունից, վերջացրած բուսական ու կենդանական աշխարհով: Բայց մյուս կողմից, բնությունը միասնական է, ուստի այն հնարավոր է արտահայտել մեկ բառով՝ բնություն:

Մարդը, սակայն, ինչպես արդեն գիտեք, նաև հասարակական էակ է: Իսկ սա նշանակում է, որ նա չի կարող գոյատևել միայն բնական միջավայրում, այլ ստեղծում է նաև հասարակական միջավայր: Պատմականորեն ծնվելով որպես բնության զավակ, մարդն աստիճանաբար դարերի ընթացքում ստեղծում է կացարաններ, գործիքներ, ճանապարհներ, ի վերջո, մեծ քաղաքներ, որոնք արհեստական են, ձեռակերտ: Իմաստասերներն ասում են, որ ներկայումս մարդն ապրում է **երկրորդ բնության** մեջ: Այդ երկրորդ բնությունը մարդու կողմից ստեղծված արհեստական միջավայրն է (օրինակ՝ արհեստական ջրամբարները, երկաթուղիները, հսկա գործարանները, օդանավակայանները, ռազմական կայանները և այլն), որը փոխում է բնության նախաստեղծ ներդաշնակությունը:

Բայց բացի ձեռակերտ արտաքին միջավարից մարդն ապրում է նաև բուն հասարակական միջավայրում, որը մարդկային հարաբերությունների ամբողջությունն է, մարդկանց միմյանց հետ ունեցած բազմազան կապերի աշխարհը: Իրավամբ, մարդը հասարակական կենդանի է, քանի որ օդի և ջրի պես կարիք ունի իր նմանների հետ շփվելու:

- Մտաբերե՛ք Ռոբինզոն Կրուզոյին: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էր նա խոսում, երբ կողքին մարդ չկար: Ի՞նչն էր նրան մարդ պահում…

Մարդուն ապրելու և գործելու ուժ է տալիս հարազատների սերն ու հոգատարությունը, իր անելիքի կարևորության գիտակցումը, նվիրվածությունը հայրենիքին և այլն: Սա նշանակում է, որ մարդուն շրջապատող հասարակական միջավայրն ունի և՛ արտաքին, տեսանելի կողմ, և՛ ներքին՝ հոգևոր:

Հարաբերությունների ներդաշնակությունը բավարարվածության զգացում է բերում մարդուն: Սակայն մարդու կողմից ստեղծված հասարակական միջավայրը միշտ չէ, որ ներդաշնակում է բնական միջավայրին: Հասարակություն-բնություն հարաբերություններում մտածողները տարբերակում են չորս դարաշրջան:

1. **Բնության գերակայության դարաշրջան**: Սա մարդկության պատմության արշալույսն է, երբ մարդն ամբողջովին ապրում էր բնության աշխարհում և այն աստվածացնում էր: Մարդը լիակատար կախվածության մեջ էր բնական տարերային ուժերից և շնչավորում էր ողջ բնությունը՝ հավատալով անտառի, քամու, օդի և այլ ոգիների գոյությանը: Բնությունը մարդուն ներկայանում էր որպես կատարյալ, խորհրդավոր և ամենազոր: Մարդը ցանկանում էր միաձուլվել իրեն շրջապատող աշխարհին՝ ամրապնդելով իր կապը հողի հետ, արմատավորվելով ‘մայր’ հողում: Նա հավատում էր, որ իր արմատները բուսական կամ կենդանական աշխարհում են (օրինակ՝ տոհմածառի գաղափարը, հզոր կենդանիների՝ առյուծի, վիշապի, խոյի պաշտամունքը և այլն):

Այս փուլում մարդը հավասարապես պաշտում էր թե՛ կենդանիներին, թե՛ բույսերը, թե՛ ջրի, օդի և այլ ոգիներին ու աստվածներին: Սարսափելի պատիժներ էին նախատեսվում այն մարդկանց համար, ովքեր անմտորեն կվնասեին պաշտամունքի առարկա բույսը կամ կենդանուն:

- Նախնադարյան ծառապաշտ ցեղերից մեկի ներկայացուցիչները ծառի կեղևը պոկած մարդու պորտի հատվածում կտրվածք էին անում, պոկում էին մարդու աղիները և դրանցով “փաթաթում ծառի վերքը”: Արդյունքում մարդը մահանում էր՝ իր կյանքով հատուցելով “ծառի կյանքի” դիմաց:

2. **Բնությանն աստիճանաբար հակադրվելու դարաշրջան**: Աստիճանաբար մարդն ընդլայնում է իր գործունեության շրջանակները, սկսում է կառուցել քաղաքներ, անց է կացնում ջրանցքներ, կառուցում է նորանոր փոխադրամիջոցներ, ճանապարհներ ու դառնում է բնությունից հարաբերականորեն անկախ: Այս փուլում մարդն սկսում է բնությունն ընկալել որպես արտաքին ստիպողականության միջավայր, երևույթ, որ պակասեցնում է իր ազատությունը: Այս փուլը սկսվում է հին աշխարհում քաղաքների առաջացումից ու շարունակվում ողջ միջնադարում: Միջնադարյան քրիստոնեական մտածելակերպի

շրջանակներում մարդը պաշտամունքի առարկան՝ աստվածայինը, առանձնացնում է բնությունից և ավելին՝ հակադրում վերջինիս: Բնությունը համարվում է Աստծո կողմից արարված, սակայն ստվերային, անկատար, չարիքի աղբյուր: Կատարյալն ու ներդաշնակը համարվում են այնկողմնային, երկնային:

- Նկարիչները չէին պատկերում իրական բնանկարներ, այլ միայն օգտագործում էին բնության որոշ դետալներ: Պատկերման արժանի էր համարվում միայն աստվածայինը: Սակայն ուշադիր ուսումնասիրելու դեպքում կարելի է նկատել, որ միջնադարում որքան էլ փորձում էին աստվածայինը հակադրել իրական-բնականին, միևնույն է՝ դրախտ պատկերելիս դարձյալ օգտագործում էին իրական գեղեցիկ տեսարանների դրվագներ: Ինչպես նաև եկեղեցիները կառուցում էին բնության ամենագեղեցիկ անկյուններում, այն վայրերում, որտեղ բնության վեհությունն անմիջապես հուշում էր աստվածային արարչագործության կատարելության մասին:

3. **Բնության վրա գերիշխանության հաստատման դարաշրջան՝ տեխնիկական-մեքենայական փուլ**: Այս փուլում մարդն արդեն սկսում է իր ստեղծածը հակադրել Աստծո ստեղծածին՝ բնությանը՝ փորձելով իր կամքին ենթարկեցնել վերջինս: Սա նոր և նորագույն դարաշրջանն է արևմտյան պատմության մեջ՝ արդյունաբերական, գիտական և ինֆորմացիոն հեղափոխությունների դարաշրջանը: Մարդն աստիճանաբար բացահայտում է բնության մի շարք օրինաչափություններ ու սկսում է հավատալ, որ կարող է լիովին տնօրինել բնությունը: Ստեղծվում է **արհեստածին տեխնոգեն**, հունարեն – "*տեխնե*"՝ *՝արհեստ՝* կամ *՝արվեստ՝* և *՝գենեզիս՝ ՝ծագում՝, ՝առաջացում՝* բառերից՝ միջավայր: Մարդն ավելի շատ ապրում է արհեստական իրերի շրջապատում, քան թե բնության մեջ: Բնությունը շահագործվում է անխոհեմ կերպով, մարդիկ փորձում են փոխել գետերի հունը, վերացնում են անտառները և անխնա ծախսում բնական ռեսուրսները: Դրական մի շարք տեղաշարժեր՝ երկաթուղու, ավտոճանապարհների

ստեղծումը, արդյունաբերական մեծ ձեռնարկությունների առաջացումը՝ իրենց հետ բերում են նոր իրավիճակ, երբ վտանգվում է բնական համակարգերի կայունությունը, մաքրությունն ու հավասարակշիռ վիճակը:

- Ժամանակակից շատ քաղաքներում միայն ավտոտրանսպորտի կամ մեծ գործարանների առաջացրած օդի աղտոտվածությունն առաջ է բերում բազմաթիվ նոր հիվանդություններ, վերանում են կենդանիների ու բույսերի մի շարք տեսակներ, որոնք չեն կարողանում հարմարվել աղտոտված միջավայրում ապրելուն:

4. **Բնության արժևորման և պահպանության դարաշրջան**: Անցյալ՝ 20-րդ դարում հասարակությունն այնքան էր հզորացել, որ երևակայում էր, թե կարող է բնությունը տնօրինել ցանկացած ձևով. փոխել գետերի հունը, չորացնել լճերը, հալեցնել բևեռների սառույցները և այլն և այլն:

- Նմանատիպ մի ծրագիր հղացվել էր Սևանա լճի կապակցությամբ, որի արդյունքում լճի մակարդակը իջել էր և լճի կենդանական ու բուսական աշխարհի համար ստեղծվել վտանգավոր իրավիճակ: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի բնակլիմայական ավերածությունների կբերեր այդ ծրագիրը ողջ Հայաստանի տարածաշրջանի համար լիովին իրականացվելու դեպքում:
-
- Մեկ այլ ծրագիր իրականացվում էր Միջին Ասիայում. մարդիկ վերացրել էին տափաստանային գայլերին, որպեսզի այծյամներն անարգել շատանային, այնինչ հակառակը տեղի ունեցավ. վարակիչ հիվանդությունների հետևանքով այծյամների

թիվը կտրուկ նվազեց: Ու մարդիկ հասկացան, որ բնության մեջ ամեն ինչ կարգավորված է այնպիսի հավասարակշռությամբ, որ չի կարելի խախտել այն: Մարդիկ հասկացան, որ գայլերի ոհմակն իրականում պահպանում էր այծյամներին. գայլերը ոչնչացնում էին միայն հիվանդոտ առանձնյակներին, ողջ հոտի համար հանդես գալով որպես սանիտարներ: Իսկ մարդն իր կոպիտ միջամտությամբ ոչ միայն գայլերին վնասեց [որոնց մասին ընդհանրապես չէր հոգում], այլ նպաստեց հենց այծյամների վերացմանը, որոնց, իբր, ձգտում էր պահպանել:



Մարդկությունը հասկացավ իր վերաբերմունքի կործանարար լինելն ու որոշեց նորովի վերաբերվել իր օրրանին: Պարզվեց, որ բնությունը կարող է լինել անպաշտպան ու կարոտ՝ հոգատարության: Մարդիկ հասկացան, որ ամենալավ բանը, ինչ իրենք կարող են փոխանցել հաջորդ սերունդներին, մաքուր և անվտանգ միջավայրն է: **Հասարակությունը գիտակցեց, որ բնությունն իր տունն է**, և առաջացավ մի նոր գիտություն՝ **էկոլոգիա.** գիտություն տան մասին, (հունարեն օյկոս՝ ¦տուն§ և լոգոս՝ ¦գիտություն§ բառերից): Տան մասին այս նոր գիտությունը մարդկանց հուշեց, որ տան մասին ՝հին՝ գիտությունը՝ *տնտեսագիտությունը (էկոնոմիկա* - հուն. օյկոս և նոմոս՝ ՝օրենք՝ բառերից), պետք է այնպես գործադրել, որ ՝տունը՝ չկորցնի իր բնական հավասարակշռությունը, որ հաջորդ սերունդները նույնպես ունենան մաքուր ջրից, և օդից օգտվելու հնարավորություն:

Մեզանից յուրաքաչյուրը պետք է գիտակցի, որ մեր տունը ոչ միայն մեր բնակարանն է, բակն է, փողոցն է, այլև ողջ երկրագունդն է, և բոլորս պատասխանատու ենք այն մաքուր ու բարեկեցիկ պահելու համար:

Սխեմա. Հասարակության և բնության փոխհարաբերության ձևերը



Հարցեր.

- Ի՞նչ է բնությունը:
- Ո՞րն է մարդուն շրջապատող հասարակական միջավայրը:
- Որո՞նք են հասարակություն-բնություն հարաբերությունների չորս փուլերը:
- Ի՞նչ եք կարծում, այսօրվա հայկական հասարակությունը բնության հանդեպ վերաբերմունքի ո՞ր փուլում է գտնվում:
- Ի՞նչ է նշանակում ՝տեխնիկական-մեքենայական փուլ՝ արտահայտությունը:
- Ի՞նչ է նշանակում ՝էկոլոգիա՝ բառը, ինչի՞ մասին է այդ գիտությունը:
- Ի՞նչ կապ ունի էկոլոգիան տնտեսագիտության հետ:
- Ի՞նչ եք կարծում, կլինի՞ արդյոք բնության հանդեպ վերաբերմունքի հինգերորդ փուլ: Եթե՝ այո, ապա ինչպիսին կլինի այն:
- Փորձեք մեկնաբանել Պարույր Սևակի պոեզիայի ներկայացվող կտորը դասում սովորած գաղափարների հիման վրա: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է ուզում ասել հեղինակը հետևյալ տողերով:

Քամին է երգում ինչ-որ եղանակ,
Որ Բեթհովենին պատիվ կբերեր:
Մութ հորիզոնին աղոտ այգալույս՝
Մի ռեմբրանդտյան նորահայտ նկար:
Շեքսպիրին է կյանքը ձեռք առնում՝
Իր ողբերգական դրամաներով…

Իսկ մե՛նք՝ ե՛ս ու դո՛ւ… արվեստ ենք խաղում
Եվ… մի այնպիսի համոզվածությամբ,
Որ Սերվանտեսի հերոսն էլ չուներ…

Առաջադրանք.

- Ձեզ ծանոթ հայ և համաշխարհային գրականությունից գտեք բնության նկարագրության հատվածներ, Ձեր ամենասիրած նկարագրությունն արտագրեք ու պահեք ձեր թղթապանակներում: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես են գրողներն ու բանաստեղծները անձնավորում բնությունը, ինչպիսի զուգահեռներ են տանում (օրինակ՝ Ռաֆֆու ‘Արարատյան դաշտի առավոտը’, Ավետիս Ահարոնյանի ‘Ծառը’, Ակսել Բակունցի ‘Ալպիական մանուշակը’ և այլն)։
- Հնարավորության դեպքում կազմակերպեք էքսկուրսիա դեպի բնության որևէ անկյուն, հրավիրեք ձեր հասարակագիտության, պատմության, գրականության, բնագիտության ուսուցիչներին, որոնք ձեզ կտան այդ վայրի հետ կապված տարբեր տեղեկություններ: Փորձեք ամբողջացնել դրանք:
- Պատմության դասագրքերից կամ հանրագիտարաններից վերհիշեք, թե ինչ են նշանակում ‘արդյունաբերական հեղաշրջում’, ‘գիտա-տեխնիկական հեղափոխություն’ և ‘ինֆորմացիոն հեղափոխություն’ արտահայտությունները:
- Գրեք շարադրություն՝ բնության մասին. ‘Եթե ես լինեի ամենազոր…’: Ի՞նչը կփոխեիք բնության և բնության հանդեպ մարդու վերաբերմունքի մեջ:

ԾԱՆԻ'Ր ԶՔԵԶ

Լրացրե'ք առաջարկվող աղյուսակը՝ հարցերին պատասխանելով հնարավորինս անկեղծ:

	Բնությունն աղտոտելու դեպքեր, որոնց ականատես եք եղել կամ մասնակցել	Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի օրինակներ որոնց ականատես եք եղել կամ մասնակցել
Հունիս		
Հուլիս		

Օգոստոս		

- Եթե ամփոփեք անձամբ Ձեր ամառը, բնության հետ վարվելու ո՞ր կողմը կգերակշռի՝ վնասաբե՞ր, թե՝ հոգատար:
- Կարելի՞ էր ինչ-որ բան ավելի լավ անել: Ինչո՞ւ:
- Գիտե՞ք, արդյոք, թե Ձեր համայնքում աղբամանները որտեղ են: Օգտագործո՞ւմ եք, արդյոք դրանք:
- Հետաքրքրվո՞ւմ եք, արդյոք, բնության պահպանության խնդիրներով: Ի՞նչ խնդիրներ գիտեք:

ԴԱՍ 3. ՄԱՐԴՈՒ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԸ

Դասի նպատակը

Այս դասը սովորելու արդյունքում գաղափար կկազմեք մարդու պահանջմունքների մասին, կկարողանաք տարբերակել նյութական և ոչ նյութական պահանջմունքները և վերլուծել դրանց նշանակությունը մարդու և հասարակության կյանքում:

ԸՆԹԵՐՑԵ'Ք ՏԵՔՍՏԸ

Ինչպես արդեն տեսանք, մարդը երկակի էակ է: Նախ և առաջ, ինչ խոսք, մարդը պատկանում է կենդանական աշխարհին, կենդանի է: Բայց մարդը նաև հասարակական էակ է. նա ստեղծել է մշակույթ և ապրում է մշակույթի աշխարհում:

Մարդու երկակիությունն արտահայտվում է նրա մարմնա-հոգեկան կամ հոգե-մարմնական կառուցվածքում: Որպես կենսաբանական էակ՝ մարդն օժտված է մարմնով, որի գործողության բնական օրենքներն այս կամ այն չափով բացահայտվում են բնական գիտությունների կողմից: Բայց մարդը նաև հոգևոր էակ է, օժտված է հոգեկանով, որն ուսումնասիրում են իմաստասիրությունը, հոգեբանությունը, կրոնը և այլ բնագավառներ: Հոգեկանի ոլորտը շատ լայն է, դրան են պատկանում մեր ապրումները, մտորումները, հույզերը, կամքը, հիշողությունը, խղճմտանքը երևակայությունը և այլն:

Մարմնի և հոգու հարաբերակցության խնդիրը դարեր շարունակ հուզել է մարդկանց ու գտել տարբեր լուծումներ: Եղել է դարաշրջան, երբ մարդիկ մտածել են, որ գոյություն ունի միայն այն, ինչ աչքով տեսանելի է, այսինքն՝ մարմնականը, նյութականը: Իսկ հոգու խնդիրն ընդհանրապես չի դրվել: Մարդը դեռ չի ունեցել պատմական հիշողություն, չի կարողացել պահպանել անցյալի փորձը և մտածել է,

որ աշխարհում ամեն ինչ հավերժ կրկնվում է, ինչպես տարվա եղանակները: Մարդը չի մտածել ո՛չ անցյալի, ո՛չ ապագայի մասին, ապրելով միայն ներկայով:

Հետագա դարերում մարդը հասկացել է, որ ինքը, այնուամենայնիվ, տարբերվում է հավերժական շրջապտույտի մեջ գտնվող կենդանիներից, քանի որ ունի հոգի. մտածում է, զգում, հուզվում, երազում և այլն: Իր համար կա անցյալ, ներկա և ապագա: Այդ ժամանակներից ի վեր նա հոգեկանը հակադրել է մարմնականին, հաճախ մարմնականը համարելով անցողիկ, չարիքի, հիվանդությունների ու աղտեղությունների աղբյուր, իսկ հոգեկանը՝ անանց, վեհ ու կատարյալ:

Ժամանակակից աշխարհում մարդն արդեն գիտակցել է, որ ինքը հոգեկանի ու մարմնականի ներդաշնակություն է, և չի կարող երջանիկ լինել. եթե անտեսի կա՛մ մարմնական, կա՛մ հոգեկան պահանջմունքները:

Իսկ ի՞նչ է **պահանջմունքը**: Բառն ինքը "խոսում" է իր մասին. *այն, ինչի պահանջը զգում է մարդն իր կարիքները բավարարելու համար*: Պարզվում է, որ մարդ էակն ունի տարատեսակ պահանջմունքներ, որոնք կարելի է տարբերակել նյութական և ոչ նյութական պահանջմունքների: **Նյութական պահանջմունքները** տեսանելի, շոշափելի, մի խոսքով՝ զգայելի[1] հանգամանքների ամբողջություն են:

- Մտածե՛ք, թե Դուք ինչ նյութական պահանջմունքներ ունեք: Ինչպես ասում են՝ Ձեզ ի՞նչ նյութական բարիքներ են պետք երջանիկ լինելու համար: Գուցե՝ թռչող ուղղաթիռ խաղալիք, ժամանակակից հեռախոս, համակարգիչ և այլն: Իսկ որո՞նք են ամենատարրական, բայց և խիստ անհրաժեշտ նյութական պահանջմունքները…

Մարդն իր գոյությունը պահպանելու համար կարիք ունի հագուստի, սննդի, կացարանի, ջերմության:

- Երևի արդեն հասկանում եք, որ Ձեր այդ պահանջմունքները բավարարելու համար Ձեր ծնողներն ամեն ինչ անում են. նրանք և՛ հագուստ ու սնունդ են գնում Ձեզ համար, և՛ վճարում ջրամատակարարման, ջեռուցման, էլեկտրաէներգիայի ու այլ վարձեր… Մի խոսքով, ստեղծում են պայմաններ, որպեսզի Ձեր տարրական նյութական պահանջմունքները բավարարվեն:

Սակայն բացի տարրական, հիմնական նյութական պահանջմունքներից մարդն ունի նաև այլ նյութական պահանջմունքներ, որոնք տարբեր մարդկանց մոտ կարող են տարբեր լինել: Օրինակ մեկը հեծանիվ ունենալ է երազում, մյուսը՝ ձի, մեկը գործիքի կարիք ունի, մյուսը՝ հավաքածուի…

Նյութական պահանջմունքները անհրաժեշտ են, բայց ոչ բավարար մարդու լիարժեք գոյության համար, քանի որ կան նաև **ոչ նյութական պահանջմունքներ**: *Դրանք այն հանգամանքներն են, որոնք զգայելի չեն, առարկայացած չեն, բայց շատ կարևոր են մարդու համար,* հաճախ դրանք կոչվում են հոգևոր պահանջմունքներ: Օրինակ՝ յուրաքանչյուր մարդ ունի սիրո և հարգանքի կարիք: Եթե հնարավոր է ապրել չջեռուցվող կացարանում, պակաս սննդով, ապա շատ դժվար է ապրել սիրո և հարգանքի բացակայության պայմաններում: Եթե նույնիսկ ֆիզիկապես ապրում են, ապա դեռ հարց է, թե արդյո՞ք մարդ են մնում նման հանգամանքներում…

[1] Զգայելի – մարդու տեսողության, հոտառության և այլ զգայարանների կողմից ընկալվող:

Մարդուն ուսումնասիրող մտածողները խոսում են տարբեր պահանջմունքների մասին: Նրանք, մասնավորապես, նշում են, որ բացի ֆիզիկական, նյութական պահանջմունքներից, մարդն ունի նաև *պաշտպանվածության, անվտանգության, պատկանելության և սիրո, սեփական արժանապատվության գիտակցման և հարգանքի, ստեղծագործելու, ինքնադրսևորման և ինքնաիրականացման և այլ պահանջմունքներ:* Դրանք համարվում են ոչ նյութական պահանջմունքներ, թեպետ հաճախ իրականացման համար կարիք ունեն նյութական կրողի: Օրինակ՝ նվագելու պահանջմունքը բավարարելու համար երաժշտական գործիք է պետք, ծեփելու կամ նկարելու համար՝ համապատասխան նյութեր: Մարդուն իր պահհանջմունքները բավարարելու համար պետք են գալիս մի շարք իրեր, և հնարավոր չէ ժխտել իրերի նշանակությունը մարդու կյանքում: Իրերը շրջապատում են մարդուն ողջ կյանքի ընթացքում, անուղղակիորեն ցույց տալով մարդու ճաշակը, տրամադրվածությունը, բնավորության որոշ գծեր (թափթփվածություն, կոկիկություն, կարգապահություն, մաքրասիրություն և այլն), վերաբերմունքն իր ու այլ մարդկանց հանդեպ, ունեցվածքը:

- Օրինակ, եթե, մարդը մարդու վրա դանակ է պահում, դա մի կերպ է “խոսում” նրա մասին, իսկ եթե կռանում-վերցնում է դասարանի հատակին ընկած թուղթն ու նետում աղբաման, դա մի այլ կերպ է “խոսում” նրա մասին: Ի՞նչ եք կարծում, ի՞նչպես են “խոսում” Ձեզ շրջապատող իրերը Ձեր մասին:
- Մեկ այլ օրինակ. մարդն անընդհատ ցուցադրում է իր ունեցած թանկագին զարդերը, հեռախոսը, համակարգիչը և այլ իրեր: Ի՞նչ եք կարծում, դա ի՞նչպես է ¦խոսում§ նրա մասին:

Իրերի կարևորությունը հերքելն անիմաստ է, սակայն իրերից կախվածությունը պետք է լինի չափավոր: Իրն ընդամենը պահանջմունքը բավարարելու միջոց է, այլ ոչ թե նպատակ: Ու պետք է զգույշ լինել, որպեսզի նպատակն ու միջոցն իրենց տեղերը չփոխեն: Իրերի քանակը նույնպես պետք է խելամիտ լինի, քանի որ լիարժեք կյանք կարելի է վարել միայն ամենաանհրաժեշտ իրերի առկայության դեպքում, այնինչ շատ մարդիկ ձեռք են բերում ավելի շատ իրեր, քան իրենց է անհրաժեշտ ու հետո ստիպված են լինում հոգ տանել այդ բոլոր, երբեմն ոչ անհրաժեշտ իրերի մասին:

- Նայեք Ձեր շուրջը քննադատական հայացքով: Կա՞ն, արդյոք, ոչ անհրաժեշտ իրեր: Դրանք որքան ժամանակ են խլում իրենց խնամքի համար: Ինչպե՞ս կարելի կլիներ ծախսել այդ ժամանակը այլ կերպ:

Տարբեր դարաշրջաններում մարդիկ տարբեր նյութական պահանջմունքներ են ունեցել: Նախնադարում անհրաժեշտություն է եղել քարե կացինը, նոր ժամանակներում՝ շոգենավը, արդի մարդն իրեն չի պատկերացնում առանց բջջային հեռախոսի: Փոքր ինչ այլ է հոգևոր պահանջմունքների դեպքում, քանի որ բոլոր ժամանակներում էլ մարդը ձգտել է ինքնաիրականացման, հարգանքի ու սիրո, թեպետ, իհարկե, տարբեր դարաշրջաններում տարբեր կերպ է հասկացել այդ գաղափարները:

Մարդու հիմնական պահանջմունքների գիտակցման շնորհիվ են ձևակերպված *մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները*, որոնք կուսումնասիրեք իններորդ դասարանի հասարակագիտության դասընթացում:

Հարցեր մտորելու համար.

- Ի՞նչ է պահանջմունքը: Հնարավո՞ր է պահանջմունքներ չունենալ:
- Ի՞նչ է նյութական պահանջմունքը: Ի՞նչպես է այն կապված իրերի հետ:
- Ի՞նչ է ոչ նյութական պահանջմունքը: Ի՞նչպիսի ոչ նյութական պահանջմունքներ կարող եք նշել:
- Ի՞նչ կապ կա մարդու երկակի բնույթի և պահանջմունքների միջև:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Կարդացեք երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի հետևյալ հոդվածները և նշեք, թե ինչ պահանջմունքների բավարարմանն են դրանք ուղղված:

Հայաստանի Հանրապետության օրենքը երեխայի իրավունքների մասին

Գլուխ 2

Երեխայի հիմնական իրավունքները և դրանց երաշխիքները

Հոդված 5. *Երեխայի կյանքի իրավունքը*

Յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք:

Պետությունը և նրա համապատասխան մարմինները ստեղծում են անրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու և զարգանալու համար:

Հոդված 7. *Երեխայի առողջության պահպանման իրավունքը*

Յուրաքանչյուր երեխա ունի առողջության պահպանման ու ամրապնդման իրավունք: Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի անվճար օգտվելու հնարավորությունը, իրականացնում են երեխայի առողջության պահպանմանն ուղղված պետական նպատակային ծրագրեր:

Հոդված 8. *Երեխայի անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքը*

Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անրաժեշտ կենսապայմանների իրավունք:

Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները:

Հոդված 11. *Երեխայի կրթության իրավունքը*

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի կրթություն ստանալու, իր, ծնողի կամ այլ օրնական ներկայացուցչի համաձայնությամբ ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք:

Հոդված 18. *Մշակութային արժեքներին հաղորդակցվելու երեխայի իրավունքը*

Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք:

Յուրաքանչյուր երեխա ունի գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, մշակութային կյանքին մասնակցելու, իր ունակություններն ու հետաքրքրությունները դրսևորելու իրավունք:

Հոդված 19. *Երեխայի աշխատանքի իրավունքը*

Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքային հնարավորություններին, առողջական վիճակին ու ունակություններին համապատասխան մասնագիտություն ստանալու, օրենքով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք:

Հոդված 20. *Երեխայի հանգստի իրավունքը*

Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին ու միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:

ԾԱՆԻ՛Ր ԶՔԵԶ

Մտորե՛ք, թե անձամբ ինչի կարիքն ունեք առաջին հերթին, ապա երկրորդ հերթին և այդպես շարունակ: Այնուհետև ստորև առաջարկվող բրգաձև սխեմայում լրացրեք Ձեր պահանջմունքները վարից վեր ու ստացեք պահանջմունքների Ձեր անատական բուրգը: Համեմատե՛ք՝ նյութական պահանջմունքներն են գերակշռում, թե՝ ոչ նյութական:



- Ի՞նչ եք կարծում, Ձեր պահանջմունքներով Դուք նմա՞ն եք այլ մարդկանց, թե՝ ոչ: Ինչո՞ւ:

ԴԱՍ 4. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ. ԽՄԲԵՐ, ՇԵՐՏԵՐ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Դասի նպատակը

Սովորելով այս դասը՝ Դուք կամբողջականացնեք Ձեր պատկերացումները հասարակության սոցիալական կազմի մասին, կկարողանաք տարբերակել հասարակական փոքր ու մեծ խմբերը, նկարագրել այս կամ այն հասարակությունը կազմող սոցիալական շերտերն ու խավերը: Կվերլուծեք նաև “համայնք” հասկացությունը և կմտորեք Ձեր համայնքի խնդիրների մասին:

ԸՆԹԵՐՑԵ'Ք ՏԵՔՍՏԸ

> Մարդը ստեղծված է հասարակության մեջ ապրելու համար: Նա կլինի կիսատ ու անավարտ և կհակասի ինքն իրեն, եթե փորձի ապրել հասարակությունից մեկուսացած:
>
> **Յոհան Ֆիխտե**

¦**Հասարակություն§ բառով կարելի է կոչել մարդկանց համատեղ կենսագործունեության կամ համակեցության պատմական բոլոր ձևերի հանրագումարը:** Հասարակություն են և՛ աֆրիկյան տոհմա-ցեղային միությունները, և՛ հնագույն եգիպտական, հունական քաղաքակրթությունները, և՛ միջնադարյան քրիստոնեական համայնքները, և՛ ժամանակակից պետությունները, հասարակություն է նաև երկրագնդի ողջ բնակչությունն իր ամբողջության մեջ:

- Պատմության դասընթացից վերհիշեք, թե հասարակության ինչպիսի տեսակներ են ձեզ ծանոթ՝ սկսած նախնադարից առ այսօր:

Հասարակության սաղմնային ձևերը՝ հոտը, երամը, առկա են արդեն կենդանական աշխարհում. կենդանիները նույնպես միավորվում են իրենց նպատակներին համատեղ հասնելու համար: Բոլորս գիտենք, որ միայնակ շնագայլը անհամեմատ ավելի թույլ է որպես որսորդ, քան շնագայլերի ոհմակը, իսկ մեղուների փեթակը կամ մրջնանոցն իրենցից ներկայացնում են համատեղ բանելու ուշագրավ օրինակներ: Բայց, որքան էլ առաջին հայացքից դրանք նման թվան, մարդկային հասարակությունը, այնուամենայնիվ տարբերվում է կենդանական բոլոր միավորումներից:



- Ի՞նչ եք կարծում, մարդկային հասարակությունը ինչո՞վ է տարբերվում կենդանիների միավորումներից:

Այդ տարբերության հիմքերից մեկը իմաստասերները տեսնում են հասարակության բջիջը կազմող անհատ-մարդկանց մեջ: *Հասարակությունն անհատների սոսկ հավաքածու չէ, այլ համատեղ կենսագործունեություն, որտեղ անհատներն ունեն գիտակցված դերեր*: Հասարակությունը բաղկացած է անհատներից: Հին հույներն *անհատին* անվանում էին *ատոմ*, գտնելով, որ ատոմը գոյություն ունեցող ամեն ինչի հիմքն է: Թե՛ հայերեն ՝անհատ՝ բառը, թե՛ հունարեն ՝ատոմը՝ նշանակում են *անբաժանելի, անկիսելի*: Մարդկության ատոմներն անհատներն են, և հասկանալի է, որ չի կարող լինել հասարակություն՝ առանց անհատների: Յուրաքանչյուր անհատ, ունենալով իր առանձնահատկությունները, միաժամանակ կրում է մարդուն բնորոշ ընդհանուր հատկանիշներ: Մեզանից յուրաքանչյուրն ունի գիտակցելու, մտածելու, զգալու, երազելու և այլ հատկանիշներ: Եվ հենց նման ընդհանրություններն են մարդկանց համակեցության՝ միասին ապրելու, հիմք հանդիսանում:

Անատներն միավորվում են **փոքր և մեծ խմբերում**:

- Ենթադրենք, բարձրացել եք ավտոբուս ու մաս կազմել ավտոբուսում եղած հոծ բազմության: Ի՞նչ եք կարծում, դա խո՞ւմբ է: Ինչո՞ւ: Կամ ֆուտբոլային խաղի գնալու համար կանգնած եք հերթում: Արդյոք այն խո՞ւմբ է:

Խումբը *մարդկանց միավորում է, որտեղ վերջիններս որոշակի միասնական նպատակի հասնելու համար զբաղված են գործունեության ընդհանուր ձևով:* Օրինակ, Ձեր դասարանը խումբ է, քանի որ բոլորդ այնտեղ սովորում եք, հասունանում՝ այդ նպատակներին հասնելու համար հաղորդակցվելով միմյանց հետ: Խումբ է նաև ընտանիքը, որի մասին խոսք կլինի հաջորդ դասերին: Սրանք փոքր խմբեր են, քանի որ կազմված են մարդկանց այնպիսի քանակից, որոնք կարող են միմյանց հետ անմիջական համագործակցության մեջ լինել նպատակին հասնելու գործընթացում: Փոքր խմբերը ստեղծվում են որոշակի ժամանակամիջոցում

որոշակի նպատակների հասնելու համար, այնուհետև կարող են լուծարվել կամ վերածվել այլ խմբերի:

- Օրինակ՝ Ձեր դասարանը կլուծարվի հիմնական դպրոցի ավարտին, քանի որ աշակերտները կգնան ավագ դպրոց: Կամ կվերածվի այլ խմբի, եթե մնա նույն դպրոցում և ավագ դասարաններում ուսումը շարունակելու համար միավորվի մեկ այլ դասարանի հետ:

Իսկ մեծ խմբերը մարդկանց այնպիսի միավորումներ են, ըստ հոգեբանների, որոնց թիվն անցնում է 45-50 հոգուց: Այդպիսի խմբեր են, օրինակ, գործարանի կամ համալսարանի կոլեկտիվները, հասարակական կազմակերպությունները կամ կուսակցությունները, էթնիկական հանրությունները և այլն: Խմբերը կարող են լինել հատուկ կազմակերպված կամ պատահական: **Հատուկ կազմակերպված** խմբերը ձևավորվում են որոշակի հիմունքներով՝ որոշումների, կանոնադրության, հրահանգների և այլ պաշտոնական պայմանավորվածությունների հիման վրա: **Պատահական** խմբերը գոյանում են տարերայնորեն և արագությամբ կազմալուծվում են: Օրինակ՝ հրապարակում համերգ նայելու համար հավաքվում են բազմահազար հանդիսականներ, որոնք համերգի ժամանակ ընդհանրություն ունեցող մեծ խումբ են կազմում, իսկ համերգի ավարտից հետո բնականորեն ցրվում են: Այնինչ հատուկ կազմակերպված խմբի, օրինակ, հասարակական կազմակերպության անդամները շարունակում են մնալ խմբի անդամ մի շարք համերգներ ու միջոցառումներ անցկացնելուց հետո նույնպես:

Հասարակությունը միատարր ամբողջություն չէ, այն բաղկացած է տարբեր սոցիալական խմբերից: *Սոցիալական խմբեր են համարվում մարդկանց դասերը, շերտերը, խավերը:* Պատմության դասընթացից կհիշեք, որ միջնադարյան Եվրոպայում, օրինակ, կային ճորտեր, ազատ գյուղացիներ, հոգևորականներ և ֆեոդալներ, որոնք իրենց հերթին նույնպես բաժանված էին շերտերի, օրինակ՝ բարոններ, կոմսեր, դքսեր և այլն: Հին Հնդկաստանում սոցիալական խմբերը կոչվում էին վառնաներ, ընդ որում տարբեր վառնաների ներկայացուցիչների միջև չէին խրախուսվում ամուսնություններն ու ազգակցական կապերը (Տե՛ս լրացուցիչ ընթերցանության նյութը):

Այսօրվա հասարակությունում նույնպես կան տարբեր սոցիալական շերտեր. բանվորներ, արհեստավորներ, գործարարներ, մտավորականներ, արվեստագետներ և այլն: Այս տարբեր շերտերն ունեն կյանքի իրենց ռիթմը, իրենց վարք ու բարքը, իրենց ներսում կազմում են առանձին ավելի փոքր խմբեր: Օրինակ, գործարարներն ունեն իրենց միությունները, մտավորականներն՝ իրենց, արհեստավորները միավորվում են համքարությունների մեջ, աշխատավորները՝ արհեստակցական միությունների և այլն: Միշտ չէ, որ տարբեր շերտերի ներկայացուցիչներ կարողանում են խաղաղ համակեցության մեջ լինել, երբեմն նրանց միջև ծնունդ են առնում բախումներ: Այդ մասին խոսք կլինի հաջորդ դասերին:

- Մտորեք, թե ինչը կարող է բախումների պատճառ դառնալ: Բերեք մեկ-երկու օրինակ ժամանակակից կյանքից:

Անցյալի և արդի հասարակությունների տարբերություններից մեկը նրանում է, որ անցյալում շատ բարդ էր, իսկ երբեմն՝ համարյա անհնար սոցիալական մեկ շերտից մյուսին անցնելը: Նման անցումները բացառություն էին: Իսկ ժամանակակից հասարակության մեջ նման անցումները հնարավոր են, քանի որ շերտերի միջև

օրենքով ամրագրված խիստ անջրպետներ[1] չկան: Աշխատասեր ու հաջողակ ֆուտբոլիստը կարող է իր վաստակած գումարը հետագայում դնել գործի մեջ ու դառնալ ձեռներեց, գիտնականը կարող է հասարակության մեջ իր ունեցած հեղինակության շնորհիվ մտել քաղաքականություն, գործարարի սերունդները կարող են դառնալ արվեստագետներ և այլն: Սա չի նշանակում, իհարկե, որ ներկայումս սոցիալական անհավասարություն չկա, բայց այդ մասին կզրուցենք հաջորդ գլխում:

Մարդկանց միավորման հնագույն ձևերից է համայնքը: Մեր հեռավոր նախնիները սկզբում միավորվել են արյունակցական կապի հիման վրա՝ տոհմերով ու ցեղերով: Դրանց զուգահեռ նույն վայրում բնակվողները ձևավորել են նաև համայնքներ: **Համայնքին** *բնորոշ է ունեցվածքին համատեղ տիրելը և ամբողջական կամ մասնակի ինքնավարությունը*: Համայնքում առավել կարևոր է "մեկը բոլորի, բոլորը մեկի համար" սկզբունքը, քանի որ յուրաքանչյուր անդամի բարօրությունն անմիջականորեն կախված է ընդհանուրի բարօրությունից: Նոր դարաշրջանում Ֆրանսիայում համայնքները համարվում էին մարդկանց միավորելու ամենաարդարացի եղանակը, և հասարակությունը բարեփոխել ցանկացող շատ գործիչներ կոչ էին անում ստեղծել համայնքներ: Ներկայումս համայնքները վարչական-տարածքային միավորներ են թե՛ Ֆրանսիայում, թե՛ Հայաստանում: Ըստ ՀՀ Սահմանադրության մեր երկրի գյուղերն ու քաղաքները, իսկ Երևանում՝ թաղերը համայնքներ են: Սա նշանակում է, որ համայնքի բոլոր ներկայացուցիչների համար հպարտության և մտահոգության առարկաներն ընդհանուր են:

[1] Անջրպետ – անանցանելի խոչընդոտ, արգելք:

- Մտածեք, թե ինչ հանգամանքներ կան Ձեր համայնքում, որոնցով հպարտանում եք: Իսկ ի՞նչ չլուծված խնդիրներ կան: Ի՞նչ քայլեր կարելի է ձեռնարկել դրանք լուծելու համար:

Համայնքը կարող է լինել տարբեր մակարդակների. տեղական, մեկ երկրի մակարդակով, տարածաշրջանի մակարդակով և գլոբալ: **Գլոբալ համայնք** համարվում է ողջ երկրագնդի բնակչությունը, համայն մարդկությունը, որի ընդհանուր մտահոգության առարկան երկրագնդի էկոլոգիական վիճակն է: Տարբեր երկրների, սոցիալական տարբեր շերտերի ներկայացուցիչները հավասարապես մտահոգված են երկրագնդի բնապահպանական խնդիրներով, իսկ դա մերձեցնում է բոլորին ու օժտում ընդհանրության զգացումով:

Հարցեր մտորելու համար

- Ի՞նչ է հասարակությունը, ի՞նչով է նմանվում ու տարբերվում կենդանիների միավորումներից:
- Մարդկանց միավորումների ի՞նչ տեսակներ գիտեք, դրանցից ո՞րին կտաք նախապատվություն, ի՞նչու:
- Փողոցում հավաքված ամբոխը խո՞ւմբ է, թե՝ ոչ: Ինչո՞ւ:
- Հայոց պատմությունից մտաբերեք, թե ինչ սոցիալական շերտեր կային միջնադարյան հայ հասարակությունում: Հե՞շտ էր, արդյոք, անցումը մի շերտից մյուսին: Ինչո՞ւ:
- Ի՞նչ է համայնքը, ինչո՞ւ է այն համարվում միավորման արդարացի եղանակ:
- Գիտե՞ք, թե ովքեր են ղեկավարում Ձեր համայնքը, երբևէ շփվե՞լ եք նրանց հետ, դիմե՞լ եք նրանց որևէ հարցով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Կազմակերպեք էքսկուրսիա Ձեր համայնքի տեսարժան և հետաքրքիր վայրերով: Խնդրեք մեծահասակներին պատմել Ձեր համայնքի պատմությունը: Եթե համայնքում ունեք թանգարան, այցելեք:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ
Հասարակության շերտավորումը Հին Հնդկաստանում

Համաշխարհային պատմության դասընթացից, ինչ խոսք, ծանոթացել եք Հին աշխարհի երկրներին ու գիտեք, որ օրինակ, Եգիպտոսում կային փարավոններ, քրմեր, ազատներ ու ստրուկներ: Իսկ Հին Հնդկաստանում կային վառնաներ և յուրաքանչյուր մարդ ծննդյան օրվանից պատկանում էր այդ վառնաներից որևէ մեկին, ինչն էլ որոշում էր նրա իրավունքներն ու պարտականությունները, ընդանրապես՝ դերը, հասարակության մեջ:

Վառնաները *հասարակության այնպիսի շերտեր էին, որոնց միջև սահմանները հաստատագրված էին օրենքով, իսկ դրանք խախտելու համար*

նախատեսվում էին պատիժներ: Եվրոպացիները տասնվեցերորդ դարում նավարկելով Հնդկաստան ու տեսնելով նրանց հասարակության շերտավորումը օգտագործում են “**կաստա**” բառը, որը պորտուգալերեն նշանակում է “բնույթ, որակ”: Եվ չզարմանաք, եթե Հնդկաստանի մասին խոսելիս լսեք նաև “կաստաներ” բառը: Իրենք՝ հնդիկներն իրենց հասարակության համեմատաբար մեկուսացած շերտերն անվանում էին վառնա, որ նշանակում է “գույն”: Հնարավոր է, որ վառնաների ներկայացուցիչները միմյանցից տարբերվել են մաշկի գույնով. Հասարակության վերին շերտերը բաց գույնի մաշկ ունեին (երբեմն նրանց համարում են արիացիներ), իսկ ստորին շերտերի ներկայացուցիչները մուգ մաշկով տեղաբնիկներ էին: Բայց դա ընդամենը ենթադրություն է:



Հին Հնդկաստանի Սուրբ Գրքերից մեկում՝ **Ռիգվեդայում** հիշատակվում են չորս հիմնական վառնաներ: Առաջինը **բրահմանների** (քրմերի) վառնան է, երկրորդը՝ **քշատրիների** (ռազմիկների և կառավարիչների), երրորդը՝ **վայշիների** վառնան է (հողագործներ և արհեստավորներ) և, վերջապես, չորրորդ վառնային պատկանում են **շուդրաները** (ծառաները):

Առաջին երեք վառնաներին թույլատրվում էր ուսումնասիրել Սուրբ Գրքերը և մասնակցել կրոնական արարողություններին, իսկ չորրորդին՝ ոչ: Հին հնդիկները հավատում էին, որ բրահմանները ծնվել են մարդկանց առասպելական նախահայր Փուրուշայի (Մանուի) շուրթերից, և, հետևաբար, նրանց բնորոշ է սրբությունն ու ճշմարտացիությունը: Առաջին քշատրիները ծնվել են Փուրուշայի ձեռքերից, դրա համար նրանց բնորոշ է ուժը և ամրությունը: Երրորդ վառնայի ներկայացուցիչները ծնվել են նախահոր ազդրերից, ու նրանց են բաժին ընկել օգուտներն ու հարստությունը: Այնինչ շուդրաները առաջացել են Փուրուշա-Մանուի ոտնաթաթերից, որոնք հողի ու փոշու մեջ են, հետևաբար, շուդրաներին բաժին է ընկել խոնարհվելն ու ծառայելը:

Տարբեր վառնաների պատկանող մարդկանց ամուսնությունները խստիվ արգելվում էին: Յուրաքանչյուր վառնա ուներ իր ղեկավար ծերակույտը, որը կարող էր պատժել օրինախախտներին: Ամենադաժան պատիժը վառնայից վտարելն էր, քանի որ վտարվածները դառնում էին արհամարհված անձեռնամխելիներ:

ԾԱՆԻ՛Ր ԶՔԵԶ

Մտածե՛ք, թե հենց այս պահին ինչ խմբերի եք պատկանում. դասարան, ընտանիք, ակումբ և այլն ու լրացրե՛ք հետևյալ աղյուսակը:

Խումբ	Անդամների թիվը	Իմ դերը իմ գնահատմամբ (ղեկավարող, կարևոր, երկրորդական)	Կամավորական հիմունքներո՞վ է խումբը, թե՝ պարտադիր	Ինչպե՞ս եմ ինձ զգում այդ խմբում և ինչու

ԴԱՍ 5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Դասի նպատակը

Սովորելով այս դասը՝ դուք կհասկանաք հասարակական հարաբերությունների կարևորությունը մարդու կյանքում: Կտարբերակեք ընկերության տեսակները: Կմեկնաբանեք հասարակական ժամանակակից գործընթացները:

Ընտրի՛ր քեզ ընկեր: Դու չես կարող միայնակ երջանիկ լինել:

Պյութագորաս

Պատկերացրեք մի երեխա, որի մայրը ծնվելուց հետո հոգացել է միայն երեխայի ֆիզիոլոգիական պահանջմունքները: Այդ երեխան տանից դուրս չի եկել, չի շփվել որևէ մեկի հետ և արդեն 6 տարեկան է: Ձեր կարծիքով, ինչո՞վ կտարբերվի այդ երեխան սովորական 6 տարեկան երեխաներից:

Մարդը շատ բաների կարող է դիմանալ, բայց ոչ երբեք այլ մարդկանց բացակայությանը: Միայնակությունը մարդկային կյանքի ամենադաժան պատիժներից է: Եթե չլինեին մեզ շրջապատող մարդիկ, ապա մենք ինքներս մեզ չէինք ճանաչի: Այլ մարդիկ հայելիներ են, որոնց նայելով մենք ճանաչում ենք ինքներս մեզ: Օրինակ՝ երբ դուք ասում եք “Ես լավ աշակերտ եմ”, դա նշանակում է, որ դուք Ձեզ համեմատում եք այլ աշակերտների հետ: Նույնիսկ երբ դուք ասում եք “Ես”, դա արդեն նշանակում է, որ կան նաև այլ մարդիկ, որոնցից դուք Ձեզ առանձնացնում եք:

Կենդանիների մոտ նույնպես կան խմբավորումներ՝ հոտ, երամ, վտառ: Բայց մարդու առանձնահատկությունն այն է, որ մարդը գիտակցում է այդ խմբավորման անհրաժեշտությունը: Պարզապես անհատների կամ խմբերի առկայությունը դեռևս չի նշանակում հասարակության գոյության: Անհրաժեշտ են հարաբերություններ անհատների և խմբերի միջև: Հասարակությունը անհատների և խմբերի հարաբերությունների ամբողջություն է: Հարաբերությունը երկու կամ ավելի օբյեկտների միջև կապն է: Կան հարաբերությունների տարբեր դրսևորումներ:

Ստորև բերվում են հարաբերությունների մի քանի ձևեր.

- Գեղագիտական հարաբերություններ: Օրինակ՝այս շենքը շատ ավելի գեղեցիկ է, քան մյուսը:
- Աշխարհագրական հարաբերություններ: Օրինակ՝ Գյումրին Երևանից հյուսիս-արևմուտք է:
- Երկրաչափական հարաբերություններ: Օրինակ՝ երկու գծերն իրար զուգահեռ են:
- Տրամաբանական հարաբերություններ: Օրինակ՝ այս միտքը նախորդի հակառակն է:
- Հասարակական հարաբերություններ: Օրինակ՝ Անահիտը Սոնայի ընկերուհին է:

Հասարակական հարաբերությունների կարևորագույն դրսևորումներից է ընկերությունը:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հին հույն փիլիսոփա Արիստոտելը առանձնացնում է ընկերության երեք տեսակ՝ ընկերություն հիմնված օգուտի վրա, ընկերություն հիմնված հաճույքի վրա և

ընկերություն հիմնված բարիքի վրա, որն այլ կերպ նա անվանում է կատարյալ ընկերություն:

1. **Ընկերություն հիմնված օգուտի վրա:** Ընկերության այս տեսակը ամենաթույլն է, քանի որ մարդկանց օգտակարությունը կյանքի ընթացքում փոխվում է: Եթե այսօր որևէ մեկը օգտակար է ինձ համար, ապա վաղը հանգամանքների փոփոխության արդյունքում, կարող է այլևս օգտակար չլինել: Նման ընկերները շատ հաճախ չեն սիրում միմյանց, բայց միասին են, քանի որ ցանկանում են օգուտ քաղել միմյանցից: Օրինակ՝ հաճախ մարդիկ նման ընկերության միջոցով ցանկանում են կյանքում հաջողության հասնել, աշխատանք գտնել:
   - Ձեր կարծիքով, կարելի՞ է օգուտի վրա հիմնված ընկերությունը համարել իրական ընկերություն:

2. **Ընկերություն հիմնված հաճույքի վրա:** Ընկերության այս տեսակը հիմնված է դրական զգացողությունների վրա և շատ տարածված է հատկապես երեխաների շրջանում: Այս դեպքում մենք ընկերություն ենք անում այն մարդկանց հետ, ում հետ մեզ հաճելի է: Նման ընկերությունը կարող է ընդհատվել հենց փոխվեն միմյանց նկատմամբ եղած զգացողությունները:
   - Համաձա՞յն եք այն տեսակետի հետ, որ երեխաները շատ արագ են փոխում իրենց ընկերներին:
3. **Ընկերություն հիմնված բարիքի վրա:** Ընկերության այս տեսակի պարագայում մարդիկ պարզապես միմյանց լավն են ցանկանում: Նման դեպքում ընկերները

միմյանցից ոչ մի փոխհատուցում չեն ակնկալում: Նման ընկերությունը ավելի երկարակյաց է, բայց նաև դժվարությամբ է հաստատվում: Արիստոտելն ասում է, որ մենք չենք կարող նման ընկեր ունենալ, առանց նրա հետ երկար ժամանակ անցկացնելու: Ընկերության այս տեսակն Արիստոտելն անվանում է առաջնային ընկերություն, իսկ մյուս տեսակները՝ երկրորդային:

Ընկերությունը կարող է դրսևորվել որպես զգացողություն, որպես գործողություն և որպես հոգեվիճակ: Նշված երեք դրսևորումները բացատրենք կոնկրետ օրինակով: Պատկերացրեք, որ դուք ունեք ընկեր, որը փոխում է իր բնակավայրը: Դուք շատ լավ զգացողություններ ունեք նրա նկատմամբ և տխուր եք, որ նա մեկնում է: Բայց զգացողությունները բավարար չեն ընկերությունը պահպանելու համար: Դուք կարող եք հեռախոսի, էլեկտրոնային փոստի կամ սոցիալական ցանցերի միջոցով կապ պահպանել Ձեր ընկերոջ հետ: Այդ դեպքում դուք գործողություն եք կատարում: Բայց գալիս է ժամանակ, երբ դուք զբաղված եք և ժամանակ չեք գտնում այլևս նամակներ գրել: Այդ դեպքում ընկերությունը աստիճանաբար կորչում է: Բայց կա ընկերության մի դրսևորում, որի պարագայում կարևոր չէ, թե որտեղ է մեր ընկերը, որքան զբաղված ենք մենք: Մենք կարողանում ենք ժամանակ տրամադրել մեր ընկերոջ հետ կապերի պահպանման համար: Նման ընկերությունն, ըստ Արիստոտելի, արդեն հոգեվիճակ է:
Հասարակական հարաբերությունները անընդհատ գտնվում են փոփոխությունների և շարժման մեջ: Կյանքում հաջողությունների հասնելու համար շատ կարևոր է այդ փոփոխությունները հասկանալը ու դրանց համընթաց գնալը: Այդ առումով շատ կարևոր է հասկանալ ժամանակակից հասարակական գործընթացները:
Ներկայացնենք ժամանակակից մի քանի հասարակական գործընթացներ:
1. **Արագընթաց փոփոխություններ:** Եթե նախկինում փոփոխությունները տեղի էին ունենում դանդաղ, ապա այսօր դրանք շատ արագ են տեղի ունենում: Ամերիկացի մարդաբան Մարգարիտ Միդն ասում է. “Բոլոր փոփոխությունները այնքան դանդաղ էին ընթանում, որ պապիկները բռնելով իրենց նորածին թոռնիկների ձեռքը, նրանց համար չէին պատկերացնում այնպիսի ապագա, որը տարբեր կլինի իրենց անցյալից”: Իսկ այսօր հնարավոր չէ, որպեսզի Ձեր մանկությունը շատ նման լինի Ձեր տատիկների և պապիկների մանկությանը:
- Զրուցեք Ձեր տատիկների, պապիկների կամ տարեց ազգականների հետ և դուրս գրեք նմանություններ ու տարբերություններ Ձեր և իրենց մանկությունների միջև:

Հասարակական գործընթացների արագացման պատճառները տարբեր են: Դրանցից հատկապես կարևոր է տեխնիկական միջոցների աննախադեպ զարգացումը: Անընդհատ ստեղծվում են տեխնիկական նոր սարքեր, որոնք բերում են նորամուծություններ, պահանջում են յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ: Մի գիտնական հետաքրքիր ձևով ներկայացրել է մարդկության տեխնիկական զարգացման տեմպը:
- 1700 սերունդ առաջ ձևավորվեց մարդու լեզուն:
- Դրանից 300 սերունդ հետո ձևավորվեց գրավոր մշակույթը:
- 35 սերունդ հետո տպագիր մշակույթը:

Այնուհետև՝

- 1910թ՝ ստեղծվեց հեռագիրն ու լուսանկարը։
- 1925թ՝ հեռախոս և համր կինո։
- 1940թ՝ ռադիո և խոսող կինո։
- 1955թ՝ հեռուստատեսություն և զանգվածային լրատվամիջոցներ։
- 1970թ՝ հեռապատճեն։
- 1985թ՝ համակարգիչ։
- 2000թ՝ ինտերնետ։

Արագընթաց փոփոխությունների դարաշրջանում բացառիկ կարևորություն են ստանում գիտելիքներն ու հմտությունները, և դրանց անընդհատ թարմացումը։ Եթե նախկինում մարդը կարող էր իր բոլոր գիտելիքները տասնամյակներ շարունակ կիրառել, ապա այսօր դրանց մի զգալի հատվածը արագորեն հնանում է։ Ու եթե ուզում եք հաջողակ լինել, պետք է անընդհատ սովորեք։

2. **Մեռային անհավասարությունների հաղթահարում։** Նախկին դարաշրջաններում ֆիզիկական ուժը էական դեր էր խաղում հասարակությունում։ Քանի որ ի բնե ֆիզիկապես ավելի ուժեղ էր տղամարդը, ապա նա այդ ուժը վերածում էր նաև տնտեսական, սոցիալական, քաղաքական ուժի։ Արդյունքում, տղամարդը գերիշխող դեր ուներ հասարակությունում, իսկ կանայք չունեին հավասար հնարավորություններ և իրավունքներ։ Այսօր իրավիճակը փոխվում է։ Կանայք շատ լուրջ հաջողությունների են հասնում ուսման մեջ, աշխատանքում, ինչը հումանիզմի կարևոր դրսևորում է։

3. **Տարածական անհավասարության հաղթահարում։** Նախկինում շատ կարևոր էր, թե որտեղ է ծնվել մարդը։ Եթե նա ծնվել էր մեծ քաղաքում, ապա դա նրան տալիս էր զարգացման մեծ հնարավորություններ։ Եթե նա ծնվել էր հեռավոր գյուղում, ապա շատ հնարավորություններից զրկված էր։ Տեխնիկայի զարգացման արդյունքում այսօր աստիճանաբար հաղթահարվում է այդ անհավասարությունը։ Տեխնոլոգիապես զարգացած երկրներում հեռավոր շրջաններում ապրող մարդկանց համար բոլոր հնարավորությունները հավասարապես մատչելի են։ Մարդը կարող է ապրել կենտրոնից հեռու, բայց ստանալ որակյալ կրթություն, ընթերցել բոլոր թերթերը, պատվիրել ցանկացած գիրք, օգտվել ինտերնետից։

4. **Ավագ և երիտասարդ սերունդների փոխհարաբերության փոփոխություն։** Նախկինում կյանքը դանդաղ էր փոխվում։ Նման պայմաններում բացառիկ կարևորություն էր ստանում փորձը։ Քանի որ ավելի շատ փորձ ուներ ավագ սերունդը, ապա հենց վերջինս էլ ավելի ազդեցիկ դեր ուներ հասարակական կյանքում։ Ներկայումս տեխնիկայի ազդեցությամբ կյանքը արագ է փոխվում։ Միայն փորձը բավարար չէ հաջողության հասնելու համար, քանի որ փորձն այսօր արագ հնանում է։ Այսօր բազմաթիվ են իրավիճակները, երբ փոքրերն են մեծերին սովորեցնում։

- Հիշե՛ք իրավիճակներ, երբ մեծերին ինչ-որ բան եք սովորեցրել։

Կյանքի բազմաթիվ ոլորտներում այսօր նկատելի է երիտասարդացման միտում։ Սպորտի, գիտության, մշակույթի ասպարեզում մարդիկ այսօր հաջողությունների են հասնում շատ ավելի երիտասարդ տարիքում։

Հարցեր մտորելու համար

1. Արդյո՞ք մենք պատասխանատու ենք մեր ընկերների արարքների համար: Պատասխանը հիմնավորե՛ք:
2. Արդյո՞ք մենք պատասխանատու ենք մեր ընկերներին հետ պահելու սխալներից: Պատասխանը հիմնավորե՛ք:
3. Արդյո՞ք կարող ենք կենդանիները ընկերություն անել:
4. Արդյո՞ք կարող են մարդիկ ընկերություն անել կենդանիների հետ:
5. Կարո՞ղ են տարիքային տարբերություններ ունեցող մարդիկ ընկերություն անել:
6. Ինչո՞վ են տարբերվում ընկերական հարաբերությունները մարդկանց միջև առկա այլ հարաբերություններից:
7. Ասում են. "Իսկական ընկերոջը ճանաչում են ուրախության, հաջողության ժամանակ": Արդյոք համաձա՞յն եք այս տեսակետի հետ:

Առաջադրանք

Ընթերցե՛ք ստորև բերվող աղյուսակը և ընտրե՛ք համարժեք սյունակը:

Օրինակ	Ընկեր է	Ընկեր չէ	Չեմ կարող ասել	Հիմնավորում
Օտարականը, որ օգնում է քեզ, երբ դու կորցրել ես ճանապարհը				
Ձեր շունը				
Ձեր տարեկից				
հարևանը				
Ձեր թշնամու թշնամին				
Ձեր լավագույն դասընկերը				
Ձեր ծնողները կամ նրանցից մեկը				
Ձեր սիրելի ուսուցիչը				
Հայերին կարիքի ժամանակ օգնություն ցուցաբերած ազգը				
Այն մարդը, որի հետ շատ ժամանակ եք անցկացնում				

ԴԱՍ 6. ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դասի նպատակը

Սովորելով այս դասը՝ դուք կսահմանեք "հակամարտություն" (կոնֆլիկտ) հասկացությունը: Կիմանաք հակամարտության դրական և բացասական դրսևորումները: Կհասկանաք կոնֆլիկտային իրավիճակներում գործելու ձևերին: Կոնկրետ օրինակների վրա կհասկանաք համագործակցության կարևորությունը:

Ենթադրենք ես ունեմ մեկ խնձոր, դուք էլ ունեք մեկը: Փոխանակելուց հետո երկուսիս մոտ կմնա մեկ խնձոր: Եթե ես ունեմ մեկ գաղափար, դուք էլ ունեք մեկ գաղափար: Գաղափարների փոխանակումից հետո յուրաքանչյուրս կունենանք երկու գաղափար:

Բեռնարդ Շոու

Նախորդ դասերից դուք արդեն գիտեք, որ մարդիկ չեն կարող մեկուսացած ապրել: Մարդու կյանքը հնարավոր է միայն այլ մարդկանց հետ համատեղ: Այդ առումով մարդկանց համատեղ կյանքը, համակեցությունը այլընտրանք չունի: Բայց ակնհայտ է, որ յուրաքանչյուր մարդ, նման լինելով մյուսներին, նաև տարբերվում է իր բնավորությամբ, խառնվածքով, տեսակետներով: Եվ քանի որ ժամանակակից հասարակությունում մարդիկ ավելի ազատ են, ապա այդ տարբերությունները ավելի ակնհայտ են դառնում:

Ընթերցե՛ք ստորև բերվող տեսակետները և արտահայտեք Ձեր դիրքորոշում "Լիովին համաձայն եմ", "Համաձայն եմ", "Համաձայն չեմ", "Բացարձակապես համաձայն չեմ" տարբերակներից որևէ մեկով

1. Ֆիզիկական պատիժը պետք է կտրականապես արգելել:
2. 14 տարեկանից փոքր երեխաները չպետք է աշխատեն:
3. Մարդիկ պետք է ավելի շատ հարկեր վճարեն:
4. Կանայք չպետք է զբաղվեն քաղաքականությամբ:
5. Հասարակական կառույցներում ծխելը պետք է արգելել:

Տեսակետներն արտահայտելուց հետո կնկատեք, որ ոչ բոլոր հարցերի շուրջ են բոլորը համակարծիք: Նման տարաձայնությունները նշանակում են, որ մարդիկ տարբեր են մտածում: Այդ տարբերությունները երբեմն վերաճում են հակամարտությունների (կոնֆլիկտների):

Հակամարտություն (Կոնֆլիկտ)

Կոնֆլիկտը պայքար է, կռիվ, անհամաձայնություն, վեճ: Կոնֆլիկտը կարող է շատ թեթև դրսևորում ունենալ, ինչպես ասենք՝ անհամաձայնությունը, և շատ ընդարձակ դրսևորում՝ ինչպես պատերազմը: Կոնֆլիկտի առավել տարածված նկարագրություններից մեկը հետևյալն է. "կոնֆլիկտ կա այնտեղ, ուր կան անհամատեղելի գործողություններ": Անհամատեղելի գործողություններ կարող են կատարվել մարդու ներաշխարհում, երկու և ավելի մարդկանց, երկու և ավելի խմբերի միջև: "Կոնֆլիկտ" բառն առաջացել է լատիներեն "conflictus" տերմինից, որը թարգմանաբար նշանակում է "ուժով հարվածել":

Մեզանից յուրաքանչյուրը ինքնատիպ է: Մենք ունենք տարբեր կարիքներ, ցանկություններ, նպատակներ, որոնք էլ առաջ են բերում շահերի բախումներ: Հետևաբար, կոնֆլիկտները հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ մարդկանց կարիքները, ցանկությունները, նպատակները:

Բացասական և դրական կոնֆլիկտային խմբեր

Կոնֆլիկտները խմբերում կարող են լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Բացասական կոնֆլիկտային խմբերում կոնֆլիկտները սովորաբար ճնշվում են և անտեսվում: Ու երբ դրանք դառնում են անխուսափելի, ապա ունենում են քայքայիչ հետևանքներ: Դրական կոնֆլիկտային խմբերում կոնֆլիկտները խրախուսվում են և լուծվում կառուցողական եղանակով:

Բացասական և դրական կոնֆլիկտային խմբերի համեմատության աղյուսակ

Բացասական կոնֆլիկտային խմբեր	**Դրական կոնֆլիկտային խմբեր**
Կոնֆլիկտը համարում են գլխացավանք: Խուսափում են կոնֆլիկտներից, ճնշում են դրանք: Հավատում են, որ կոնֆլիկտը միայն բացասական է: Ոչ մի արժեք չեն տեսնում կոնֆլիկտի մեջ: Կոնֆլիկտներում պետք է հաղթել:	Կոնֆլիկտը համարում են խնդիրներ լուծելու միջոց: Խրախուսում են կոնֆլիկտները: Հավատում են, որ կոնֆլիկտները շատ կառուցողական դեր ունեն: Կոնֆլիկտների մեջ շատ արժեքներ են տեսնում: Կոնֆլիկտները պետք է լուծել:

Քայքայիչ և կառուցողական կոնֆլիկտներ

Ճգնաժամի չինական խորհրդանիշը վտանգի և հնարավորության համադրում է: Այդ երկակիությունը բնորոշ է նաև կոնֆլիկտներին: Կոնֆլիկտները կարող են ունենալ ինչպես քայքայիչ, այնպես էլ կառուցողական հետևանքներ: Քայքայիչ

կոնֆլիկտների արդյունքը թշնամանքն է, չարությունը, իսկ երբեմն՝ բռնությունը: Նման կոնֆլիկտները ցավ ու վիշտ են պատճառում: Քայքայիչ բնույթ ունեցող կոնֆլիկտները բացասաբար են ազդում անհատների, խմբերի վրա:

Սակայն կոնֆլիկտները կարող են նաև դրական արդյունքների հանգեցնել: Կոնֆլիկտները կարող են դառնալ առանցքային խնդիրներ լուծելու միջոցներ: Կոնֆլիկտները կարող են հուշել, թե ինչ փոփոխությունների կարիք կա: Դրանք նաև ինքնաճանաչողության, սեփական արժեքները հստակեցնելու միջոցներ են: Կոնֆլիկտային իրավիճակները մեզ հնարավորություն են տալիս պարզել, ինչն է մեզ համար առաջնային, ինչը՝ երկրորդական: Նույն տրամաբանությամբ կոնֆլիկտները նաև ուրիշ մարդկանց ճանաչելու միջոցներ են: Կոնֆլիկտների մեջ ներքաշվելը կարող է զարգացման խթան լինել: Դրանք կարող են օգնել մարդուն նոր նպատակների ձգտելու, նոր նախաձեռնություններ հանդես բերելու հարցերում:

Այսպիսով, կոնֆլիկտներն ինքնին ոչ դրական են, ոչ էլ բացասական: Դրանք այդպիսին են դառնում մարդկանց վերաբերմունքի արդյունքում:

Կոնֆլիկտային իրավիճակներում գործելու 5 հիմնական մոտեցումներ (ռազմավարություններ) կան:

1. ԲՈՒ (Խնդիր լուծող): Կոնֆլիկտային իրավիճակներում այս ռազմավարությամբ գործող մարդիկ մեծապես կարևորում են իրենց նպատակները և հարաբերությունները: Երբ նպատակներն ու հարաբերությունները կարևոր են, մարդը հակված է կոնֆլիկտին վերաբերվել որպես խնդրի, որը պետք է լուծել:
2. ԱՐՋ (Մեղմացնող): Նման գործելակերպ դրսևորող մարդկանց համար հարաբերությունների պահպանումը առաջնային է, իսկ նպատակներին հասնելը՝ երկրորդական: Նման վարվելակերպի դեպքում մարդիկ հրաժարվում են իրենց նպատակներից՝ հանուն հարաբերությունների պահպանման: Երբ մտածում եք, որ ուրիշի հնարավորություններն ավելի մեծ են, ապա զիջում եք:
3. ՇՆԱՁՈՒԿ (Հաղթանակ-պարտություն պարտադրող): Ձնաձկները փորձում են պարտադրել իրենց ընդդիմախոսներին զիջել: Այս դեպքում նպատակը շատ ավելի կարևոր է համարվում, քան հարաբերությունների պահպանումը: Պայքարը միայն հաղթանակի համար է:
4. ԱՂՎԵՍ (Փոխզիջման գնացող): Աղվեսների համար նպատակներն ու հարաբերությունների պահպանումը չափավոր կարևորություն ունեն: Նրանք կարող են զիջել նպատակների մի մասը, ինչ-որ չափով վնասել հարաբերությունները՝ լուծման հասնելու համար:
5. ԿՐԻԱ (Նահանջող): Կրիաները փակվում են իրենց վահանակի մեջ կոնֆլիկտից խուսափելու համար: Այս դեպքում ոչ նպատակներն են կարևոր, ոչ էլ հարաբերությունների պահպանումը:

Համագործակցություն

Մարդկային համակեցության կարևորագույն պահանջներից մեկը համագործակցությունն է: Այն մարդիկ, ովքեր կարողանում են համագործակցել այլ մարդկանց հետ, մշտապես հասնում են հաջողության:

Ընթերցե՛ք հետևյալ հին չինական պատմությունը

Մի ծերունի իմաստունին հարցնում է, թե ինչ տարբերություն կա դրախտի և դժոխքի միջև: Իմաստունը ծերունուն ուղեկցում է մի տուն, ուր կան բազմաթիվ սենյակներ:

Սենյակներից մեկի դուռը բացելուց հետո, ծերունին ականատես է լինում հետևյալ տեսարանին: Սենյակի կենտրոնում կա սննդով լի մեծ կաթսա: Բոլոր մարդիկ դժբախտ են ու սոված: Նրանցից յուրաքանչյուրն ունի շատ երկար գդալ, որը կապված է ձեռքին: Երբ փորձում է երկար գդալով ճաշը վերցնել, չի կարողանում մոտեցնել բերանին: Արդյունքում՝ բոլոր սոված են: Ըստ իմաստունի, դա դժոխքն է:

Հարևան սենյակի դուռը բացելուց հետո ծերունին տեսնում է, որ սենյակի կենտրոնում դրված է նույն կաթսան, բոլորն ունեն ձեռքին կապված նույն գդալները, բայց բոլորը կուշտ են ու երջանիկ:

Շարունակե՛ք պատմությունը, նշելով, թե ինչո՞վ էր տարբեր այս սենյակում տիրող իրավիճակը, որն ըստ իմաստունի՝ դրախտն էր:

Մեկնաբանե՛ք ստորև բերվող նկարը



Այսպիսով՝ կոնֆլիկտներն ու համագործակցությունը հասարակական կյանքում անխուսափելի են: Դրանք համարվում են մարդկային համակեցության պարտադիր պայմանները: Կոնֆլիկտներն օգնում են, որպեսզի մարդիկ տեսնեն առկա խնդիրները և փորձեն լուծել դրանք: Նման դեպքերում շատ հնարավոր է, որ ի վերջո կոնֆլիկտող կողմերը դառնան համագործակցողներ:

Հարցեր մտորելու համար

1. Որո՞նք են կոնֆլիկտի պատճառները:
2. Ինչպե՞ս եք Ձեզ դրսևորում կոնֆլիկտային իրավիճակներում:
3. Ինչպիսի՞ն կլիներ մեր հասարակությունը, եթե կոնֆլիկտներ չլինեին:
4. Մարդկային բնավորության ո՞ր գծերն են նպաստում կոնֆլիկտների առաջացմանը:
5. Ձեր կամ Ձեր շրջապատի մարդկանց կյանքից հիշեք մեկ դեպք, երբ կոնֆլիկտն ավարտվել է համագործակցությամբ:
6. Որո՞նք են համագործակցության առավելությունները:
7. Կարելի է ասե՞լ, որ չհամագործակցող մարդը վատ մարդ է:

8. Արդյոք ճիշտ է մարդուն ստիպել, որպեսզի համագործակցի։
9. Արդյոք միշտ ճիշտ է համագործակցելը։
10. Մեկնաբանեք “Մեկ փչացած խնձորը կարող է փչացնել մի ամբողջ դույլ խնձորներ” արտահայտությունը։ Արդյոք, այն կապ ունի համագործակցության հետ։

ԴԱՍ 7. ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Դասի նպատակը

Սովորելով այս դասը՝ դուք կսահմանեք "ինքնություն" հասկացությունը: Կկարողանաք բացատրել "կարծրատիպ" հասկացությունը: Կիմանաք մշակույթների հիմնական տարբերակիչ հատկանիշների մասին:

Յուրաքանչյուր մշակույթ ունի խորհրդավոր լեզու, որը հասկանալի է
միայն այդ մշակույթին պատկանող մարդուն
Օսվալդ Շպենգլեր

Կյանքում հաճախակի մենք հայտնվում ենք իրավիճակներում, երբ պետք է ընտրություն կատարենք: Ի՞նչ անել, ի՞նչ չանել, ո՞րն է ճիշտ, ո՞րը՝ սխալ: Նման հարցերին հեշտ չէ պատասխանել, քանի որ դրանք ոչ թե պարզապես արարքներ են, այլ ուղղակիորեն հանգում են՝ "ով եմ ես" հարցին:

Մեր ինքնությունը պայմանավորված է մի քանի հանգամանքով: Օրինակ՝

- Կյանքում մեր ունեցած դերերով (որդի-դուստր, մայր-հայր, աշակերտ, իրավաբան, ուսուցիչ, ընկեր, երաժշտասեր, մարզասեր):
- Մեր ծննդավայրով և բնակավայրով (երկիրը, մարզը, քաղաքը, գյուղը, թաղամասը):
- Ազգային, ռասսայական, կրոնական պատկանելությամբ:
- Սեռով:
- Ֆիզիկական հատկանիշներով (աչքերի և մազերի գույնը, քաշը, հասակը):

Այսպիսով՝ մեր ինքնության վրա ազդում են այնպիսի գործոններ, որոնք **մեզանից կախված չեն** (ազգությունը, սեռը, աչքերի գույնը, ծննդավայրը) և այնպիսիները, որոնք **մենք ենք ընտրում** (մասնագիտությունը, քաղաքական պատկանելությունը):

Կարևոր է նաև խմբային ինքնությունը: Դա մեզ պատկանելության, ապահովության, պաշտպանվածության զգացողություն է տալիս: Խմբային ինքնությունը մեզ հնարավորություն է տալիս լինել ուժեղ և հաճելի զգացողություն ունենալ:
Երբ մենք մեծամասնության մեջ ենք մեր խմբային ինքությունը շատ կարևոր չէ: Այն կարևորվում է, երբ մենք փոքրամասնության մեջ ենք: Օրինակ՝ երբ մենք Հայաստանում ենք, հայ լինելը մեզ համար ամեն պահի կարևոր չէ: Մինչդեռ, եթե մենք արտերկրում ենք, ապա հայ ազգին պատկանելու հանգամանքը դառնում է առաջնային:

1. Ի՞նչ տարբերություն, եթե դուք լինեք ընտանիքի կրտսեր երեխան կամ ավագ երեխան:
2. Եթե դուք փոխեք Ձեր դպրոցը, արդյո՞ք դուք կզգաք, որ դուք այլ մարդ եք:
3. Եթե դուք այլ ընտանիքում ծնված լինեիք, արդյո՞ք դուք այլ կլինեիք:
4. Եթե դուք աջլիկ եք և վաղվանից դառնաք ձախլիկ, արդյո՞ք դուք այլ մարդ կլինեք:

5. Ձեր կարծիքով, լսողությունը կամ տեսողությունը կորցնելուց հետո մարդը դառնո՞ւմ է այլ մարդ:

Շատ հաճախ ինքնության ընկալմանը խոչընդոտում են կարծրատիպերը: Կարծրատիպը մարդու կամ մարդկանց խմբի մասին ընդհանրացված կարծիք է: Մենք կարծրատիպեր ենք ստեղծում այն ժամանակ, երբ չենք ուզում կամ չենք կարողանում ամբողջական տեղեկություններ հավաքել մարդկանց կամ իրավիճակների մասին արդարացի գնահատականներ տալու համար: Մարդու կամ խմբի մասին դատողությունները, որոնք արվում են կարծրատիպերի հիման վրա, կոչվում են նախապաշարմունքներ:

Կարծրատիպերը լինում են դրական կամ բացասական: Օրինակ՝ "Գյումրեցիները կատակասեր են" դատողությունը դրական կարծրատիպ է, իսկ "Կանայք վատ առաջնորդներ են" դատողությունը բացասական կարծրատիպ է:

Փաստորեն, կարծրատիպերը ունեն նաև դրական նշանակություն, ինչն անվանում են "ընդհանրացումներ": Դրանք երբեմն օգնում են իրականության մասին մեր պատկերացումները համակարգելու հարցում: Շատ դժվար է ամեն ինչի մասին սեփական կարծիք ձևավորելը: Հետևաբար, որոշ հարցերում մարդն ապավինում է արդեն գոյություն ունեցող տեսակետներին և թերի տեղեկություններին: Մյուս կողմից, շատ հաճախ կարծրատիպերը բացասական դեր ունեն, քանի որ մարդկանց ու խմբերի մասին մշտապես ոչ-ճիշտ պատկերացումներ են, որոնց մենք ապավինում ենք:

Իրավիճակ

Պատկերացրեք մի իրավիճակ, երբ Դուք մի քանի օր պետք է ճամփորդեք գնացքով: Ստորև նշվող որ ուղևորներին հետ կուզեիք ճամփորդել նույն սենյակում:

- գեր բանկիր
- իտալացի երաժշտասեր, որն ալկոհոլիկ է
- սևամորթ աֆրիկացի

- բանտից նոր դուրս եկած գնչու
- շատ աղքատ փախստական
- զինված ոստիկան
- երիտասարդ կին, որը խոսում է միայն իսպաներեն
- մտավոր հետամնաց մի երիտասարդ:

Պատասխանե՛ք հետևյալ հարցերին

1. Ի՞նչ չափանիշներով ընտրություն կատարեցիք:
2. Արդյո՞ք խումբը կարողացավ համաձայնության գալ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:
3. Ի՞նչ կարծրատիպեր ազդեցին Ձեր որոշման վրա:
4. Ի՞նչ կզգայիք, եթե որևէ մեկը չուզենար Ձեզ հետ ճամփորդել:

Ի՞նչ է մշակույթը

Երբ մենք լսում ենք "մշակույթ" բառը առաջին հերթին պատկերացնում ենք՝ թատրոն, կինո, գիրք, երաժշտություն: Բայց մշակույթն ավելին է, քան վերոնշյալները: Մշակույթի մեջ ներառվում են նաև.

- Խմբի ընկալումները լավի ու վատի մասին
- կին-տղամարդ հարաբերությունները
- ավանդույթների բովանդակությունը
- լեզուն
- կենցաղի կանոնները
- տեղեկությունների փոխանակման եղանակները, հաղորդակցությունը
- արձագանքն այլ մշակույթներին
- կրոնի դերը հասարակության կյանքում:

Մշակույթ բառն առաջացել է լատիներեն cultura տերմինից, որը սկզբնական շրջանում օգտագործվում էր հողի մշակման իմաստով: Առ այսօր մենք օգտագործում ենք "գյուղատնտեսական կուլտուրաներ" արտահայտությունը: Հետագայում, մշակույթ բառն օգտագործվեց հոգու մշակում իմաստով: Մշակույթը

ստեղծում են մարդիկ։ Մշակույթը “երկրորդ բնությունն է”, որն ի տարբերություն առաջին բնության, մարդաստեղծ է։
Մշակույթը կարելի է համեմատել սառցաբեկորի հետ։ Այն ունի երևացող մաս (օրինակ՝ նկարներ, եկեղեցիներ, ծեսեր, գրքեր), ինչպես նաև առաջին հայացքից չերևացող մասեր՝ մտածողություն, արժեքներ, ճաշակ, որոնց արդյունքում ստեղծվել են մշակույթի կոնկրետ նմուշները։ Մշակույթի երևացող, կոնկրետ դրսևորումների մասին դուք սովորել եք պատմության դասընթացում։
Այս դասում կխոսենք մշակույթի ավելի խորքային դրսևորումների մասին։ Մի շարք հայտնի մշակութաբաններ[1] առանձնացնում են մշակույթի 5 ուղղություններ, որոնցով տարբերվում են մշակույթները։ Դիտարկենք դրանցից յուրաքանչյուրը։

1. **Որոշումների կայացում։** Յուրաքանչյուր մշակույթի կարևորագույն ցուցիչներից մեկն այն է, թե ինչպես է բաշխված իշխանությունը անհատների, խմբերի և տարբեր հաստատությունների միջև։ Ովքեր են կայացնում որոշումներ՝ անհատները, թե՞՝ խմբերը։ Կան մշակույթներ, որոնցում առանձին անհատները շատ ավելի ազդեցիկ են, քան մարդկանց խմբերը։ Կան նաև մշակույթներ, որտեղ անհատների դերը շատ փոքր է։ Ավելի ուժեղ են մարդկանց խմբերը կամ գործող կանոնները։
2. **Մարդկանց դիրքորոշումը անորոշ վիճակների նկատմամբ։** Կան մշակույթներ, որոնք նախընտրում են կայունությունը և խուսափում են փոփոխություններից, քանի որ դրանք լի են անորոշություններով և վտանգներով։ Պատկերացրեք, դուք սովորել եք որոշակի ապրելակերպի և որոշում եք այն փոխել։ Այս դեպքում Ձեզ համար բազմաթիվ անորոշություններ են առաջանում։ Մյուս կողմից, փոփոխությունները հնարավորություն են պարունակում բարելավել իրավիճակը, կյանքը դարձնել առավել հետաքրքիր։ Այսպիսով՝ կան մշակույթներ, որոնք խրախուսում են փոփոխությունները, ռիսկի դիմելը, կան նաև մշակույթներ, որոնցում մարդիկ վախենում են փոփոխություններից և գերադասում են ապրել այնպիսի պայմաններում, որոնց իրենք արդեն հարմարվել են, նույնիսկ եթե այդ պայմանները բարենապաստ չեն։
3. **Անհատապաշտություն, թե՞ կոլեկտիվիզմ։** Կան մշակույթներ, որոնցում կարևորվում է մարդու “Ես”-ը, անհատի նախընտրություններն ու ցանկությունները։ Մշակույթի այլ համակարգում ավելի կարևորվում է կոլեկտիվի, “մենքի” դերը։
4. **Կին-տղամարդ։** Մշակույթները համեմատման մյուս չափանիշը կին-տղամարդ հարաբերություններն են։ Կան մշակույթներ, որոնցում տղամարդու դերը գերակա է։ Տվյալ հասարակություններում կանայք ակտիվորեն ներգրավված չեն աշխատաշուկայում, չեն զբաղեցնում բարձր պաշտոններ։ Մշակույթների մյուս խմբում կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ և հնարավորություններ։ Չկան սահմանափակումներ, որոնց պատճառը սեռային տարբերություններն են։

[1] Մշակութաբանները մշակութային խնդիրներ ուսումնասիրող գիտնականներն են։

5. **Ժամանակային կողմնորոշում:** Մշակույթները նաև համեմատվում են ըստ այն գործոնի, թե որոշումներ կայացնելիս որքանով են հաշվի առնում անցյալի փորձը, ավանդույթները: Կան մշակույթներ, որոնց համար ավելի կարևոր է ավանդույթների պահպանումը: Այդ մշակույթներում մարդիկ որոշումներ կայացնելիս հաշվի են առնում այն հանգամանքը, թե տվյալ իրավիճակում ինչպես կվարվեր իր հայրը կամ մայրը: Մյուս տարբերակն էլ այն է, որ որոշումներ կայացնելիս հաշվի է առնվում, թե որքանով է այդ որոշումը համապատասխանում ներկայի պահանջներին կամ կարևոր ապագայի տեսանկյունից:

Չի կարելի է ասել, որ բոլոր մշակույթները պարտադիր վերոնշյալ բևեռներից որևէ մեկում են: Բայց վերոնշյալ հինգ ուղղությունները մշակութային տարբերությունները գնահատելու կարևոր գործիքներ են:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ընթերցե՛ք ստորև բերվող աղյուսակը և նշեք Ձեզ համար նախընտրելի տարբերակը և հիմնավորեք այն:

	Բոլորը	Մեծ մասը	Շատերը	Որոշները	Քչերը	Չգիտեմ
Լռակյաց մարդիկ ամաչկոտ են:						
Աղքատ մարդիկ ծույլ են:						
Քաղաքականությամբ զբաղվող մարդիկ ազնիվ չեն:						
Հայերը աշխատասեր են:						
Բարձրահասակ մարդիկ լավ բասկետբոլիստներ են:						

ԴԱՍ 8. ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ԱԶԳ

Դասի նպատակը

Սովորելով այս դասը՝ դուք կսահմանեք ընտանիք հասկացությունը, կտարբերակեք ընտանիքի տեսակները: Կհասկանաք ազգի ձևավորման դինամիկան, կարժևորեք ազգայինի և համամարդկային դերը:

Չի կարելի միաժամանակ վատ մարդ,
բայց և այնպես լավ Հայ լինել:
Գարեգին Նժդեհ

Ընտանիքը մտերիմ մարդկանց խումբ է, որոնք միմյանց հետ կապված են ամուսնության ակտով, ծնունդով կամ որդեգրմամբ և ապրում են միասին: Ընտանիքը նաև հասարակական խումբ է, որը, բացի համատեղ բնակությունից, բնութագրվում է փոխադարձ սիրով, խնամքով ու հարգանքով, համատեղ տնտեսական համագործակցությամբ և վերարտադրությամբ՝ ներառելով տարբեր սեռերին պատկանող ծնողների և մեկ կամ ավելի երեխաների: Սովորաբար ծնողների միջև առկա են օրենսդրական կամ սոցիալապես համաձայնեցված հարաբերություններ, որոնց համաձայն նրանք վարում են համատեղ կյանք: Այդ հարաբերությունների հավաք անունն է ամուսնություն: Հայերի համար ընտանիքը համարվում է հասարակության հիմնական միավորը, կարևորագույն օղակը և վերարտադրության առանցքային միջավայրը, որը հիմնված է արյունակցական կապի վրա: Շատ երկրներում ընտանիքը ճանաչվում է միայն օրենսդրությամբ կամ նորմատիվ փաստաթղթերի գրանցումից հետո: Բազմաթիվ ընտանիքներում առկա է ծնողներից միայն մեկը՝ ծնողներից մյուսի կորստի կամ ամուսնալուծության հետևանքով: Լինում են նաև միայնակ մայրով ընտանիքներ: Որոշ ընտանիքներում ծնողները որդեգրում են երեխաների՝ նրանց համար ապահովելով կենսագործունեության ավելի լավ պայմաններ:

Մասնագետներն առանձնացնում են ընտանիքի երկու տեսակ՝ միջուկային և ընդլայնված: Միջուկային ընտանիքը համարվում է ամուսնության փաստի հիման վրա ստեղծված ընտանիքը, որի մեջ մտնում են ծնողները և երեխաները: Ընդլայնված

ընտանիքը հիմնված է արյունակցական կապի վրա և ներառում է համատեղ բնակվող անձանց՝ տատիկ, պապիկ, ծնողներ, երեխաներ, նույնիսկ հորեղբայրներ, հորաքույրներ և այլն: Հայերը սովորաբար ընտանիք ասելով հակված են դրա ընդլայնված սահմանմանը: Ընտանիքի մյուս առանձնահատկությունը վերաբերում է ընտանիքում ծնողների դերերին և երեխա-ծնող հարաբերություններին:

Ավանդական ընտանիքներում տղամարդուն վերագրվում են ընտանիքի կառավարման հիմնական գործառույթները՝ աշխատանք և գումար վաստակելու հիմնական աղբյուր, հիմնական որոշումների միանձնյա կայացում, խրախուսանքների և պատիժների համակարգի կիրառում, իսկ կնոջը վերագրվում են բնակատեղի կառավարման հիմնական գործառույթները, ինչպես նաև երեխաների դաստիարակությունը և կրթության վերահսկողությունը: Երեխաներից ակնկալվում է հնազանդվել ծնողներին ցուցաբերել հարգանք մեծերի նկատմամբ: Ծնողները հոգ են տանում երեխաների անվտանգության համար նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք կարողանում են տնօրինել իրենց կյանքը, այսինքն՝ առկա է մեծերից խիստ կախվածության զգացողության:

Լիբերալ ընտանիքներում տղամարդու և կնոջ գործառույթների տարանջատումը աննշան է. այն առավելապես հավասարության սկզբունքի վրա է հիմնված: Օրինակ՝ կնոջ կողմից ավտոմեքենա վարելն ընկալվում է սովորական և անհրաժեշտ երևույթ: Երեխաներին վերաբերվում են առավելապես հավասարը հավասարի սկզբունքով, նրանց թույլատրված է նաև հակադրվել ծնողների կարծիքներին և գործողություններին: Կրթությունը դիտարկվում է որպես սեփական կյանքը վերահսկելու միջոց: Հասուն երեխաները կարևոր որոշումներ կայացնելիս ծնողների թույլտվության կարիքը չունեն. նրանք անկախ են:

Ընտանիքը բացառիկ դեր ունի յուրաքանչյուր մարդու կյանքում: Այն ապահովում է զգացմունքային և գործնական աջակցություն յուրաքանչյուր մարդու համար: Ընտանիքն է ապահովում այնպիսի կարևոր բաներ, ինչպիսիք են՝ կացարանը, սնունդը, հագուստը, սերը, հոգատարությունը, ջերմությունը:

Ազգ

Հին ժամանակներում մարդիկ ապրում էին փոքր խմբերով: Այդ խմբերը չունեին բնակության մշտական տարածք: Նրանք շարունակաբար տեղաշարժվում էին: Այդ խմբերը կոչվում էին նախնադարյան հոտեր: Աստիճանաբար մարդկանց կապերն ու հարաբերությունները կայունացան: Յուրաքանչյուր խումբ ուներ իր տարածքը,

զբաղմունքը, հավատալիքները, տարբերակիչ գծերը: Մնացած խմբերը համարվում էին թշնամիներ: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հնում խմբերի միջև անընդհատ զինված բախումներ էին տեղի ունենում: Այդ խմբերը կոչվում էին տոհմական համայնք: Հաջորդ աստիճանը ցեղն էր, որը մի քանի տոհմերի միավորում էր: Յուրաքանչյուր ցեղ ուներ իր ծագման մասին առասպել, որը շեշտում էր այդ խմբի տարբերությունը մյուսներից:
Պետությունների առաջացումից հետո աստիճանաբար ցեղերն աստիճանաբար վերածվեցին ազգույթի: Ազգույթն ավելի մարդկանց ավելի խոշոր միավորում է, որին միավորում են լեզուն, ընդհանուր տարածքը, տնտեսական և մշակութային կապերը: Այդուհանդերձ, ազգույթներն ապրում էին փակ և յուրաքանչյուրը ստեղծում էր այնքան, որքան անհրաժեշտ է սեփական գոյության համար: Աստիճանաբար, ազգույթները վերաճեցին ազգերի: Ի տարբերություն, ազգույթի, ազգը մարդկանց առավել կայուն խումբ է: Ազգերը միմյանցից տարբերվում են նրանով, թե ինչ ներդրում են ունեցել մարդկության զարգացման գործում:

- ***Բերե՛ք օրինակներ, որոնք Ձեզ առանձնակի հպարտություն են պարգևում որպես հայ:***

Ազգային պատկանելությունը պարզապես ծագումնաբանություն ընկալելը ճիշտ չէ: Այն կարևոր է որպես գիտակցված երևույթ: Հաճախ օգտագործվում է ազգային ինքնագիտակցություն հասկացությունը: Ազգային ինքնագիտակցություն ասելով հասկանում ենք որոշակի մնայուն արժեքներ, ավանդույթներ, որոնք միավորում են տվյալ ազգին: Ազգը մի մեծ ընտանիք է, որը միավորում է իր բոլոր որդիներին և դուստրերին:

Ազգայինը և համամարդկայինը

Ժամանակակից աշխարհում հաշվվում է մոտ 200 պետություն, հազարավոր ժողովուրդներ: Մարդկային սեռի գոյության ընթացքում փոխվել է մոտ 1000 սերունդ (եթե մարդու կյանքի տևողությունը հաշվենք 60 տարի): Մարդկանց հսկայածավալ բազմության մեջ չկա մեկը, որ նման լինի մյուսին: Մարդկանց միջև գոյություն ունեն ոչ միայն անհատական, այլև խմբային տարբերություններ՝ ընտանեկան, սեռային, տարիքային, մասնագիտական, ազգային և այլն: Նույնը վերաբերվում է նաև մարդկանց հանրության ավելի մեծ ձևին՝ ազգին: Յուրաքանչյուր ազգ ստեղծում է իր անկրկնելի ու ինքնատիպ մշակույթը, որն իր մեջ ներառում է ազգի ողջ նվաճումները, նրա գոյության եղանակը: Դա լեզուն է, գրականությունը, երաժշտությունը, տարազը, սննդի տեսակները, տոները, ծեսերը, սովորույթները, կյանքում մարդկանց հիմնական կողմնորոշիչները և այլն: Հենց ազգի կենսաբանական, հոգեբանական, բարոյական, լեզվա-մտածողական, պատմա-աշխարհագրական և այլ կարգի հատկություններն ու պայմաններն իրենց անմիջական կնիքն են թողնում մշակույթի բնույթի վրա: Մշակույթը դառնում է ազգի ձևավորման ու պահպանման անհրաժեշտ միջոց: Այս ամենը պայմանավորում են մշակույթի խորապես ազգային բնույթը: Դա է վկայում համաշխարհային մշակույթի ողջ զարգացման ընթացքը, որը պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարբեր ժողովուրդների ու ազգերի ստեղծած մշակույթների ամբողջությունն է: Երբեք չի կարելի շփոթել հայկական մշակույթը ֆրանսիականի կամ ճապոնական մշակույթը՝ եգիպտականի հետ:

Սակայն, լինելով ազգային երևույթ, մշակույթը միաժամանակ նաև համամարդկային է: Որպես այդպիսին՝ չկա համամարդկային մշակույթ: Այն միայն գոյություն ունի ազգայինի մեջ և ազգայինի միջոցով: Ազգայինը չի արգելում թափանցել այլ ժողովուրդների հոգեկան ու գեղագիտական աշխարհը, յուրացնել համաշխարհային մշակույթի լավագույն ավանդույթները: Ազգայինի հիման վրա մշակույթի մեջ ստեղծվում են նաև համամարդկային, ողջ մարդկությանը հուզող արժեքներ: Այդ յուրահատկության շնորհիվ է, որ տարբեր ազգեր ընդունում ու հասկանում են միմյանց մշակութային արժեքները: Համամարդկայինը ձևավորվում է ազգայինի հիմքի վրա, իսկ համամարդկային արժեքները, մյուս կողմից, յուրաքանչյուր ազգային մշակույթի մեջ իմաստավորվում են տվյալ ազգի ներքին պահանջներին ու ավանդույթներին համապատասխան:

Ժամանակակից մշակույթը, որը միավորում է մարդկությունը, հիմնված է համամարդկային արժեքների վրա: Այդ արժեքներից կարելի է առանձնացնել մարդու իրավունքների պաշտպանությունը, առաջավոր տեխնոլոգիաների տարածումը, առողջ ապրելակերպը, բնապահպանությունը և այլն:

- Նշեք համամարդկային այլ միտումներ և արժեքներ:

Հարցեր քննարկման համար

1. Տվե՛ք ընտանիքի ձեր սահմանումը:
2.Բերե՛ք ավանդական և լիբերալ ընտանիքների երեք առանձնահատկություններ, որոնց հետ դուք համաձայն չեք:
3. “Բացարձակ ավանդական-բացարձակ լիբերալ” կոորդինատային առանցքի վրա ընտրեք այն մոտավոր կետը, որն առավելագույնս բնութագրում է ձեր ընտանիքը:
4. Կապրեի՞ք այնպիսի հասարակությունում որտեղ ընտանիքի գաղափարը բացակայում է: Հիմնավորեք ձեր պատասխանը:
5.Ինչպիսի՞ դեր ունի ընտանիքը ձեր կյանքում:
6.Ո՞րն է իդեալական ընտանիքի ձեր մոդելը:
7. Ձեր կարծիքով, ինչո՞ւ են շատ երեխաներ ցանկանում արագ մեծանալ: Իսկ դուք ցանկանում եք շուտ մեծանալ: Պատասխանը հիմնավորե՛ք:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Համայնքի սոցիալական քարտեզի կազմում։

Համայնքի սոցիալական քարտեզի կազմման քայլերը

1. Գյուղապետարանից , քաղաքապետարանից, սոցիալական ծառայություններից, ինչպես նաև դրանց ինտերնետային կայքերից հավաքագրեք հետևյալ տեղեկատվությունը
   - Համայնքի բնակիչների թվաքանակը։
   - Համայնքում բնակվող կանանց և տղամարդկանց թվաքանակը։
   - Համայնքում բնակվող երեխաների թվաքանակը (0-18 տարեկան)։
   - Ծնելիության ցուցանիշները վերջին հինգ տարում։
   - Համայնքի բյուջեն՝ եկամուտներ և ծախսեր։

2. Համայնքի պաշտոնյաների և բնակիչների հետ անցկացրեք հարցազրույցներ պարզելու համար, թե որոնք են համայնքի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները և ինչ ճանապարհներ կան դրանք լուծելու համար։
3. Հավաքագրված տվյալները և տեղեկությունները ներկայացրեք դասարանին։

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ

ԴԱՍ 9. ԳԱՂԱՓԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դասի նպատակը

Այս դասի արդյունքում դուք կիմանաք արժեքների էության մասին: Կհասկանաք, որ կան մնայուն, բացարձակ արժեքներ: Կոնկրետ օրինակների վրա կքննարկեք արժեքների բախման հիմնախնդիրը և կփորձեք որոշումներ կայացնել:

Առաջադրանք. Ստորև նշվող արժեքներից որոնք են առավել կարևոր Ձեր կյանքում: Դասակարգեք ըստ կարևորության: Ձեր տարբերակը համեմատեք դասընկերոջ տարբերակի հետ և հիմնավորեք Ձեր ընտրությունը:

- առողջություն
- հարստություն
- ազատություն
- սեր ծնողների նկատմամբ
- հաճույք
- արդարություն
- խաղաղություն
- ընկերասիրություն
- հայրենասիրություն
- բանիմացություն
- բարություն:

Այժմ պատկերացրեք, որ Դուք ռազմադաշտում եք և մասնակցում եք ազատագրական պայքարի: Ըստ կարևորության, դասակարգեք նույն արժեքները և մեկնաբանեք տարբերությունները:

Ընթերցե՛ք հետևյալ տեքստը

Բոլոր ժամանակներում մարդն ունեցել է սրբություններ, իր համար շատ կարևոր բաներ: Դրանք հենց արժեքներն են: Երբ մենք խոսում ենք արժեքների մասին, մենք խոսում ենք մեզ համար կարևոր բաների մասին: Կան արժեքներ, որոնք բացարձակ են, մնայուն: Օրինակ՝ հայրենասիրությունը, բարին, գեղեցիկը, սերը: Նմանատիպ արժեքների կրողը լինելը պարտադիր է և դրանց կարևորումը չպետք է թողնել անհատի

ընտրությանը: Այդ արժեքները շատ կարևոր են հասարակության անվտանգության, առաջընթացի համար:

Ի՞նչ խնդիրներ կունենա հասարակությունը, եթե յուրաքանչյուր ոք ինքը ընտրի հայրենասեր լինել, թե՞ չլինել, գեղեցիկը գնահատել, թե՞ արհամարհել:

Շատ կարևոր է, որ մարդիկ լինեն մնայուն արժեքների կրող, քանի որ արժեքների հիման վրա ենք մենք կայացնում մեր որոշումները: Օրինակ՝ եթե ինչ-որ մեկի համար լավ մասնագետ դառնալը արժեք է, ապա նա որոշում կընդունի լավ սովորել:

Կյանքում հաճախ լինում են իրավիճակներ, երբ հանգամանքները մարդուն ստիպում են ընտրություն կատարել արժեքների միջև: Նման իրավիճակում առաջանում է արժեքների բախում (կոնֆլիկտ):

Պատկերացրեք հետևյալ իրավիճակը: Դուք աշխատում եք որևէ հիմնարկությունում: Ձեր մտերիմ ընկերը հավակնում է այդ հիմնարկությունում առկա թափուր պաշտոնին: Միաժամանակ, նրա հետ մրցակցում է մեկը, որը շատ ավելի լավ մասնագետ է, քան Ձեր ընկերը: Ի՞նչ անել: Այս իրավիճակում բախվում են հետևյալ արժեքները.

1. Լինել ազնիվ և ընտրել լավ մասնագետին:
2. Լինել ընկերասեր և ընտրել ընկերոջը:
3. Մտածել հիմնարկության ապագայի մասին և ընտրել լավ մասնագետին:

- Ձեր կյանքից վերհիշեք դեպքեր, երբ հայտնվել եք արժեքների բախման իրավիճակում:

Ստորև ներկայացնում ենք մի քանի արժեքային պահանջներ: Յուրաքանչյուրի համար նշեք իրավիճակներ, որոնցում այդ պահանջների չկիրառելը կարող է համարվել մեղմացուցիչ հանգամանք:

Օրինակ՝
Սպանությունն անթույլատրելի է:
Հանցագործը հարձակվում է անմեղ մարդու վրա:
Վերջինս ինքնապաշտպանության մղումով սպանում է հանցագործին:

1. Չպետք է ստել:
2. Մեծամասնության կողմից ընդունված որոշումը պետք է կատարվի:

3. Բոլորս արժանի ենք խոսքի ազատության իրավունք ունենալու։
4. Միշտ պետք է ենթարկվենք օրենքներին։

Առաջադրանք։ Բաժանվեք 4-5 հոգանոց խմբերի։ Քննարկեք ստորև բերվող իրավիճակները և պատասխանեք հետևյալ հարցերին։

1. Ի՞նչ արժեքներ են բախվում տվյալ իրավիճակում։
2. Ինչպես կվարվեիք դուք տվյալ իրավիճակում։
3. Հիմնավորեք Ձեր քայլը։

Իրավիճակ 1

Գևորգը և Արսենը լավ ընկերներ էին։ Մի օր նրանք միասին գնացին գնումներ կատարելու։ Արսենը փորձելու նպատակով հագավ մի սվիտեր և, ի զարմանս Գևորգի, վերարկուի տակից սվիտերը հագին դուրս եկավ խանութից։ Մի պահ անց խանութի աշխատակիցը կանգնեցրեց Գևորգին և պահանջեց ասել դուրս եկած տղայի անունը։ Ապա, աշխատակիցը խանութի տիրոջն ասաց, որ երկու տղաներին տեսել էր միասին, և որ վստահ էր, որ ապրանքը գողացել էր նրա՝ խանութից դուրս եկած ընկերը։ Խանութի տերն ասաց Գևորգին, որ վերջինս կարող է պրոբլեմների մեջ հայտնվել, եթե չասի իր ընկերոջ անունը։

Իրավիճակ 2

Տիկին Աննայի ընտանիքը շատ ծանր ֆինանսական վիճակում է։ Նրանց խնայողությունները սպառվել են։ Չորս անդամից բաղկացած ընտանիքի համար սննդամթերք գնելը լուրջ խնդիր է դառնում։ Մթերային խանութում գնումներ կատարելիս տկն. Աննան տեսնում է, թե խանութի մեկ այլ հաճախորդի բաց դրամապանակից ինչպես է հատակին ընկնում 10 000 դրամ։ Տկն. Աննան քայլում է դեպի այն կետը, որտեղ ընկել է գումարը։ Ոչ ոք չի նայում։ Նա հատակից վերցնում է փողը։ Փողն իրեն պահի, թե վերադարձնի տիրոջը։

Իրավիճակ 3

Դավիթը Երևանի պետական համալսարանի ուսանող է։ Նա միաժամանակ աշխատում է որպես բասկետբոլի մարզիչ Լևոնի օգնական։ Դավիթը մեծ նվիրումով է վերաբերվում այս աշխատանքին, քանի որ շատ է հարգում Լևոնին։ Լևոնը շատ բարձր է գնահատում Դավիթի աշխատանքը։ Անցյալ շաբաթ բասկետբոլի հավաքների ընթացքում նա ուսանողներին ասել է. “Եթե մեզ հետ չլիներ Դավիթը, մենք չէինք կարողանա հաջողության հասնել”։

Անցյալ չորեքշաբթի Լևոնը Դավիթին հարցրեց, թե արդյոք վերջինս կարող է Գյումրու թիմի հետ խաղի համար քաղաքի մյուս ծայր հասցնել թիմին անհրաժեշտ գույքը։ Հասկանալով, որ իր մեքենան չափազանց փոքր է գույքը տեղավորելու

համար, Դավիթը մտածեց, որ կարող է ժամանակավորապես վերցնել հոր բեռնատարը: Ուստի, ասաց. “Իհարկե, Լևոն, կարող ես ինձ վրա հույս դնել”:

Երբ Դավիթը եկավ տուն, նա և հայրը վեճի բռնկվեցին գնահատականների հետ կապված ինչ-որ խնդիրների շուրջ: “Դավիթ”, ասաց հայրը, “դու չափազանց շատ ժամանակ ես ծախսում բասկետբոլի թիմի հետ և բավականաչափ չես զբաղվում քո դասերով: Ես ցանկանում եմ, որպեսզի շաբաթվա մնացած օրերի ընթացքում տնից դուրս չգաս: Ինձ տուր քո մեքենայի բանալիները”: Թեժ վեճից հետո Դավիթը բանալիները հանձնեց հորը:

Ընթրիքից հետո Դավիթի հայրն ընկերոջ հետ ինչ-որ տեղ գնաց: Դավիթը նկատեց, որ բեռնատարի բանալիները դրված են սեղանին: Վերցնե՞լ մեքենան և սարքավորումները հասցնել Լևոնին, թե կատարե՞լ հոր ցանկությունը և մնալ տանը:

Իրավիճակ 4

Օվկիանոսում կործանված ռազմանավի անձնակազմի անդամները փորձում են փրկվել: Բայց նրանց մի մասին է հաջողվում տեղ զբաղեցնել փրկարար նավակում: Նավակում է հայտնվում ռազմանավի հրամանատարը: Գերբեռնված նավակը հեռանում է դեպքի վայրից: Այդ պահին լողալով նավակին է մոտենում մի նավաստի, որը նույնպես փորձում է տեղ գրավել գերբեռնված նավակում: Երբ նավաստին փորձում է բարձրանալ, հրամանատարը գոռում է. “Մի թողեք նա բարձրանա: Մեր նավակը չի դիմանա”: Ինչպես պետք է վարվեն նավաստիները:

ԴԱՍ 10. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Դասի նպատակը

Այս դասը սովորելով՝ Դուք կամբողջացնեք ազատության մասին Ձեր ունեցած պատկերացումները, կկարողանաք թվարկել մարդու հիմնարար ազատություններն ու բերել ազատության դրսևորումների օրինակներ: Կմտորեք ազատության սահմանների հարցի շուրջ և կկարողանաք հիմնավորել, թե ինչու է երբեմն անհրաժեշտ լինում սահմանափակել ազատությունը:

ԸՆԹԵՐՑԵ'Ք ՏԵՔՍՏԸ

Ազատն Աստված այն օրից, երբ հաճեցավ շունչ փչել,
Իմ հողանյութ շինվածքին կենդանություն պարգևել,
Ես անբարբառ մի մանուկ երկու ձեռքս պարզեցի
Եվ իմ անզոր թևերով **Ազատություն** գրկեցի...

Միքայել Նալբանդյան

Ազատության խնդիրը մարդկանց հուզել է հասարակության պատմության վաղնջական ժամանակներից ի վեր: Մարդիկ միշտ փորձել են հասկանալ, թե ինչ է ազատությունը: Ամենաընդհանուր բնորոշմամբ կարելի է ասել, որ **մարդն ազատ է, երբ ինքն է կառավարում իրեն**: Մարդկային մտքի ժառանգության մեջ առկա են բազմազան պատկերացումներ ազատության մասին. իմաստասերները խոսում են ներքին ազատության, բարոյական ազատության, կամքի ազատության և այլ տեսանկյունների շուրջ: Որպես ժողովրդավարական հասարակության հենասյուն ազատությունը կարելի է ընկալել անհատի ու հասարակության

հարաբերությունների տեսանկյունից, այդ դեպքում այն կարտահայտվի հետևյալ երկու մոտեցումների տեսքով. ՝*կարող եմ*՞ և ՝*թույլատրվում է*՞:

Հայեցակերպ 1: ¦Ինչ ուզում եմ, անում եմ, հետևաբար ես ազատ եմ§: Այսպիսի ազատությունը անհատի կարողությունն է՝ առկա պայմաններում գործելու ինքնուրույն, այն էությամբ բնորոշ է անհատին և անկախ է արտաքին հանգամանքներից:

Հայեցակերպ 2. ¦Ազատ եմ, որովհետև անում եմ այն, ինչ թույլատրվում է, ինչ արգելված չէ§: Այս ընկալմամբ՝ ազատությունն այն է, ինչը երաշխավորվում է պետության կողմից, ինչը պարտավորվում է ապահովել իշխանությունը անհատի համար, որպեսզի վերջինս կարողանա գործել ինքնուրույն:

Հնարավո՞ր է, արդյոք, անսահման ազատություն: Պարզվում է, որ՝ ոչ: Ազատությունն ամենաթողություն չէ: ***Ազատությունը*** *անձին տրված այն հնարավոր սահմանն է, որի շրջանակներում անձն ինքն է որոշում իր վարքագծի չափն ու տեսակը, այն հարկադրանքի բացակայություն է, հնարավորություն գործել կամ չգործել ըստ սեփական ցանկությունների:*

Անցյալում մարդկությունը ազատությունը դիտել է որպես ազատ լինելը իշխանությունից, քանի որ իշխանությունը հակված է եղել սահմանափակելու մարդու բնական ազատությունները: Իսկ նորագույն շրջանում աստիճանաբար արմատավորվում է ազատության երկրորդ ըմբռնումը, այն է՝ ազատություն իշխանության (պետության) միջոցով: Այսպիսի մոտեցման դեպքում ժողովրդավարական երկրների իշխանություններն իրենց առաքելությունը տեսնում են մարդու բնական իրավունքներն ու ազատություններն ապահովելու մեջ:

- Միջնադարյան և Վերածննդի Եվրոպայում իգական սեռի ներկայացուցիչները տանից դուրս էին գալիս զինված տղամարդկանց ուղեկցությամբ, քանի որ իրենց անվտանգությունն իրենք ապահովել չէին կարող: Իսկ արդի պետություններից շատերում իգական սեռի ներկայացուցիչները օգտվում են իրենց ազատ տեղաշարժվելու իրավունքից, քանի որ նրանց ազատություններն ու իրավունքները երաշխավորում է պետությունը:

Դարեր ի վեր ազատությունն ընկալելով որպես պայքար ազատ լինելու համար, որպես ազատություն հարկադրանքից, մարդիկ, սովորաբար, այն ընկալում են նեղ իմաստով՝ որպես ազատություն ինչ-որ բանից: Հետաքրքրական է, որ ելնելով այս ավանդական պատկերացումներից, ներկայումս, երբ անհատներին տրվում է ազատություն, նրանք երբեմն չեն կարողանում տնօրինել այն, քանի որ ինչ-որ բանից ազատվելը դեռևս ազատության կեսն է. իսկապես ազատ լինելը ազատությունն է հանուն ինչ-որ բանի: Սա նշանակում է, որ արտաքին շղթաները փշրելով՝ մարդը միանգամից ազատ չի դառնում, ազատ լինելը ունակություն է, որը յուրաքանչյուր անհատ պետք է իր մեջ զարգացնի:

- Երևի դիտել եք “Էլեկտրոնիկի արկածները” կինոֆիլմը, որի հերոսը իր դպրոցական հոգսերը թողել էր ռոբոտին ու ստացել սպասված ազատությունը: Բայց քանի որ դա ազատություն էր դասերից, տնային պարտականություններից, շատ շուտով այն ձանձրացրեց տղային… Ազատվելով իր հոգսերից, վերջինս կորցրել էր նաև իր գոյության իմաստը…

Իմաստասերները գտնում են, որ բնության ողջ աստիճանակարգում մարդուն տրված է արտակարգ տեղ, քանի որ նա օժտված է ազատությամբ: Եթե կենդանիները ենթարկվում են իրենց տեղի ու դերի հաստատուն օրենքներին, ապա մարդուն տրված է ազատություն փոխելու և' իր տեղը, և' իր դերը: Մարդը, որպես

կանոն, կարող է ապրել այնտեղ, որտեղ ցանկանում է, և իր ընտրությամբ կարող է դառնալ այնպիսին, ինչպիսին ինքն է կամենում: Մարդը, փաստորեն, մեծ ցանկության ու աշխատասիրության դեպքում կարող է դառնալ ինքն իրեն ստեղծող վարպետ: Սակայն այդ ազատության մեջ կա նաև վտանգ, քանի որ մարդը կարող է տուրք տալ իրեն դարանակալող ամենանենգ թշնամիներին՝ ծուլությանը, ագահությանը և այլն ու իջնել անգամ ամենացածր կենդանու աստիճանին: Մարդ էակի յուրակերպությունը նրանում է, որ մարդու բնույթը նախասահմանված չէ, հակառակը մարդուն տրված է ազատություն, որը յուրաքանչյուրը տնօրինում է ըստ իր ճաշակի ու կարողության…

Ըստ մարդու իրավունքների համընդհանուր և այլ միջազգային հռչակագրերի[1], մարդու հիմնարար ազատությունները հետևյալն են.

- *տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու ազատություն,*
- *ազատություն սեռական, ռասայական, ազգային, կրոնական խտրականության ենթարկվելու վտանգից,*
- *ազատություն կարիքավորությունից և չքավորությունից,*
- *ժողովների, միավորումներ կազմելու ազատություն,*
- *անձի սեփական ներուժը զարգացնելու և իրականացնելու ազատություն,*
- *ազատություն սպառնալիքիների, խոշտանգումների, կամայական ձերբակալությունների, բռնի գործողությունների ենթարկվելու վախից,*
- *մտքի, խղճի, դավանանքի և խոսքի ազատություն,*
- *արժանապատիվ աշխատանք ունենալու ազատություն,*
- *ազատություն անարդարությունից և օրինախախտումներից:*

- Մտորեք, թե վերոնշյալ ազատություններից որոնք են “ազատություն ինչ-որ բանից” և որոնք են “ազատություն հանուն ինչ-որ բանի”:

Վերն արդեն նշվեց, որ ազատությունը չի կարող անսահման լինել, այն ունի իր անհրաժեշտ սահմանափակումները: Բերենք նման սահմանափակումների մեկ-երկու օրինակ:

- Թեպետ մարդն ունի խոսքի և արտահայտման ազատություն, սակայն պատերազմական իրավիճակներում նրա ազատությունը սահմանափակվում է երկրի անվտանգության շարժառիթներից ելնելով:
- Թեպետ մարդն ունի ժողովների և միավորումներ կազմելու ազատություն, նա չի կարող օգտվել դրանից եթե ցանկանում է ստեղծել հակամարդկային, ռասայական կամ այլ խտրականություն հրահրող կազմակերպություն:
- Թեպետ մարդն ունի անարդարությունից և օրինախախտումներից ազատություն, իր հանդեպ խախտում կատարվելիս նա չի կարող

[1] ***Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը*** մարդու իրավունքներն ու ազատությունները ամրագրող կարևոր միջազգային փաստաթուղթ է, որն ընդունվել է 1948 թ. դեկտեմբերի 10-ին Միացյալ Ազգերի կազմակերպության ղեկավար մարմնի կողմից: Ներկայումս երկրագնդի 150-ից ավելի պետություններ, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը լիովին հարգում, պաշտպանում և ընդունում են այն: Հռչակագրի առաջին հոդվածն ազդարարում է, որ ***բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով***:

ինքնադատաստան անել, այլ պետք է դիմի դրա համար պատասխանատու մարմիններին:

- Կարո՞ղ եք բերել ազատությունների անհրաժեշտ սահմանափակումների մեկ-երկու օրինակ ևս:

Հարցեր քննարկելու համար

- Ի՞նչ է ազատությունը:
- Ինչո՞ւ է ազատության խնդիրը միշտ հուզել մարդկանց:
- Ազատության ինչպիսի՞ ըմբռնումներ կան:
- Տեքստի ընթերցումից հետո փոխվեցի՞ն ձեր պատկերացումներն ազատության մասին, թե՝ ոչ:
- Ի՞նչ է նշանակում ազատություն հանուն ինչ-որ բանի: Հանուն ինչի՞ կուզենայիք ազատություն ունենալ:
- Արդյոք կա՞ անսահմանափակ ազատություն: Ինչու՞:
- Ազատությունը արդյոք արժեզրկվու՞մ է, երբ գիտակցվում է նրա հարաբերական բնույթը:
- Պատկերացրեք մի հասարակություն, որտեղ մարդիկ անում են այն ամենը, ինչ ցանկանում են: Կուզենայի՞ք ապրել նման հասարակությունում: Ինչու՞:
- Արդարացի՞ են, արդյոք, ազատության սահմանափակումները: Ինչու՞:

Առաջադրանք

- Հարցազրույց անցկացրեք ձեր ընտանիքի անդամների հետ՝ Ի՞նչ է ազատությունը՝ թեմայով: Փորձեք պարզել նրանցից յուրաքանչյուրի վերաբերմունքը վերոնշյալ տեսակետների հանդեպ: Ձեր հարցազրույցների արդյունքները թող պահվեն ձեր ուսումնական թղթապանակներում:

Յուրաքանչյուր հարցվողի հետ զրույցը գրառեք հետևյալ ձևով.

1.Ձեր (զրույցը վարողի) անուն, ազգանունը _____

2. Ու՞մ հետ եք անցկացրել հարցազրույցը _____

3. Համաձա՞յն է հարցվողը, որ՝

ազատություն նշանակում է.	այո	մասամբ	ոչ	ինչու՞
անել այն, ինչ ուզում ես				
անել այն, ինչ չես ուզում				
չանել այն, ինչ ուզում ես				
չանել այն, ինչ չես ուզում				
այլ _____				

4. Ի՞նչ է ազատությունը, ըստ հարցվողի: _____
_____

5. Համաձա՞յն եք, արդյոք, հարցվողի հետ: Ինչու՞: _____
_____

ԾԱՆԻ՛Ր ԶՔԵԶ

Լրացրե՛ք առաջարկվող աղյուսակը՝ համապատասխան սյունյակում նշելով տվյալ զբաղմունքի վրա Ձեր ծախսած ժամանակը (օրինակ՝ “ամեն օր” սյունակում լողի դիմաց գրել “մեկ ժամ”, եթե իրոք ամեն օր մեկ ժամ հատկացնում եք լողին):

Ինչպե՞ս եմ անցկացնում իմ ազատ ժամանակը				
	Ամեն օր	Երբեմն	Հազվադեպ	Ոչ մի անգամ
Շարժուն խաղեր				
Լող				
Հեռուստացույցի դիտում				
Համակարգչային խաղեր				
Ինտերնետ				
Զբոսանք				
Հյուր գնալ				
Հյուրեր ընդունել				
……..				
……..				

- Հնարավո՞ր է, որ ինչ-որ մեկն ազատ ժամանակ չունենա: Ի՞նչ եք կարծում, դա լա՞վ է, թե՝ վատ:
- Աղյուսակը լրացնելուց հետո նայեք, թե ինչպիսի զբաղմունքներն են Ձեզ մոտ գերակշռում, արդյոք կարողանո՞ւմ եք բազմազան ու առողջ զբաղմունքներով հագեցնել Ձեր ժամանակը, թե այն ծախսում եք միակերպ:

ԴԱՍ 11-12. ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Դասի նպատակը

Այս դասը սովորելով՝ նախնական պատկերացում կկազմեք “իրավունք” հասկացության մասին, կկապակցեք այն մարդու ազատության և պատասխանատվության հետ, կկարողանաք վերշուծել պատասխանատվության արժեքն ու անհրաժեշտությունը հասարակության կյանքում:

ԸՆԹԵՐՑԵ'Ք ՏԵՔՍՏԸ

Ազատ է ապրում միայն նա, ով ուրախությունը գտնում է իր պարտքը կատարելու մեջ:

Ցիցերոն

Նախորդ դասում ծանոթացաք մարդու մի շարք հիմնարար ազատությունների հետ: “Հիմնարար” նշանակում է հիմնական, խորքային, անքակտելի, էական: Բայց մարդու ազատությունները մարդու իրավունքների համակարգիանքակտելի մասն են: Մարդու հիմնարար ազատություններն ու իրավունքներն առավել մանրամասն կուսումնասիրեք իններորդ դասարանի դասընթացում, իսկ այժմ միայն բավարարվենք “իրավունք” բառի իմաստի ներածական պարզաբանմամբ:

Ի՞նչ է իրավունքը: “Իրավ” նշանակում է ճշմարիտ, իրոք: Ուրեմն, իրավունքը նշանակում է ճշմարիտ, իրավացի, արդար լինելը: Որոշ լեզուներում, օրինակ ռուսերենում և անգլերենում, իրավունք բառը նշանակում է “աջ”, այսինքն՝ արդար, անխարդախ: “Իրավունք” բառն օգտագործվում է եզակի և հոգնակի թվերով: Որպես եզակի՝ **իրավունք,** *այն նշանակում է համակարգ, որտեղ ամեն ինչ, անգամ պետական բարձրագույն իշխանությունը ենթարկվում են իրավական պահանջներին:* Այս իմաստով հասարակագետները խոսում են իրավունքի գերակայության մասին[1]: Բառն օգտագործվում է հոգնակի թվով մարդու իրավունքների մասին խոսելիս: Այս իմաստով իրավունքը շատ մոտ է ազատությանը, և մարդու իրավունքներն ու ազատությունները համարյա հոմանիշներ են:

- Հաճախ կարելի է լսել. “Ես իրավունք ունեմ նման կերպ վարվելու”, կամ “Նա այդ անելու իրավունք չուներ”, “Իրավունքի ոտնահարում” և այլ արտահայտություններ, որոնցում իրավունքները մարդուն ի վերուստ տրված անօտարելի անգամանքներ են, որոնք ոչ ոք չի կարող խլել նրանցից:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որին կանդրադառնաք հաջորդ տարի թվարկվում են մարդու մի շարք հիմնարար իրավունքներ, մասնավորապես՝ կյանքի, ազատության և արժանապատվության, սեփականության, հանգստի և ժամանցի, ամուսնության և ընտանիք կազմելու, կրթության և այլն:

---

[1] Իրավունքի գերակայությունը նշանակում է, որ օրենքները պետք է իրավական լինեն. Համապատասխանեն ազգային և միջազգային իրավունքի պահանջներին, իսկ իշխանավորները պետք է ենթարկվեն քաղաքականությունից վեր դասվող իրավունքի տիրապետությանը:

Իսկ ի՞նչ կապ ունի իրավունքը պատասխանատվության հետ: Պարզվում է՝ սերտ կապ: Իրավունքը և պատասխանատվությունը նույն մետաղադրամի տարբեր կողմերն են: Միայն իրենց իրավունքների մասին աղաղակող մարդիկ երբեմն մոռանում են, որ իրավունքները ծնում են պատասխանատվություն, իսկ պատասխանատվության իրականացումը ծնում է իրավունք:

- Սա կարելի է պատկերացնել վարորդական իրավունքի օրինակով: Երբ մարդը համապատասխան կրթություն ստանալով ու վարել վարժվելով ձեռք է բերում այս կամ այն փոխադրամիջոցը վարելու իրավունք, հենց այդ պահին նա ձեռք է բերում այդ փոխադրամիջոցի վարման հետևանքով առաջացող ողջ պատասխանատվությունը նաև:
- Դուք ունեք կրթության իրավունք, որը միաժամանակ նշանակում է նաև կրթվելու պատասխանատվություն:

Իսկ ի՞նչ է պատասխանատվությունը: Պատասխանատվության խնդիրն առաջ է գալիս այն հասարակություններում, որոնցում կան ազատ անհատներ: ***Պատասխանատու լինել***՝ *նշանակում է գիտակցել ու հիմնավորել սեփական գործողություններն ու դրանց հետևանքները:* Պատասխանատվությունը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

1. ***Պատասխանատվությունն*** *անհատի պարտականությունն է կամ պարտավորվածությունը՝ վարվելու և գործելու որոշակի ձևով*: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիները պարտավոր են մասնակցել հանրապետության պաշտպանությանը:
2. ***Պատասխանատվությունը*** *անհատի պարտականությունն է ու պարտավորվածությունը՝ չվարվելու և չգործելու որոշակի ձևով*: Օրինակ, վարորդը պատասխանատու է չխախտել ճանապարհային երթևեկության կանոնները:

Պատասխանատվությունը ենթադրում է գիտակից և բանիմաց քաղաքացիների առկայություն: Պատասխանատվությունն ի հայտ է գալիս երեխայի մեծանալուն զուգընթաց, երբ նա աստիճանաբար սկսում է կշռադատել իր արարքները, ինչպես նաև կանխատեսել դրանց հետևանքները: Յուրաքանչյուր իրավունք առաջ է բերում նաև պատասխանատվություն: Օրինակ, ստանալով բժիշկ

աշխատելու իրավունք՝ քաղաքացին ստանձնում է որոշակի պարտավորություններ /տալ ճիշտ բուժում, լինել հոգատար, պահպանել հիգիենայի կանոնները և այլն/:

Ընդհանրապես պատասխանատվությունը ծագում է տարբեր հանգամանքներից, օրինակ՝ որպես աշխատանքի, ուսման, օրենքների կամ բարոյական սկզբունքների արդյունք: Ստորև կթվարկվեն պատասխանատվության որոշ կարևոր աղբյուրներ:

1. **Խոստումը:** Երբ մենք ուրիշներին խոստումներ ենք տալիս, պարտավորվում ենք կատարել դրանք: Մենք վաղ տարիքից հասկանում ենք, որ խոստումները պետք է կատարվեն, ընդ որում՝ այն պահին և այն տեղում, ինչպես խոստացել ենք: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր խոստում տալուց առաջ հարկավոր է լուրջ մտածել խոստումն իրականացնելու հնարավորության մասին: Որոշ խոստումներ տրվում են բանավոր, սակայն մի շարք խոստումներ ձևակերպվում են գրավոր: Օրինակ, ընկերները կարող են բանավոր պայմանավորվել հանդիպման մասին, իսկ երգչուհին գրավոր պարտավորվում է երգել որևէ համերգասրահում որոշակի պայմաններով:

2. **Հանձնարարությունը:** Ուսման կամ աշխատանքի վայրում դուք հաճախ կարող եք ստանալ հանձնարարություններ, որոնց կատարումը կհանգեցնի աշխատանքի կամ ուսման նպատակին: Օրինակ՝ յուրաքանչյուր դասի համար դուք կարող եք ստանալ տնային առաջադրանք, և ձեր պատասխանատվությունն է կատարել այն:

3. **Օրենքը**: Հասարակության յուրաքանչյուր անդամ պատասխանատու է կատարելու համընդհանուր օրենքով նախատեսված պարտավորությունները: Օրինակ՝ բոլորս պարտավոր ենք հարգելու ճանապարհային երթևեկության կանոնները:

4. **Քաղաքացիությունը**: Մարդը ունի որոշակի պատասխանատվություն որպես քաղաքացի: Օրինակ, Հայաստանի քաղաքացիները պետք է հարգեն ՀՀ Սահմանադրությունը և օրենքները:

5. **Բարոյական սկզբունքները**: Մարդու պատասխանատվության կարևորագույն հիմքերից մեկը բարոյական սկզբունքներն են, որոնք կարող են հիմնված լինել անձնական և ազգային արժեքների վրա: Օրինակ՝ բարոյական սկզբունքներ ունեցող մարդը հարգում է մյուսների արժանապատվությունը, չի խփում ընկածին և այլն:

Ի վերջո, պատասխանատվության հիմնական աղբյուրը ազատությունն է: Սա նշանակում է, որ պատասխանատվությունն ու ազատությունը ոչ թե հակադրություններ են, այլ նույն երևույթի տարբեր կողմերը: Յուրաքանչյուր ազատություն ենթադրում է որոշակի պատասխանատվություն:

Պատասխանատվությունն արժևորել է “Փոքրիկ իշխան”-ի հեղինակ Անտուան դը Սենտ-Էքզյուպերին, ասելով. “*Լինել մարդ՝ նշանակում է զգալ քո պատասխանատվությունը: Գիտակցել, որ դնելով քո աղյուսը, դու նույնպես օգնում ես կառուցել աշխարհը*”: Եվ իրոք, պատասխանատվությունն իրականացնելը բերում է որոշ առավելություններ հասարակության, ինչպես նաև այդ պատասխանատվությունն իրականացնող անհատի համար:

Ստորև թվարկվում են պատասխանատվությունն իրականացնելու մի շարք առավելություններ հասարակության համար:

- **Կանխատեսելիություն**: Երբ մարդիկ իրականացնում են իրենց պատասխանատվությունը, մյուսները կարող են ենթադրել, թե ինչ կարելի է նրանցից սպասել:
- **Անվտանգություն**: Մարդիկ ավելի ապահով են զգում, երբ գիտեն, որ մյուսները կիրագործեն իրենց պատասխանատվությունը:

- **Արդյունավետություն**: Աշխատանքը կարող է արվել ավելի արդյունավետ, հեշտ և արագ, երբ յուրաքանչյուր անձ իրականացնում է իր պատասխանատվությունը:

Պատասխանատվություն իրականացնելն ունի առավելություններ նաև հենց իրականացնողի համար:

- **Անկախություն**: Իր պարտականություններն ու պարտավորվածությունները բարեխղճորեն կատարող մարդուն հնարավորություն է տրվում գործելու նվազ վերահսկողության պայմաններում, քանի որ վերահսկողները հասկանում են, որ տվյալ անհատը, որպես կանոն, իրականացնում է իր պատասխանատվությունը:
- **Ինքնավստահություն**: Իր պատասխանատվությունն ամբողջովին իրականացնող մարդը ձեռք է բերում ինքնավստահություն իր ուժերի հանդեպ:
- **Այլոց հավանությանն արժանանալը**: Իրենց պատասխանատվությունն իրականացնող անհատները ավելի մեծ հավանականությամբ կարող են հարգվել ու վստահության արժանանալ հասարակության կողմից:
- **Գիտելիքի, հմտության և փորձի ձեռքբերում**: Պատասխանատվությունն իրականացնելը հնարավորություն է տալիս մարդուն ձեռք բերել նոր գիտելիք, հմտություն և արժեքավոր փորձ:
- **Ճանաչում և կարգավիճակի բարձրացում**: Իր պատասխանատվությունը լիովին իրականացնելով՝ անհատը կարող է

արժանանալ ճանաչման, պարգևների, շնորհների, ինչպես նաև կարող է ստանալ կարգավիճակի բարձրացման հնարավորություն:

Վերոնշյալ բոլոր առավելություններին զուգահեռ պատասխանատվություն կրելն առաջ է բերում նաև մի շարք դժվարություններ: Օրինակ՝

- **Բեռնվածություն**: Պատասխանատվություն կրելը որոշակիորեն ծանրանում է մարդու ուսերին՝ ստիպելով նրան ծախսել ջանքեր, ժամանակ, դրամ և այլն:
- **Անհանգստություն**: Պատասխանատվությունն առաջ է բերում հուզում. արդյոք մարդը կկարողանա՞ ինչպես հարկն է իրականացնել այն:
- **Այլ հետաքրքրությունների զոհաբերում**: Երբեմն պատասխանատվությունն իրականացնելու համար մարդը ստիպված է լինում հրաժարվել իր համար կարևոր որոշ արժեքներից ու ցանկություններից:

Պատասխանատու մարդու հաճախ անվանում են նաև պարտաճանաչ, այսինքն՝ իր պարտքը ճանաչող, գիտակցող:

- Ձեր ճանաչած մարդկանցից ո՞ւմ կանվանեիք պարտաճանաչ: Իսկ Դուք ինքներդ պարտաճանա՞չ եք:

Տարբերակում են պատասխանատվության երեք տեսակ՝ իրավական պատասխանատվություն, բարոյական պատասխանատվություն և սոցիալական պատասխանատվություն:

1. **Իրավական պատասխանատվություն:** Բոլոր քաղաքացիները պարտավոր են իմանալ իրենց իրավական պատասխանատվությունները պետության և քաղաքացիների հանդեպ: Որպես կանոն ժողովրդավարական հասարակարգերում քաղաքացիներն ունեն երեք հիմնական պարտականություններ. ենթարկվել օրենքներին, վճարել հարկերը և քվեարկել:
2. **Բարոյական պատասխանատվություն:** Մարդկային կյանքի առանձնահատկություններից մեկն այն է, որ ունենալով ազատություններ և բանականություն, մարդը կրում է նաև պատասխանատվություն իր արարքների համար: Մեզ ընձեռված ազատությունները բարի նպատակով օգտագործելը մեր բարոյական պատասխանատվության առանցքն է: Այնպես չէ, աշխարհում տեղի ունեցող գործընթացները մարդու իշխանությունից դուրս և մենք պատասխանատու չենք: Այսօր նկատվող բնակլիմայական փոփոխությունները, բնապահպանական աղետները մեր ոչ ճիշտ գործելակերպի արդյունք են: Մարդկությունը բարոյական պատասխանատվություն ունի այդ ամենի համար:
3. **Սոցիալական պատասխանատվություն:** Սոցիալական պատասխանատվությունը վերաբերում է ինչպես անհատներին, այնպես էլ կազմակերպություններին: Մեզանից յուրաքանչյուրը, լինելով հասարակության մաս, ունի պատասխանատվություն մեր շրջապատում կատարվող երևույթների հանդեպ: Օրինակ՝ եթե մեր համայնքում առկա է աղբ, եթե առկա են բնության, կենդանիների, մարդկանց հանդեպ ոչ ճիշտ

վերաբերմունք, ապա մենք պարտավոր ենք գործել: Սոցիալական պատասխանատվություն պարզապես չի նշանակում որոշակի պարբերականությամբ մասնակցել համայնքի մաքրությանը, կատարել կամավորական աշխատանքներ, կատարել նվիրատվություններ: Սոցիալական պատասխանատվությունը պետք է լինի ապրելակերպ և մտածողություն: Մեզանից յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ պատասխանատու ենք մեր միջավայրում կատարվող գործընթացների համար և պետք է գործենք:

Սոցիալական պատասխանատվություն ունեն նաև կազմակերպությունները: Ժամանակակից առաջադեմ գործարարները հասկանում են, որ պարզապես իրենց շահույթը բազմապատկելով, չեն կարող լիարժեք ապրել: Գործարարները պետք է մտածեն հասարակությունում առկա հրատապ խնդիրների լուծման հարցում որոշակի մասնակցություն ցուցաբերելու մասին:

- Հայաստանում գործող ի՞նչ կազմակերպություններ գիտեք, որոնք հանդես են գալիս սոցիալական պատասխանատվության ծրագրերով:
- Մեկնաբանե՛ք Բեռնարդ Շոուի հետևյալ արտահայտությունը. "Ես կարծում եմ, որ իմ կյանքը պատկանում է համայնքին: Եվ քանի դեռ ողջ եմ, պարտավոր եմ համայնքի համար անել այն, ինչ կարող եմ: Կուզենամ, որ իմ մահվան պահին ամբողջությամբ սպառված լինեմ":

Կարևոր է նշել, որ կյանքում երբեմն մեր պատասխանատվությունները կարող են բախվել: Նման իրավիճակները կոչվում են երկընտրանքներ:

Ընթերցե՛ք հետևյալ իրավիճակը և պատասխանեք հաջորդող հարցերին:

Մի կին մահամերձ է: Նրան կարող է փրկել միայն մեկ դեղ: Դեղը վերջերս է հայտնագործվել մի դեղագործի կողմից, որը բնակվում է նույն քաղաքում: Նա այդ դեղի դիմաց չափազանց բարձր գին է պահանջում: Հիվանդ կնոջ ամուսինը դիմում է իր բոլոր ծանոթներին փողի խնդրանքով, սակայն կարողանում է ճարել անհրաժեշտ գումարի ընդամենը կեսը: Նա գնում է դեղագործի մոտ և խնդրում դեղն ավելի էժան գնով վաճառել կամ թույլ տալ գումարի երկրորդ կեսը վճարել ավելի ուշ: Դեղագործը մերժում է խնդրանքը՝ ասելով, որ դեղի պատրաստումը իրենց մեծ ֆինանսական միջոցներ և ջանքեր է պահանջել: Ամուսինը գիշերով կոտրում է դեղատան դուռը, մտնում և կնոջ համար գողանում այդ դեղը: Նա պե՞տք է նման բան աներ:

1. Ի՞նչ պատասխանատվություններ են բախվում տվյալ իրավիճակում:
2. Արդյո՞ք ճիշտ վարվեց ամուսինը:
3. Ինչպե՞ս կվարվեիք դուք իր փոխարեն:

Հարցեր մտորելու համար

1. Ի՞նչ է պատասխանատվությունը:
2. Որո՞նք են պատասխանատվության աղբյուրները: Ի՞նչ այլ աղբյուրներ կարող եք նշել:
3. Համաձա՞յն եք, որ պատասխանատվությունը ծնվում է ազատությունից և իրավունքից: Ինչու՞:
4. Կարո՞ղ եք հիշել, թե ինչի համար եք առաջին անգամ եղել պատասխանատու և ե՞րբ: Որքանո՞վ եք իրականացրել ձեր պատասխանատվությունը:
5. Ի՞նչ եք կարծում, ի՞նչ պատասխանատվություն է ենթադրում, օրինակ, խոսքի ազատությունը:
6. Պատասխանատվությունն իրականացնելու ո՞ր առավելություններն եք համարում հասարակության համար ամենակարևորը: Իսկ իրականացնողի՞:
7. Կարո՞ղ եք մտաբերել օրինակներ ձեր համայնքի կյանքից՝ մատնանշելու համար պատասխանատվությունն իրականացնելու առավելություններից և դժվարություններից որևէ մեկը:
8. Գտնու՞մ եք, արդյոք, որ պատասխանատվությունն իրականացնելու դժվարություններով արդարացվում է պարտականությունների կատարումից խուսափելը:

Առաջադրանք

- ՀՀ Սահմանադրությունից գտեք և դուրս գրեք ՀՀ քաղաքացիների պարտականությունները: Եթե լինեիք սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամ, ի՞նչ պարտականություն կավելացնեիք կամ կպակասեցնեիք: Ինչու՞:
- Վերլուծեք վերջին մի քանի շաբաթվա ձեր վարքը, փորձելով պարզել սեփական վերաբերմունքը խոստումներիդ հանդեպ: Հիշեք այն բոլոր դեպքերը, երբ խոստումներ եք տվել: Արդյո՞ք բոլոր խոստումներդ եք կատարել, թե եղել են խոստումներ, որ մնացել են անտեսված: Ի՞նչ եք կարծում, ինչպիսի վերաբերմունք է ձևավորվում խոստումներ շռայլող, բայց չկատարող մարդկանց հանդեպ: Փորձեք առաջիկա մեկ շաբաթում գրանցել ձեր տված բոլոր մեծ ու փոքր խոստումները և ձգտեք կատարել դրանք: Խուսափեք խոստանալ բաներ, որ չեք կարող կատարել:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Ընթերցեք տեքստը՝ տարբերակելով Շավարշ Կարապետյանի անձնազոհ արարքի բերած առավելությունները հասարակության և իր համար, մտորեք նաև նման պատասխանատվություն կրելու դժվարությունների մասին:

Շ Ա Վ Ա Ր Շ Կ Ա Ր Ա Պ Ե Տ Յ Ա Ն Ի Ս Խ Ր Ա Ն Ք Ը

Ուղիղ 30 տարի առաջ, 1976 թվականի սեպտեմբերի 16-ը ամպամած օր էր: Ստորջրյա լողի աշխարհի բազմակի ռեկորդակիր, Եվրոպայի ու ԽՍՀՄ բազմակի չեմպիոն Շավարշ Կարապետյանը մարզվում էր Երևանյան լճի մոտակայքում, երբ թիվ 15 տրոլեյբուսը, շեղվելով ճանապարհից ու վրաերթի ենթարկելով մի տղայի, ընկավ լիճն ու սկսեց սուզվել: Շառաչյունի ձայնը կարծես խլացրեց ականատեսներին, որոնք չէին հավատում իրենց աչքերի տեսածին: Շավարշը, որն արդեն բավական մարզվել էր ու հոգնել, արագորեն վազելով դեպի վթարի տեղը, ճանապարհին հընթացս հանում էր հագուստը: Որոշումը եկել էր ինքնըստինքյան. նա պետք է սուզվեր ու փորձեր փրկել տրոլեյբուսում փակված մարդկանց: Քանի մարդ կար ջրի տակ՝ նա չգիտեր, գիտեր միայն մեկ բան. պետք է փրկել: Եվ մինչ վրա կհասնեին եղբայրը, ընկերները, նա սուզվեց: Տեսանելիությունը զրոյական էր, քանի որ լճի ջուրը տիղմի էր վերածվել, որն իր հերթին վեր էր բարձրացել լճի հատակին տրոլեյբուսի հարվածից:

Շավարշը ոտքերով ջարդելով տրոլեյբուսի ապակին և լողալով ներս՝ շոշափեց մի մարդու մարմին: Մարդը անգիտակից էր և դիմադրություն ցույց չէր տալիս, սակայն Շավարշը զգաց, որ ինքը անհրաժեշտ չափով օդ չի վերցրել: Մի պահ կարկամեց. կկարողանա՞ դուրս լողալ, սակայն մտածեց, որ իր գրկի մարդուն ամեն գնով պետք է վեր հանել, և ուժ ստացավ: Երբ դուրս լողաց, եղբայրը ստիպեց ինչպես հարկն է շունչ քաշել հաջորդ սուզումից առաջ: Ինքը եղբորը հրահանգեց մնալ վերևում. քաջ գիտակցում էր, որ նրա ուժերը ներքևում չեն հերիքի:

Երկրորդ մարմինն առաջինից ծանր թվաց, մարդը կարծես թե դիմադրում էր: Հինգ-վեց հոգու բարձրացնելուց հետո վերջապես բերեցին Շավարշի պահանջած ակվալանգները, սակայն նրանցում օդ չկար: Եթե լիներ, այդ օդով կարելի կլիներ երկարացնել տրոլեյբուսում մնացողների շնչելը: Յոթերորդ փրկվողը կառչեց Շավարշից ու նրան ցած քաշեց, սակայն Շավարշը հիշեց փրկարարների հետ իր զրույցներն այն մասին, որ նման դեպքերում պետք է թուլացնել մարմինն ու սպասել մինչև խեղդվողը թողնի իրեն: Այդ պահերին Շավարշն իրեն զգում էր ՈՐՊԵՍ ԽԵՂԴՎՈՂՆԵՐԻՑ ՄԵԿԸ… Հաջորդին փրկելն ավելի դժվար էր, քանի որ շնչահեղձությունը խանգարում էր: Այս անգամ եղբայրը կարծես զգացել էր, որ Շավարշը դժվարանում է, և սուզվել ու կեսճանապարհին վերցրել էր փրկվողին: Ափին եղբայրը Շավարշին խնդրում է մի քիչ երկար մնալ, քանի որ տեսնում է վերջինիս շնչահեղձ լինելը: Բայց, ախր, ժամանակը չէր սպասում… Շավարշը հասկանում է, որ ամեն մի ներշնչում-արտաշնչում կարող է մի մարդկային կյանք արժենալ… Նախապես իրեն պարուրած վախն աստիճանաբար անհետանում է, տեղը զիջելով չափած-ձևած գործողությունների:

Աղետի լուրը տարածվել էր Երևանում. շտապ օգնության բազմաթիվ մեքենաներ շրջապատել էին լիճը, վեր բարձրացվողներին արհեստական

շնչառություն էին տալիս, ներարկումներ անում: Շավարշի հայրը, մի կերպ անցնելով իրավապահների օղակից ներս և նայելով որդու ապակուց բզկտված մարմնին, հասկանում էր, որ միայն արյան կորստի պատճառով անգամ տղան կարող է կյանքը կորցնել, սակայն մյուս կողմից գիտակցում էր, որ այդ աշխատանքը կարող էր անել միայն իր որդին, որ նախախնամությամբ հայտնվել էր դեպքի վայրում:

Շավարշի հերթական սուզումներից մեկը սովորականից երկար տևեց: Վայրկյաններն անցնում էին, իսկ նա չկար, անցավ ևս կես րոպե, չկար ու չկար: Վայրկյանները հավերժություն էին թվում… Հայրը չդիմացավ, նետվեց ջուրը, եղբայրը հետևից, վերջապես երևաց Շավարշը, այս անգամ նույնպես հաղթեց մահին… Հետագայում պարզվեց, որ ջրի տակ այդ անգամ նա կորցրել է գիտակցությունը, և միայն սուզալողորդի մասնագիտական պատրաստվածությունն է ավտոմատիզմի նման նրան վեր բարձրանալու ուղուն բերել….

44 րոպե բազմաթիվ անգամներ սուզվել-բարձրանալուց հետո (մի անգամ էլ արդեն կիսատենդային վիճակում փափուկ նստարանն էր մարդու տեղ բարձրացրել) վերջին անգամ Շավարշը ճոպանն իջեցրեց ջրի տակ ու դրանով կապեց տրոլեյբուսը, որպեսզի այն դուրս քաշեին ջրից: Երբ նա ափ դուրս եկավ, արյունահոսում էր, ջերմությունն աստիճանաբար բարձրանում էր, ստամոքսում այրոց ուներ և գլխապտույտ: Նրան մեքենայի հետևի նստատեղին պառկեցրած հասցրեցին տուն, որտեղ դեռ երկար պետք է բուժեին….



Շավարշ Կարապետյանի անձնուրաց արարքի շնորհիվ փրկվեց 20 մարդկային կյանք… Շավարշը պարգևատրվեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ‘Պատվո նշան’ շքանշանով, ՅՈՒՆԵՍԿՕ-յի ‘Ֆեյր փլեյ’ ‘արդար խաղ’ մրցանակով՝ օլիմպիական շարժման հիմնադիր Պյեր դը Կուբերտենի անվան գավաթով: Ի վերջո, Շավարշի անունով կոչվեց փոքր մոլորակներից մեկը՝ 3027-ը, որը պտտվում է Արեգակի շուրջը նրանից 400 միլիոն կիլոմետր հեռավորության վրա՝ մեկ պտույտն իրականացնելով չորս ու կես տարում:

Երբ Շավարշի արարքն անվանեցին հերոսություն, սխրանք, նա պատասխանեց. ՝Դուք, լրագրողներդ, հաճախ հերոսություն եք անվանում պարզապես մասնագիտական պարտքի ազնիվ կատարումը: Ես ուժեղ ստորջրյա լողորդ էի և պատահականորեն հայտնվել էի դեպքի վայրում: Մտածում եմ, որ այդ աշխատանքը կարող էի կատարել միայն ես: Իսկ եթե կարող էի, ուրեմն պարտավոր էի անել: **Ահա և ողջ փիլիսոփայությունը:** *Ալեքսանդր Դյումա-Որդու մոտ հանդիպել եմ հետևյալ մտքին. "Պարտքը կատարելը երբեմն տանջալից է լինում, բայց առավել տանջալից է այն չկատարելը՝: Ինչպե՞ս կարող էի չմտնել ջուրը…* Միայն ափսոս, որ փրկարարների ակվալանգներում օդ չկար: Ով գիտի, գուցե կարողանայի բոլորին փրկել…":

(Շարադրված է ըստ Վադիմ Լեյբովսկու ՝Շավարշի քսան կյանքը՝ գրքի, Մոսկվա, 1998, ռուսերեն)

Հարցեր մտորելու համար.

1. Նշեք այն բոլոր առավելությունները, որը հասարակությանը տվեց Շավարշն իր արարքով:
2. Նշեք այն բոլոր դժվարությունները, որոնք նա ստիպված էր հաղթահարել:
3. Ինչպե՞ս գնահատվեց հասարակության կողմից այդ արարքը: Դուք ինչպե՞ս կգնահատեիք, եթե լինեիք իրավասու անձ:
4. Շավարշն իր արարքն անվանում է պարտքի կատարում, դուք համաձա՞յն եք նրա հետ. սխրա՞նք, թե՞ պարտքի կատարում:
5. Ինչպե՞ս կմեկնաբանեք Դյումա-Որդու միտքը՝ բարոյական պարտքի մասին:
6. Ի՞նչ սովորեցրեց ձեզ այս պատմությունը:

ԾԱՆԻ՛Ր ՁՔԵԶ

Դիտարկեք, թե վերջին մեկ ամսվա ընթացքում ինչպես եք իրականացրել Ձեր պարտականությունները և լրացրեք հետևյալ աղյուսակը: Ձախ սյունակում նշեք պարտականության անվանումը (օրինակ՝ հաց գնել, փոքր եղբորը կամ քրոջը մանկապարտեզից տուն տանել, դասերին պատրաստվել, հետազոտություն անցկացնել և այլն), իսկ աջ կողմում յուրաքանչյուր պարտականության կատարմանը տվեք համապատասխան գնահատական:

Պարտականություններ	Ինքնագնահատականներ			
Տանը	Լիովին գոհ եմ	Կարող էի ավելի լավ կատարել	Թերացել եմ	Ընդհանրապես չեմ կատարել
……				
……				

Դպրոցում				
……..				
……..				
Ընկերական միջավայրում				
…….				
……				
Այլուր ……..				
…….				
……				

- Եթե ունեք պարտականություններ, որ թերացել կամ ընդհանրապես չեք կատարել, պլանավորեք դրանք կատարել գոնե առաջիկա ամսվա ընթացքում:
- Կարող եք նաև դիտարկել, թե Ձեր ընտանիքում, օրինակ, պարտականություններն ինչպես են բաշխված. Կա՞ մեկը, որ շատ պարտականություններ ունի, մինչդեռ մյուսը՝ համարյա ոչ մի: Ի՞նչ կարելի է անել իրավիճակի բարելավման համար:

ԴԱՍ 13. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ: ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Դասի նպատակը

Այս դասն ուսումնասիրելով՝ Դուք կամբողջացնեք արդարության մասին Ձեր ունեցած պատկերացումները, կկարողանաք հիմնավորել արդարության կարևորությունը մեր հասարակությունում և տարբերակել արդարության բարոյական և իրավական կողմերը:

ԸՆԹԵՐՑԵ'Ք ՏԵՔՍՏԸ

Արդար դատե, չէ վուր թաքավուր իս դուն…
Սայաթ-Նովա

Արդարությունը բոլոր առաքինություններից բարձրագույնն է...
Ցիցերոն

Արդարության գաղափարը նույնքան հին է, որքան մարդկությունը: Պատահական չէ, որ մարդուն բանական և սոցիալական էակ անվանելուց բացի կոչում են նաև բարոյական էակ: Վաղնջական ժամանակներում արդեն իր առջև բարոյական խնդիրներ դնող մարդը հանգել է արդարության գաղափարին: Սակայն այնքան էլ հեշտ չի եղել բացատրել, թե ինչ է արդարությունը, և այն, թե ինչպես հետևել դրան: Պարզվել է, որ արդարությունն ընկալվում է տարբեր կերպ. աղքատի համար այն մի բան է, հարուստի համար՝ մեկ այլ բան, զավթող ցեղերի համար այն մի իմաստ ունի, խաղաղ կյանքով ապրողների համար՝ այլ, տղամարդկանց համար այն մեկ իմաստ ունի, կանանց համար՝ մեկ ուրիշ և այլն: Դարեր ի վեր մարդկությունը խորհել է այս առեղծվածի շուրջ. մի՞թե արդարությունը մեկ-միասնական չէ բոլորի համար:

Ի պատիվ մարդկային հասարակության՝ պետք է նշել, որ մարդկությունը ձգտել է ավելի ու ավելի արդարացի ինքնակազմակերպման: Մի շարք երևույթներ, ընդունվելով որպես անարդարացի ու անհիմն, մերժվել ու մերժվում են մարդկության պատմության ընթացքում: Օրինակ՝ ռասայական, տարիքային, սեռային խտրականությունները, մարդու արժանապատվությունը նսեմացնող պատիժները և այլն: Այլևս չկան հասարակություններ, որոնցում, ասենք, կենդանի մարդու գանգամաշկը հանելը կարող է դիտվել որպես ընդունելի երևույթ, ընդհակառակը՝ այսօր դա կհամարվի վայրենի դաժանություն: Սակայն հասարակության զարգացումն իր հետ բերում է արդարության հետ առնչվող նորանոր խնդիրներ: Այնպես որ կատարյալ արդարությունը դեռևս անհասանելի է:

Այնուամենայնիվ, իրողություն է այն փաստը, որ սոցիալական հաստատությունները գնահատվում և ինքնագնահատվում են արդարության տեսանկյունից: *Եթե ճշմարտությունը մտածողության առաքինությունն է, ապա արդարությունը՝ սոցիալական հաստատությունների*: Եվ անկախ այն բանից, թե օրենքներն ու սոցիալական հաստատությունները որքան արդյունավետ ու լավ են կազմակերպված, դրանք պետք է վերափոխվեն, կամ նույնիսկ վերացվեն, եթե անարդար են: **Արդարացի հասարակության մեջ** *մարդկանց ազատություններն ու*

իրավունքները չեն կարող լինել քաղաքական սակարկումների առարկա: Անշուշտ, կլինեն և թերություններ, սակայն դրանց առկայությունը կարող է արդարացվել միայն այն բանով, որ ավելի արդարացի լուծումներ մարդկությունն այս փուլում դեռ չի գտել, բայց եղած համակարգը թույլ է տալիս խուսափել ավելի մեծ անարդարությունից:

Քանի որ հասարակության մեջ չկա արդարության միասնական ընկալում, որոշ մտածողներ առաջարկում են **արդարությունը** *համարել այն ընդհանուրը, որը կարող է լինել արդարության մասին հասարակության մեջ առկա բոլոր պատկերացումներում:* Իրոք, երևի թե շատ հիմնարար հարցերում մարդիկ կարող են ընդհանուր հայտարարի գալ այն մասին, թե ինչն է արդար, ինչը՝ ոչ: Հասարակությունը կունենա արդարության ընդհանուր ընկալում, երբ՝ ա) յուրաքանչյուր ոք կընդունի և կճանաչի, որ մնացած բոլորն ընդունում ու ճանաչում են արդարության նույն հիմնական սկզբունքները, բ) հիմնական սոցիալական հաստատություններն ու օրենքները բավարարում են վերոնշյալ սկզբունքներին և առաջնորդվում են դրանցով:

Արդարությունը հասարակության կողմից պաշտպանության առարկա է, և արդարացի է այն հասարակությանը, որում ստեղծվել ու գործում են արդարությունը ապահովող ու պաշտպանող հաստատություններ: *Արդարությունը պահպանվում է նախնառաջ* **բարոյականությամբ՝ խղճով**: Բարոյական արժեքները մարդիկ սերնդե-սերունդ փոխանցում են միմյանց, դրանով իսկ բացառելով արդարության մի շարք խախտումներ: *Սակայն մարդկությունը դեռևս չի կարողանա միայն բարոյականության միջոցով պահպանել արդարությունը, և դրա համար ստեղծված են **իրավական միջոցներ**, որոնք հանդես են գալիս այն ժամանակ, երբ բարոյական նորմերն ի վիճակի չեն կանխել անարդարությունը:* Արդարության պահպանման կամ վերականգնման համար կարևոր է արդարադատության նշանակությունը: ***Արդարադատությունը*** *իրավաբանական կատեգորիա է, որը նշանակում է պետական գործունեության այն ձևը, որի միջոցով դատական իշխանությունները վերականգնում են խախտված իրավունքները և լուծում վիճելի հարցերը*: Ըստ ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միմիայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Սակայն մարդիկ արդար դատելու, արդար որոշումներ կայացնելու կարիք են ունենում ոչ միայն դատարանների հետ կապված խնդիրներում: Օրինակ՝ բուհական ընդունելության քննություններում դա վերաբերում է բաշխման արդարությանը. չէ՞ որ առանձին մարդիկ չեն կարող ապահովել արդարություն բոլոր դիմորդների համար, եթե գործող համակարգը անկատար է և հող է ստեղծում անարդարության համար: Նմանատիպ օրինակներ կարելի է շատ բերել: Կարևորն այն է, որ և՛ ընտանիքում, և՛ դպրոցում, և՛ այլուր մենք՝ բոլորս սպասում ենք արդար վերաբերմունքի, սա նշանակում է, որ արդարությունը, լինի դա գիտակցված, թե ոչ, հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների հիմք:

Հարցեր մտորելու համար

- Ի՞նչ եք կարծում, պատմական դարաշրջաններից ո՞րն է արդարության առումով ամենակատարյալը:
- Կուզենայի՞ք ապրել անցյալում: Ո՞ր դարում: Ինչու՞: Ի՞նչ եք կարծում, արդարության հետ կապված ինչպիսի հարցեր կծառանային ձեր առջև:

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է արդարությունն ու անարդարությունը ըստ ստրուկի:
- Արդարությունը առավելապես բարոյակա՞ն հասկացություն է, թե՞ իրավական: Ինչու՞:
- Ի՞նչ եք կարծում, ինչու՞ միայն բարոյականությամբ մարդիկ չեն կարողանում պահպանել ու վերականգնել արդարությունը:
- Ի՞նչ է նշանակում հասարակության արդարացի ինքնակազմակերպում:
- Ե՞րբ են սոցիալական հաստատություններն ու օրենքները համարվում արդարացիորեն կազմակերպված:
- Ի՞նչ է արդարադատությունը:
- Ի՞նչ ոլորտներում կարելի է առնչվել արդարադատության հետ կապված խնդիրների:
- Արդյո՞ք ժողովրդավարական հասարակությունը արդարացի հասարակություն է: Ինչու՞:

Առաջադրանք

Մեկնաբանեք հետևյալ սխեման: Ի՞նչ եք կարծում, կշեռքի ո՞ր նժարը պետք է ծանր լինի: Իսկ գուցե դրանք պետք է հավասարակշռե՞ն միմյանց:

- Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է ապրել միայն բարոյական նորմերով:
- Ի՞նչ եք կարծում, մարդկային հարաբերությունները կարգավորելու համար ո՞ր նորմերն են առավել ազդեցիկ՝ բարոյակա՞ն, թե՞ իրավական: Ինչու՞:
- Գրեք հետևյալ պատմվածքի շարունակությունը.

՝Մի օր ես պատահաբար հայտնվեցի մի երկրում, որտեղ լիակատար արդարություն էր տիրում: Այնտեղի բառարաններում չկային կեղծիք, խարդախություն, սուտ, անարդարություն, հանցագործություն և նման բառեր....՝:

Ի՞նչ եք կարծում, մարդկությունը երբևէ կհասնի՞ դրան: Հնարավո՞ր է նման իրավիճակ: Եթե ոչ, ինչու՞:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Հնուց ի վեր արդարության խնդիրը դիտարկվել է բարոյական հարթությունում, իսկ հետո աստիճանաբար իրավական մտածողության զարգացմանը զուգաեռ արդարությունը սկսել է դիտարկվել նաև որպես իրավական հասկացություն: Հին հույն իմաստասեր Պլատոնը արդարությունը համարում էր մարդկանց միջև լավ հարաբերություններ հաստատելու ամենակարևոր սկզբունքներից մեկը: Ըստ նրա, արդարությունը այլ մարդկանց հետ վարվելու ճշմարտացիությունն է, մարդուն բնորոշ հոգևոր հատկանիշ՝ առաքինություն: Արիստոտելը տարբերակում է բաշխող և ավասարեցնող արդարություն, որոնց մասին խոսք կլինի հաջորդ դասում: Բաշխող արդարության դեպքում բարիքները բաշխվում են բոլորին՝ առանց հաշվի առնելու նրանց յուրակերպությունները: Իսկ հավասարեցնող արդարության դեպքում, ըստ Արիստոտելի, բաշխումը կատարվում է՝ հաշվի առնելով մարդկանց տարբերություններն ու նմանությունները: Առավել արժանիները ստանում են ավելի շատ:

- Ի՞նչ եք կարծում, ո՞ր մոտեցումն է առավել արդարացի: Ինչո՞ւ:

Միջնադարի հայ մեծ իմաստասեր Դավիթ Անհաղթը հետևում է Պլատոնի մոտեցմանը. նա արդարությունը համարում է առաքինություն, ընդ որում, առաքինություններից ամենակարևորը: "*Պետք է գիտենալ, - ասում է նա,- որ թեև հոգին երեք մասերից է բաղկացած, որովհետև ունի բանականություն, ցասում (հույզեր) և ցանկություն (կամք), հոգեկան առաքինությունները չորսն են՝ արիություն, արդարություն, խոհականություն, ողջախոհություն: Եվ դա իրոք այդպես է, քանի որ պետք է հոգու ամեն մի մաս զարդարել նրան բնորոշ առաքինությամբ: Այսպես, բանական մասը պետք է զարդարել խոհականությամբ, ցասմականը՝ արիությամբ, իսկ ցանկականը՝ ողջախոհությամբ: Բայց քանի որ հոգու յուրաքանչյուր մաս ոչ միայն պետք է զարդարել նրան բնորոշ առաքինությամբ, այլև նրանց միջև համապատասխանություն և ներդաշնակություն հաստատել, այդ իսկ պատճառով նրանց բոլորին ներթափանցում է արդարությունը, որպեսզի ոչ միայն մեկում, այլև բոլոր մասերում պահպանվեն համապատասխանությունն ու ներդաշնակությունը…*

Արդարությունն ավելի բարձր է դասվում, քան մյուս առաքինությունները՝ որպես մյուսների մեջ ներթափանցող և նրանց միջև ներդաշնակություն պահպանող":

(***Դավիթ Անհաղթ***, "*Փիլիսոփայության սահմանումները*", Պրակ Ժ)

Հարցեր մտորելու համար

- Ի՞նչ եք կարծում, իրավական հարաբերությունների կարգավորմամբ արդարության բարոյական գաղափարը հնացե՞լ է, թե՝ ոչ: Ինչո՞ւ:
- Դավիթ Անհաղթի թվարկած առաքինությունները ցանկալի՞ են արդյոք ժամանակակից մարդու համար, թե՝ ոչ: Ինչո՞ւ:
- Ինչո՞ւ է հայ մտածողը արդարությունը համարում մարդու ամենաբարձր առաքինությունը: Համաձա՞յն եք այդ մտքին, թե գուցե կան ավելի կարևոր առաքինություններ:

ԾԱՆԻ՛Ր ԶՔԵԶ

Մտաբերե՛ք վերջին շաբաթվա ընթացքում Ձեր ընդունած ամենակարևոր որոշումները ու փորձեք դրանք վերլուծել արդարության տեսանկյունից. արդարացի՞ են եղել, արդյոք, դրանք:

Այնուհետև վերլուծեք, թե, ըստ Ձեզ, անարդարության հանդիպելիս ինչպես եք վարվում.

- Փորձում եք ավելի լավ վերլուծել, հասկանալ դիմացինի տեսակետը:
- Անմիջապես բողոքում եք ու պահանջներ ներկայացնում:
- Բռնկվում եք ու անցնում վիրավորանքների:
- Լռում եք ու համակերպվում:
- Առաջարկում եք փոխամաձայնության գալ ու ընդունելի լուծումներ գտնել միասին:

Վերլուծեք, թե անձամբ Ձեզ որ ոճն է բնորոշ: Այնուհետև մտորեք, թե որն է առավել ընդունելի, քննարկեք դասարանում և ընկերների հետ:

ԴԱՍ 14. ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ (բաշխման, ուղղման, ընթացակարգի)

Դասի նպատակը

Այս դասն ուսումնասիրելով՝ Դուք կկարողանաք ներկայացնել տարբեր բնագավառներում արդարության արտահայտման ձևերը: Ինչպես նաև կկարողանաք տարբերակել բաշխման, ուղղման և ընթացակարգի արդարությունները և վերլուծել դրանցից յուրաքանչյուրի կարևորությունը ժամանակակից հասարակության կյանքում:

ԸՆԹԵՐՑԵ'Ք ՏԵՔՍՏԸ

Արդարությունը կյանքի համար
նույնքան անհրաժեշտ է, ինչպես հացը...
Բյոռնե

Կյանքում բոլորս էլ երբեմն ստիպված ենք լինում ՝դատավորի՝ դեր կատարել, կշռադատել և գնահատել իրավիճակը, փաստարկել, թե ինչն է սխալ, ինչը՝ ճիշտ, ով է արդար, իսկ ով՝ մեղավոր: Անշուշտ, սա այնքան էլ դյուրին գործ չէ, և նման դեպքերում բոլորս էլ նեղն ենք ընկնում: Ընդհանրապես, արդարության հետ առնչվող հարցերը երբեմն լինում են խրթին, խճճված, բազմաբնույթ ու պահանջում են զգույշ վերլուծություն: Եվ որպեսզի որոշումը չվնասի ո՛չ տուժողին, ո՛չ էլ մեղավորին, նախ և առաջ հարկավոր է պարզել, թե կատարված դեպքը արդարության որ բնագավառի հետ է առնչվում:

Այդ բնագավառները երեքն են. բաշխման արդարություն, ուղղման արդարություն և ընթացակարգի արդարություն:

- **Բաշխման արդարություն**: Մենք գործ ունենք բաշխման արդարության հետ, եթե կարիք կա ինչ-որ բան բաժանել հասարակության անդամների միջև: Դրանք կարող են լինել որոշակի բարիքներ, գործողություններ, պարտականություններ ու անելիքներ, որոնք լավագույն դեպքում պետք է արդարացիորեն բաժանվեն խմբերի կամ անհատների միջև: Այդ գործողությունների կատարումը կարող է անհատներին բերել առավելություններ. նրանք կարող են պարգևատրվել դրանց լավ կատարման համար: Սակայն, մյուս կողմից, դրանք կարող են բեռ լինել մարդկանց համար, օրինակ՝ հարկերի բարձրացումը, որոշակի նպատակների հասնելու համար հանգստյան օրերին աշխատելը և այլն:

Բաշխման արդարության նպատակներից կարևորագույնն այն է, որ հասարակությունը ի վիճակի լինի իր անդամներին տրամադրել հավասար հնարավորություններ: Իհարկե, մարդիկ միմյանցից տարբերվում են, սակայն տարբերություններով հանդերձ, նրանք կարող են ունենալ այդ տարբերություններն իրականացնելու հավասար հնարավորություններ:

Բաշխման արդարության հետ կապված մի շարք խնդիրներում դժվար է միանշանակ պատասխան տալը, քանի որ ցանկացած որոշման դեպքում լինում են որոշումը ողջունողներ և դրանից դժգոհ մնացողներ:

- Ո՞ր սկզբունքով պետք է մարդիկ հարկեր վճարեն. ա) բոլորը պետք է վճարեն իրենց եկամուտների միևնույն տոկոսը, օրինակ, քսան տոկոսը: Այդ դեպքում մեծ եկամուտից մեծ թիվ կգանձվի, փոքր եկամուտից՝ փոքր: բ) բոլորից հարկի հավասար տոկոս գանձելը անարդարացի է, քանի որ մեծահարուստների համար եկամտի քսան տոկոս վճարելն, օրինակ, դժվար չէ, իսկ դժվարությամբ ծայրը ծայրին հասցնողների եկամտի քսան տոկոս վերցնելը վնասում է նրանց բյուջեն: Հետևապես, հարուստներից պետք է գանձել հարկի ավելի մեծ տոկոս:
- Արդյոք արդարացի՞ է, որ որոշ երեխաներ հաճախում են քաղաքային համայնքների մեծ դպրոցներ, որոնք հագեցած են ուսուցման համար անհրաժեշտ բազմազան պարագաներով, իսկ այլ երեխաներ հաճախում են իրենց, օրինակ, գյուղական համայքների աղքատիկ դպրոցներ, որոնցում հավասար կրթություն ստանալու հնարավորությունները սամանափակ են: Ի՞նչ անել բաշխման արդարության վերականգնման համար:
- Արդարացի՞ է, որ երեխաներ չունեցող մարդիկ վճարեն նույնքան հարկեր, որքան վճարում են երեխաներ ունեցողները, որոնց երեխաներն օգտվում են անվճար հանրակրթությունից և առողջապահական ծառայություններից:
- Ո՞վքեր պետք է նպաստ ստանան պետությունից և ի՞նչ չափով: Ինչպե՞ս որոշել այդ չափը:

Հարցերը շատ են ու բազմազան, և մարդիկ շարունակաբար փորձում են գտնել դրանց լուծումները հանրային քննարկումների, օրինաստեղծ գործունեության և այլ եղանակներով, որոնց մասին կծանոթանաք հաջորդ դասարաններում:

- **Ուղղման արդարություն:** Այս բնագավառում գործ ունենք այն դեպքերի հետ, երբ հասարակության որևէ անդամ կամ խումբ թույլ է տվել սխալներ կամ կատարել է այնպիսի արարքներ, որոնց հետևանքով վնաս է պատճառվել մյուսներին: Փորձելով արձագանքել նմանատիպ գործողություններին՝ հասարակությունը դիմում է ուղղման արդարությանը: Ուղղման արդարությունը կարող է անձից պահանջել վերադարձնել գողոնը, վճարել կամ հատուցել ուրիշին հասցրած վնասը, կամ էլ համապատասխան պատիժ կրել իրավախախտման համար:

Հասարակության մեջ կյանքը մարդկանց տարատեսակ հաղորդակցությունների, փոխհարաբերությունների, միմյանց հետ “տալ-առնելու” ամբողջություն է, որի ընթացքում երբեմն միտումնավոր կամ ակամա մարդիկ կարող են միմյանց վնաս պատճառել, խեղել մարմնապես կամ հոգեպես:

- Օրինակ, Ա քաղաքացին իր բնակարանը տվել է վարձակալելու ամսավճարի դիմաց, սակայն մի քանի օր անց տեղեկանում է, որ կենվորների մեղքով հրդեհ է եղել ու բնակարանը հիմնավին վնասվել է: Ինչպե՞ս ուղղել կատարվածը:
- Մեքենան վրաերթի է ենթարկել մի քաղաքացու, որը ծանր վնասվածքներով հայտնվել է հիվանդանոցում, այնինչ իր խնաքի տակ ուներ անչափահաս երեխաներ ու ծեր ծնողներ: Ինչպե՞ս հնարավորինս արդարացի շտկել եղածը:
- Գ քաղաքացուն զրպարտել են՝ արժանապատվությանը հասցնելով վնաս: Ո՞րը պետք է լինի ուղղման արդարության պահանջն այս դեպքում:

Ուղղման արդարությունը չի կարող լիովին վերականգնել կատարվածից առաջ եղած իրադրությունը, բայց հնարավորություն է տալիս կարելիի չափով շտկումներ անել եղածում: Եթե գողություն է կատարվել, պետք է վերադարձնել գողոնը, իսկ եթե այն փչացվել է, պետք է փոխհատուցել համարժեք գումարով և այլն: Սրանք ուղղման արդարության խնդիրներ են: Վերոնշյալ և նման իրավիճակներից շատերը նկարագրվում են օրենքներում, որոնցում տրվում են նաև ուղղման տանող միջոցառումները:

- Դուք հիշում եք, որ հնադարում ծառին վնասող մարդու կյանքով էին փոխհատուցում վնասը: Դա նրանց "ուղղման արդարության" պատկերացումն էր: Ներկայումս նման արարքի համար այլ պատիժներ են նախատեսվում:

Ուղղման արդարության խնդիրը չէ ամեն գնով վերականգնել իրերի նախկին վիճակը՝ չնայելով դրա համար "վճարվող գնին": ***Ուղղման արդարության*** *նպատակն է հնարավորինս արդարացի պատասխաններ գտնել կատարված դեպքերին՝ հաշվի առնելով առավել կարևոր արժեքները:*

- Գողության համար, օրինակ, որոշ հասարակություններում կտրում էին մարդու ձեռքը: Ի՞նչ եք կարծում, դա արդարացի պատիժ է, արդյոք այդ դեպքում ավելի մեծ արժեքը չի զոհաբերվում ավելի փոքր արժեքին:

- **Ընթացակարգի արդարություն**: Ընթացակարգը ինչ-որ գործընթացին տրվող ընթացքի պաշտոնապես սահմանված կարգն է: Որպես կանոն, ընթացակարգերը գրավոր ձևակերպվում են: Բայց կան նաև որոշ գործընթացներ, որոնց ընթացակարգերը սերնդե-սերունդ պայմանավորվածությունների, սովորույթների ուժով են պահպանվում: ***Ընթացակարգի արդարության*** *գաղափարը պահանջում է վերահսկել, թե ինչպես են տեղի ունենում մարդկանց դատելու, նրանց մասին տեղեկություններ հավաքելու, մեղավորությունը ապացուցելու և նրանց հանդեպ վճիռ կայացնելու գործընթացները:* Եթե դրանք տեղի ունենան անարդարացի մեթոդներով, ապա ընդունված վճիռը կարող է համարվել չեղյալ, իսկ գիտակցված անարդարություն գործելու դեպքում վճիռ ընդունողներն իրենք կարող են ենթակա լինել պատժվելու:

- Արդարացի՞ է, արդյոք, մարմնական կտտանքների ու տանջանքների միջոցով մեղադրվողին ստիպել ընդունելու իր մեղքը: Մտաբերեք Վ. Հյուգոյի "Փարիզի Աստվածամոր տաճարը" երկի հերոսուհուն, որը կտտանքներին չդիմանալով պատրաստ էր խոստովանել ցանկացած մեղքի մեջ: Ի՞նչ եք կարծում, որքանով են արժանահավատ նման կերպով կորզած "խոստովանությունները":

- Ի՞նչ եք կարծում, կարելի՞ է առանց հետաքննության, առանց ուսումնասիրելու մարդու մեղավորությունը, նրան կասկածելով սպանության մեջ միանգամից դատապարտել մահվան: Մտաբերեք Մայն Ռիդի “Անգլուխ ձիավորը” վեպի իրադարձությունները: Ի՞նչ եք կարծում այնտեղ կային ընթացակարգի խախտումներ:

Ընթացակարգի արդարությունն անհրաժեշտ է, որպեսզի արդարադատություն իրականացնողները չչարաշահեն իրենց տրված իշխանությունը և անարդարացի չվարվեն գործընթացում ներգրավված մարդկանց հետ: Արդի աշխարհում որևէ երկրում մարդու ազատությունների պահպանման մակարդակի ու որակի մասին կարելի է դատողություններ անել՝ ուսումնասիրելով տվյալ երկրի ընթացակարգերի արդարությունը:

Հարցեր մտորելու համար.

- Ի՞նչ է բաշխման արդարությունը, ո՞րն է նրա կարևորությունը հասարակության կյանքում:
- Ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ն կլինի կյանքն առանց ուղղման արդարության: Եղե՞լ է, արդյոք, նման փուլ մարդկության պատմության ընթացքում, ըստ Ձեզ:
- Ի՞նչ է վրեժը: Արդարության ո՞ր բնագավառին է այն առնչվում: Այն ընդունելի՞ է, թե՝ դատապարտելի: Ինչո՞ւ:
- Ի՞նչ է ընթացակարգի արդարությունը:
- ԲՈՒՀ կամ աշխատանքի ընդունվելու գործընթացներին ընթացակարգի արդարությունը վերոբերո՞ւմ է, թե՝ ոչ: Ինչո՞ւ:
- Ձեր դիտած ֆիլմերից կամ կարդացած գրքերից արդարության վերոնշյալ բնագավառներին վերաբերվող ի՞նչ օրինակներ կարող եք մտաբերել:

Առաջադրանք

Կարդացեք հետևյալ դեպքերի մասին և միասին որոշեք, թե արդարության որ բնագավառներին են դրանք առնչվում և որքանով: Յուրաքանչյուր դեպքի համար պատասխանեք վերջում տրված հարցերին:

- Մրցույթից հետո երեք մասնակիցներ մրցանակներ ստացան լավ ելույթի համար:
- Ուսուցիչը որոշ աշակերտների, որոնք չէին կատարել տնային առաջադրանքը, հանձնարարեց դասերից հետո մնալ դասարանում այն կատարելու համար:
- Որոշ երկրներում գողերին պատժում են մահապատժով կամ կտրել են տալիս նրանց ձեռքը:
- Անցյալում կանայք իրավունք չունեին տղամարդկանց հետ հավասար մասնակցել ընտրություններին:
- Երբ գողին բանտարկեցին խանութը թալանելու համար, դատարանը պաշտպան նշանակեց՝ մեղադրվողի շահերը դատաքննության ժամանակ ներկայացնելու համար:

- Երբ պարզվեց, որ A ֆիրմայի ծխախոտի գովազդով տարված կանայք հիվանդացել են քաղցկեղով, դատարանը վճիռ կայացրեց, ըստ որի A ֆիրման պարտավոր էր վճարել այդ կանանց բուժման հետ կապված ծախսերը:
- Որպեսզի ձեռք բերեք վարորդական իրավունք, դուք պետք է ունենաք համապատասխան գիտելիքներ երթևեկության կանոնների մասին, վարելու համապատասխան հմտություններ և որոշակի տարիք:
- Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բողոքարկվեց վերաքննիչ դատարանում և բեկանվեց, քանի որ կասկածյալի հանդեպ բանտարկելիս ու խուզարկելիս կիրառվել էին անօրինական գործողություններ:

Հարցեր մտորելու համար

- Ո՞ր օրինակներն էին վերաբերում արդարության միայն մեկ ոլորտի, որոնք՝ մի քանիսի:
- Ի՞նչ եք կարծում, արդյոք արդա՞ր էին վճիռները՝ բերված օրինակներում: Կարելի՞ է այդպես վարվել: Ինչու՞:
- Ի՞նչ նման իրավիճակների մեջ եք ընկել կամ եղել ականատես:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Արդարություն. արդյոք այն կա՞...

(մեջբերվում է Գրիգոր Գուրզադյանի՝ Տիեզերքը ափի մեջ՝ գրքից, Երևան, 1987, էջ 216-217)

Մեծ ընդվզում է ապրում Պասկալը արդարության մասին խոսելիս: Նա գտնում է, որ արդարությունը, ինչպես նաև ճշմարտությունը եղել է ու կմնա մարդու համար միշտ անհասանելի մի բան: Դա էլ հասցրել է մարդուն նողկալի վիճակի:

Երբ մարդը ենթարկվում է օրենքին, ապա նա ըստ էության ենթարկվում է երևակայական արդարությանը: Ի՞նչ է օրենքը: Օրենքը պարզ մի պայմանականություն է, որտեղից չի հետևում բնավ, որ օրենքն արդարություն է նաև: Օրենքի ծնվելը ունի շատ հասկանալի մի պատճառ. վստահության բացակայությունը մարդկանց միջև. մարդը մարդուն չի հավատում: Վստահության փոխարեն մարդու մեջ նստած է այդ հրեշը՝

կասկածամտությունը: Եվ որպեսզի համակեցությունը մարդկանց միջև դարձվի հնարավոր, հորինել են օրենքը: Օրենքի էությունն ինքը օրենքն է: Ենթարկվել ընդունված օրենքին՝ չի նշանակում դեռևս, որ այն արդարացի է ու բնական: Ճիշտ այնպես, երբ զինվորը ենթարկվում է հրամանատարին. նա կատարում է հրամանը ոչ այն պատճառով, որ հրամանը ճիշտ է կամ արդարացի, այլ որ այդպես է կարգը՝ պետք է կատարել հրամանատարի հրամանը: Ու վերջ: Ահա սրան է հանգում մեր երկրային խղճուկ արդարության ամբողջ իմաստը:

Պասկալը բերում է օրինակ. մի՞թե ճիշտ բան է, երբ երկրի ղեկավար է նշանակվում անշնորհքի մեկը սոսկ այն պատճառով, որ սա ազնվական ծագում ունի կամ դարձել է երկրի տիրակալ իր ճանապարհին կանգնածներին ճզմելու գնով: Չէ՞ որ այդ նույն մարդուն չէին դնի նավի կապիտան- այս դեպքում նավի խորտակվելը կդառնար անխուսափելի ու ակնհայտ: Եվ եթե երկրի ղեկավարի ընտրության հարցում մենք գնում ենք նման խեղկատակության, ապա դա չի՞ վկայում արդյոք մարդկային մտքի ու մտածելակերպի անուղղելի սահմանափակվածությունը:

Իհարկե, կարելի է համաձայնել, որ պետության ղեկավար պետք է դրվի ամենից խելացի և առավել բարյացակամ մարդը: Բայց ինչպե՞ս ընտրել այդ մարդուն: Ամեն փորձ այս առիթով անխուսափելիորեն կբերի մրցակցության հնարավոր և անհնարին հավակնորդների միջև: Մրցակցություն, որ կարող է վերածվել ու վեր է ածվում պատերազմի: Մինչդեռ տուժողը ժողովուրդն է: Ահա այսպես է ստեղծվում այն վիճակը, երբ մարդիկ, չհասկանալով իրար, ավելի ճիշտ՝ չուզենալով իրար հասկանալ, լսել արդարության ձայնը, հարկադրում են իրենց դիմել ուժին:

Եվ այսպես, եզրակացնում է Պասկալը, պետությունը չարիք է և նրա գոյության մեջ պետք է փնտրել ոչ բավականաչափ հիմնավորվածություն և ոչ էլ լիակատար արդարություն: Բայց այդ չարիքը անհրաժեշտություն է: Արդարությունը ձուլված է անարդարության հետ, ինչպես բանականությունը՝ երևակայության հետ, մարմինը՝ հոգու: Մարդկային արդարությունն ընկած է երկու ծայրահեղությունների միջև - անսահման բարու և անսահման չարի:

Հարցեր

- Ո՞վ է Բլեզ Պասկալը: Ի՞նչ գիտեք նրա մասին:
- Համաձա՞յն եք նրա մտքերի հետ: Որո՞նց հետ:
- Ի՞նչ եք կարծում, եթե նա ապրեր 21-րդ դարում, արդյոք կմտածեր նու՞յն կերպ: Ինչու՞:
- Ի՞նչ է նշանակում, ձեր կարծիքով, 'Պետությունը անհրաժեշտ չարիք է' արտահայտությունը: Համաձա՞յն եք այդ մտքին: Հիմնավորեք ձեր տեսակետը:
- Բերված հատվածում կա՞ն մտքեր, որոնց հետ ոչ մի կերպ չեք կարող համաձայնել: Որո՞նք են: Ինչու՞:

ԴԱՍ 15. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Դասի նպատակը

Այս դասն ուսումնասիրելով՝ դուք կհասկանաք, որ մարդիկ որոշ բաներով նման են, որոշ բաներով տարբեր: Կհասկանաք նմանությունների և տարբերությունների առնչությունը հավասարության խնդրին: Կիմանաք իրավահավասարության և սոցիալական հավասարության մասին: Ձեր գիտելիքները կկիրառեք կոնկրետ իրավիճակներում

Ընթերցե՛ք ստորև բերվող Ա և Բ հարցաշարերը և պատասխանեք՝ այո կամ ոչ:

Ա հարցաշար

1. Արդյո՞ք դուք այցելել եք արտերկիր:
2. Սիրո՞ւմ եք մարզական խաղեր:
3. Երաժշտական գործիք նվագո՞ւմ եք:
4. Արդյո՞ք ձեր աչքերը սև են:
5. Արդյո՞ք քո երկու պապիկները ողջ են:
6. Արդյո՞ք դու կրում ես ակնոցներ:
7. Արդյո՞ք սիրում եք այցելել գյուղեր:
8. Արդյո՞ք դու լռակյաց մարդ ես:
9. Արդյո՞ք քո հասակը բարձր է:
10. Դուք շուտ եք մրսում:
11. Արդյո՞ք սիրում եք ճամփորդել:
12. Արդյո՞ք սիրում եք այցելել վարսավիրի մոտ:
13. Արդյո՞ք սիրում եք համակարգչով աշխատել:
14. Արդյո՞ք շագանակագույնը գերադասում եք սև գույնից:
15. Արդյո՞ք սիրում եք նկարել:

Բ հարցաշար

1. Արդյո՞ք դուք միշտ երջանիկ եք:
2. Արդյո՞ք դուք ունեք եղունգներ:
3. Արդյոք դու կարող ես թռչել թռչունի նման:
4. Արդյո՞ք դու կարող ես ապրել առանց հեղուկ խմելու:
5. Արդյո՞ք դու շնչում ես:
6. Արդյո՞ք դուք ունեք զգացմունքներ:
7. Արդյո՞ք դուք խուսափում եք մարդկանց հետ զրուցելուց:
8. Արդյո՞ք երբեմն հոգնում եք:

Ներկայացրեք ձեր պատասխանները և գտեք երկու հարցաշարերի միջև տարբերություն։

Նշեք երեք իրավիճակ, որում ձեզ համար հաճելի է նմանվել այլ մարդկանց։ Պատասխանը հիմնավորեք։

Իրավիճակ, որում ձեզ համար հաճելի է նմանվել այլ մարդկանց	Ինչո՞ւ
1.	
2.	
3.	

Նշեք երեք իրավիճակ, որում ձեզ համար հաճելի է տարբերվել այլ մարդկանցից։ Պատասխանը հիմնավորեք։

Իրավիճակ, որում ձեզ համար հաճելի է տարբերվել այլ մարդկանցից	Ինչո՞ւ
1.	
2.	
3.	

Նշեք մարդկանց խմբեր, որոնց վատ են վերաբերվում

Մարդկանց խմբեր, որոնց վատ են վերաբերվում	Ովքեր են վատ վերաբերվում
1.	
2.	
3.	

Ընթերցե՛ք տեքստը

Հավասարությունը հասարակական կյանքի ամենանուրբ հարցերից է։ Բազմաթիվ պատերազմների, ապստամբությունների, դժգոհությունների առիթը հավասարության պահանջն է եղել։ Մարդկանց համար շատ կարևոր է հավասարությունը։ Բայց մյուս կողմից, հնարավոր չէ լիակատար հավասարություն, քանի որ մարդիկ տարբեր են իրենց կարողություններով, աշխատասիրությամբ, ձգտումներով։

Մի կողմից օրական 10 ժամ աշխատող, մյուս կողմից, 2 ժամ աշխատող մարդիկ չեն կարող հավասար լինել։ Լիակատար հավասարությունը շատ հաճախ անարդար է։ Հետևաբար, շատ հաճախ անհավասարությունները միանգամայն ընդունելի են։

Այդուհանդերձ, որքան էլ մարդիկ տարբեր են, կան ոլորտներ, որոնցում մարդիկպետք է լինեն լիակատար հավասար։ Օրինակ՝ հավասար իրավունքներ։ Բոլոր մարդիկ՝ անկախ սեռից, ռասսայից, ազգությունից, նյութական վիճակից պետք է լինեն իրավահավասար։ Մեկ այլ օրինակ է հնարավորությունների հավասարությունը։ Բոլոր երկրներում կան բարձրակարգ դպրոցներ, համալսարաններ, որոնցում գործող ուսումնական վարձերը մատչելի չեն հասարակության զգալի խավերին։ Բայց դա չի նշանակում, որ պետությունը չպետք

է մտածի այդ խավերին այլ դպրոցներում ու համալսարաններում բարձրորակ կրթական ծառայություններ մատուցելու մասին։



Շատ կարևոր պահանջ է նաև սոցիալական հավասարությունը։ Այն հասարակությունը, որտեղ մարդիկ չեն կարողանում լիարժեք զարգացնել իրենց ներուժը ազգայական կամ ռասսայական պատկանելության, սեռի, կրոնի պատճառով, չունի զարգացման որևէ հեռանկար։ Որքան ավելի քիչ է բևեռացված հասարակությունը, որքան ավելի քիչ է տարբերությունը հարուստների և աղքատների միջև, այնքան ավելի առողջ է հասարակությունը։

Ընթերցե՛ք ստորև բերվող պատմությունը և կատարեք հաջորդիվ տրվող առաջադրանքը

Կղզու սեփականատերը հնարավորություն տվեց նավաբեկությունից փրկված 13 մարդկանց ապրել իր կղզում։

Փրկվածներից էր Վիկտորը, իր հղի կնոջ և մանկահասակ երկու երեխաների հետ։ Մյուսը 64-ամյա Արթուրն էր, որը մեծահարուստ էր և խմբի ամենածեր անդամը։ Նա իր հետ ուներ զգալի ադամանդեղեն և ոսկյա զարդեր։ Աննան, Լևոնը, Գևորգը և Արուսյակը երիտասարդներ էին, որոնք առողջ են և ունեն բազմաթիվ

հմտություններ։ Նախկինում նրանք վերանորոգել են բազմաթիվ կացարաններ։ Մարիան իրավաբան է, դասավանդում է համալսարանում և ունի ֆիզիկական հաշմանդամություն։ Նա շատ դանդաղ է քայլում՝ ոտքերի հետ կապված խնդրի պատճառով։ Նրան ուղեկցում է իր օգնականը՝ Մարկը։ Վերջապես խմբում է նաև նավի անձնակազմի անդամներից մեկը՝ իր ընկերուհու հետ։ Նա նավաբեկության պահին կարողացել էր հափշտակել զգալի գումարներ և սննդի պաշարներ։
Կղզում կա մի խարխուլ տնակ, որը վերանորոգման կարիք ունի։ Այն ունի մեկ սենյակ և կարող տեղավորել 2-3 մարդ։

Առաջադրանք

Ձեր կարծիքով, ում պետք է հատկացվի տնակը

1. Հղի կնոջը և մանկահասակ երեխաներին։
2. Չորս ընկերներին, ովքեր կարող են կարգի բերել տնակը։
3. Խմբի ամենատարեց անդամին, ով պատրաստ է վճարել։
4. Իրավաբան դասախոսին, ով ունի ֆիզիկական հաշմանդամություն և կարող է իրավական լուծումներ տալ խմբի անդամների միջև ծագող վեճերին։
5. Նավի անձնակազմի անդամին՝ պայմանով, որ նա իր մոտ եղած սնունդը կիսի խմբի մյուս անդամների հետ։

ԴԱՍ 16. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դասի նպատակը

Այս դասի ընթացքում դուք կքննարկեք “հանդուրժողականություն” հասկացությունը, անհանդուրժողականության դրսևորումները: Կարտահայտեք Ձեր դիրքորոշումն այս կամ այն երևույթը հանդուրժելու կամ չհանդուրժելու վերաբերյալ:

Առաջադրանք

Ավարտեք հետևյալ նախադասությունը.
“Երբ ես ասում եմ հանդուրժողականություն, ես հասկանում եմ …”:
Ձեր կարդացած գրքերից, դիտած ֆիլմերից, մուլտֆիլմերից բերե՛ք հանդուրժողականության կամ անհանդուրժողականության օրինակներ:

Արտահայտե՛ք ձեր դիրքորոշումը (համաձայն եմ կամ համաձայն չեմ) հետևյալ տեսակետների շուրջ.

1. Մարդկանց հնարավոր չէ հանդուրժողականություն սովորեցնել, քանի որ դա բնավորության գիծ է:
2. Հանդուրժողականությունը պետք է կարգավորվի ավանդույթներով, այլ ոչ թե օրենքներով:

Առաջադրանք

Ստորև բերվում են անհանդուրժողականության դրսևորումներ և հարցեր, որոնք կօգնեն ավելի լավ պատկերացնել այդ երևույթը: Ուշադիր ընթերցեք և նշեք անհանդուրժողականության այն դրսևորումները, որոնք առավել հաճախակի են հանդիպում ձեր միջավայրում:

Լեզուն - Աշակերտներն ինչպե՞ս են անվանում իրար, ինչպե՞ս են դիմում միմյանց: Արդյոք օգտագործու՞մ են վիրավորական մականուններ, դրանք գրու՞մ են դասագրքերի, սեղանների, պատերի վրա:
Ծաղրելը – Փորձո՞ւմ են աշակերտները ծաղրել ինչ-որ մեկին՝ նրա արտաքին տվյալների, ընտանեկան վիճակի, կյանքի պայմանների, գործած սխալների համար:
Օտարումը (օստրակիզմը) - Արդյոք դասարանում լինու՞մ են իրավիճակներ, երբ մեկ կամ մի քանի աշակերտների հետ չեք խոսում, նրանց չեք ներգրավում խաղերին ու միջոցառումներին: Ինչքա՞ն է դա շարունակվում: Օտարված աշակերտները փորձո՞ւմ են իրենց դասընկերներին ապացուցել, որ իրենք նման վերաբերմունքի

արժանի չեն: Օտարված աշակերտներին ընդունու՞մ են որպես “օտարական”, “խորթ”, թե՞ “ուրիշ”: Օտարվածները դասարանի նորեկնե՞րն են, թե՞ բնավորությամբ կամ սկզբունքներով տարբերվողները:
Վախեցնելը – Փորձո՞ւմ են առանձին աշակերտներ սպառնալ նրանց, ովքեր ավելի թույլ են: Արդյոք նրանք օգտագործու՞մ են իրենց դիրքը մյուսներին իրենց ուզածը անել տալու համար:

Լրացրե՛ք ստորև բերվող աղյուսակը՝ ձախ մասում նշելով երևույթներ, որոնք հանդուրժում եք, իսկ աջ սյունակում երևույթներ, որոնք չեք հանդուրժում: Ձեր տեսակետը ներկայացրեք դասարանին:

Կհանդուրժեմ	Չեմ հանդուրժի

Ընթերցե՛ք տեքստը

Հանդուրժողականության հիմնախնդիրը բխում է մարդկանց սեռային, ռասայական, ազգային, տարիքային, մտածողական, զգայական, արժեքային տարբերություններից: Ամբողջատիրական հասարակարգերում հանդուրժողականության խնդիր գոյություն չունի, քանի որ իշխանությունը սահմանափակում է մարդկանց անհատականությունը և դաժան հաշվեհարդար է տեսնում այլախոհության ցանկացած դրսևորման նկատմամբ: Արդյունքում, մարդկանց ճնշող մեծամասնությունը մտածում ու գործում է միատեսակ: Ամբողջատիրական հասարակարգը անհանդուրժողական է պարտադրված նորմերից ցանկացած շեղման նկատմամբ:

- Պատմությունից վերհի՛շեք ամբողջատիրական մի հասարակարգ և դրանում արտահայտված անհանդուրժողականության դրսևորումներ:

Ժողովրդավարական հասարակարգում ավելի մեծ հնարավորություններ են ստեղծվում մարդկանց անհատական դրսևորման համար: Սա նշանակում է, որ մարդկանց տարբերությունները ավելի ակնհայտ են դառնում: Մյուս կողմից, կապի միջոցների զարգացման արդյունքում ընդլայնվում են ազգամիջյան շփումները: Մարդիկ ավելի հաճախ են փոխում իրենց բնակության վայրը, այցելում այլ երկրներ, հանդիպում օտարերկրացիների: Այդ հանդիպումների ընթացքում դրսևորվում են մարդկանց ավանդույթների, սովորությունների, ապրելակերպի, մտածելակերպի

տարբերությունները:

Մարդկանց անհատականության ու ազգային ինքնության վրա հիմնված տարբերությունները կարող են նպաստել զարգացմանը, եթե դրսևորվի հանդուրժողականություն:

Շատ կարևոր է այն հարցը, թե հանդուրժողականությունը սահման ունի՞, թե՞ ոչ: Այսինքն, արդյոք կարելի՞ է ամեն ինչ հանդուրժել: Իհարկե՝ ո՛չ: Բայց ո՞րն է հանդուրժողականության սահմանը, ինչպե՞ս է այն որոշվում: Ճիշտ չէ կարծել, թե անհատներն են որոշում հանդուրժողականության սահմանը, քանի որ այդ դեպքում իշխանավորները, ազդեցիկ մարդիկ կամայականություն կդրսևորեն՝ հանդուրժելով իրենց համար ընդունելին, չհանդուրժելով՝ անընդունելին:

Դրա համար հանդուրժողականության սահմանը որոշվում է օրենքներով: Այսինքն, պետք է հանդուրժել այն, ինչը օրենքով թույլատրելի է, ինչը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների շրջանակներում է: Փոխարենը, անհանդուրժելի են այդ իրավունքների և ազատությունների ոտնահարումները: Իհարկե, լինում են դեպքեր, երբ առանձին մարդկանց համար անհանդուրժելի երևույթները օրենքով համարվում են հանդուրժելի: Այս դեպքում անձնային անհանդուրժողականությունը բախվում է իրավական հանդուրժողականությանը: Բնականաբար, երկրորդը գերիշխող դեր ունի: Հանդուրժողականության և անհանդուրժողականության միջև ընտրությունը առավել բարդ է, երբ բախվում են ազգային ավանդույթները և օրենքը: Այս խնդիրը հատկապես հրատապ է Հայաստանի նման երկրների համար: Շատ դեպքերում մեր ավանդույթները ազգային ինքնությունը պահելու լավագույն միջոցն են: Բայց կան ավանդույթներ էլ, որոնք իրենց դարն ապրել են:

Հանդուրժողականություն պետք է դրսևորեն հատկապես պետական, հասարակական-քաղաքական գործիչները: Բանն այն է, որ նրանց գործողությունները, որոշումները (ի տարբերություն շարքային քաղաքացիների) ազդում են ամբողջ հասարակության վրա: Հետևաբար, նրանք պետք է ավելի հանդուրժող լինեն մամուլի և հասարակության քննադատական մոտեցումների նկատմամբ:

Հանդուրժողականության և անհանդուրժողականության միջև ընտրության խնդիրը առանձնակի սրությամբ չի դրվի, եթե մարդիկ իրենց վարքագծում լինեն չափավոր, օրինապահ:

Չափավորությունն ընդունենք որպես սեփական ապրելակերպի նորմ, հանդուրժողականությունը՝ որպես վերաբերմունք ուրիշների նկատմամբ: Հանդուրժողականությունն ընդունենք որպես այլ մշակույթը, և ուրիշներին ճանաչելու ու հարգելու միջոց, իսկ չափավորությունը՝ որպես հակադրություն չառաջացնելու միջոց: Եթե չափավորությունն ու հանդուրժողականությունը չհամատեղվեն, ապա մարդկությունը անլուծելի խնդիրների կբախվի:

Այս ամենից հետո փորձենք հասկանալ հանդուրժելու և չհանդուրժելու տարբերությունը: Հանդուրժել չի նշանակում անտարբեր լինել, հաշտվել, կրավորական դիրք բռնել: Դա պարզապես նշանակում է ուրիշներին շնորհված իրավունքների և ազատությունների ճանաչում ու հարգում: Չհանդուրժել չի նշանակում վիրավորել, կոպտել, եսասիրություն դրսևորել, բռնություն գործադրել, ֆիզիկապես ոչնչացնել: Դա նշանակում է՝ օրենքի սահմաններում պայքարել ընդդեմ օրենքի ոտնահարման և հանուն ազգային ավանդույթների պահպանման: Դա նաև

նշանակում է անձնական օրինակելի կյանքով պայքարել բացասական երևույթների դեմ:

Հարցեր մտորելու համար

1. Ձեր կյանքում լինո՞ւմ են իրավիճակներ, երբ ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին ներքուստ չեք հանդուրժում, բայց արտաքուստ ցույցչեք տալիս:
2. Ի՞նչ կլինի, եթե հասարակության մեջ չլինի հանդուրժողականության մթնոլորտ:
3. Ինչո՞ւ է հանդուրժողականությունը կարևոր ժողովրդավարական հասարակությունում:

ԴԱՍ 17. Գործնական աշխատանք. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔ, ՊԱՀԱՆՋ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԸՆԹԵՐՑԵ՛Ք ՆՅՈՒԹԸ

- Ի՞նչ գիտեք քվեարկության մասին: Երբևէ քվեարկե՞լ եք: Եթե մասնակցել եք քվեարկության, գոհ եք եղել արդյունքներից: Ինչո՞ւ:

Մտածե՛ք այն մասին, թե մարդիկ ինչպես են որոշումներ ընդունում: Որոշում ընդունելու կարիք լինում է այն ժամանակ, երբ մարդիկ ունենում են այլընտրանքներ, որոնցից պետք է ընտրություն կատարեն. այսինքն, կարող են կամ մի կերպ վարվել, կամ այլ կերպ:

- Օրինակ, մայրիկը որդուն տվել է գումար, որպեսզի վերջինս տնօրինի ինչպես ցանկանա: Տղան մտածում է, որ կարող է վերջապես գնել հեծանիվի իր ուզած մոդելը: Շատ լավ: Բայց միայն դա չէ. նա կարող է դրա փոխարեն գնել լողավազանի մեկ տարվա աբոնեմենտ ու պարբերաբար գնալ լողի: Եվ ի վերջո, նա կարող է գումարը մասերի բաժանել ու ծախսել տարբեր նպատակների համար. դասարանով հաջորդ շաբաթ գնալու են արշավի, իսկ ինքը ուղեպայուսակ չունի: Գումարի մյուս մասից էլ կարող է քրոջ համար նվեր գնել, քանի որ մոտենում է նաև նրա ծննդյան օրը:

Եթե մարդը մենակ է, կարող է մտածել իր կայացնելիք որոշման լավ ու վատ կողմերի մասին, ապա ծանրութեթև անելով, որոշել, թե որ ընտրությունն է ամենալավը տվյալ հանգամանքներում: Կարող է նաև խորհուրդ հարցնել:

- Մեր օրինակի տղան կարող է խորհրդակցել ծնողների կամ ընկերների հետ, որից հետո միայն որոշել:

Եթե որոշումը պետք է կայացնել մի քանի հոգով, դարձյալ մտածում են հնարավոր այլընտրանքների մասին ու համատեղ փորձում գալ ընդհանուր հայտարարի:

- Օրինակ, ընտանիքը որոշում է՝ ինչ անել ամառային արձակուրդի ժամանակ: Հայրիկը ցանկանում է գնալ գյուղ՝ այցի իր ծնողներին, մայրիկը կնախընտրեր ծովափ մեկնելը, զավակները ցանկանում են գնալ ճամբար:

Նման դեպքերում յուրաքանչյուր կողմ ներկայացնում է իր առաջարկած այլընտրանքի առավելությունները և թերությունները , ապա համատեղ գալիս են որոշման:

- Վերոբերյալ օրինակի դեպքում հայրիկը կարող է նշել, որ իրենց աշնանը մեծ ծախսեր են սպասվում, դրա համար ծովափ գնալը կարելի է հետաձգել մյուս տարվան: Իսկ զավակները կարող են համաձայնել, որ տատիկին ու պապիկին տեսնելն ավելի լավ կլինի, քան այս տարի ճամբար գնալը: Եթե ընտանիքը նպատակահարմար գտնի ընտրել ճամբարի կամ ծովափի տարբերակները, կարող է նման որոշում կայացնել:

Ընկերական խմբերում, դասարանում և ավելի մեծ խմբերում այլընտրանքների առկայության դեպքում նույնպես նույն մեխանիզմը կարող է գործել.

- Նախ առաջ են քաշվում հարցի լուծման այլընտրանքային տարբերակներ,
- Ապա քննարկվում են այդ տարբերակների լավ ու վատ կողմերը և
- Վերջում ընդունվում է որոշում քվեարկության միջոցով:

Քվեարկությունը *այն գործընթացն է, որի ժամանակ որոշում ընդունող յուրաքանչյուր մասնակից արտահայտում է իր դիրքորոշումը՝ ձայն է տալիս:*

Նման դեպքերում ինչպե՞ս են քվեարկում սովորաբար: Որպես կանոն, ձեռք բարձրացնելով: Ովքեր կողմ են առաջին տարբերակին, ձեռք են բարձրացնում դրա համար, երկրորդ տարբերակի պաշտպանները՝ երկրորդի և այսպես շարունակ: Կարող են լինել նաև *ձեռնպահ* մասնակիցներ (այսինքն՝ ձեռքը պահած, ոչ մեկի օգտին չբարձրացրած), մարդիկ, որոնք տարբերակներից ոչ մեկին նախապատվություն չեն տալիս: Եթե կա մեկ ընտրություն, ապա կարելի է լինել դրան *կողմ, դեմ* կամ *ձեռնպահ*:

- Դուք ունեք մեկ ձայն, եթե կողմ եք տվյալ որոշմանը, ուրեմն այլևս դեմ կամ ձեռնպահ լինել չեք կարող: Նաև եթե ընտրել եք մեկ տարբերակ, մյուսների համար այլևս ձեռք բարձրացնել չեք կարող:

Քվեարկության ժամանակ մասնակիցները կարող են նաև իրենց ընտրությունը գրել թղթերի վրա ու նետել տուփի մեջ: Ձեռք բարձրացնելով քվեարկությունը ***բաց քվեարկություն*** է, քանի որ բոլորը տեսնում են, թե ամեն մեկն ինչպիսի ընտրություն է կատարել: Իսկ թերթիկների վրա գրելով քվեարկելու դեպքում կարելի է և բաց կերպով անել, և փակ: Եթե յուրաքանչյուր մարդ իր թերթիկի վրա գրում է իր անուն, ազգանունը, ապա՝ իր կատարած ընտրությունը, դա կլինի բաց քվեարկություն:Բայց կարելի է անել և ***փակ քվեարկություն***, այսինքն՝ թերթիկներում անուններ չեն նշվում և հետո ոչ ոք չի իմանա, թե որ տարբերակի օգտին կոնկրետ ով է քվեարկել:

- Ի՞նչ եք կարծում, ո՞ր դեպքերում արժե անցկացնել բաց, իսկ ո՞ր դեպքերում՝ փակ քվեարկություն:

Գրավոր քվեարկություն անցկացնելիս հաճախ նախապես պատրաստում են քվեարկության թերթիկներ: Ստորև տեսեք մտացածին առիթներով քվեարկության թերթիկների օրինակներ:

Քվեարկության թերթիկների նմուշներ.

1. Երևակայական պետության նախագահի ընտրության քվեաթերթիկ.

Թեկնածու	Նշում արեք այն թեկնածուի դիմացի վանդակում, ում ընտրում եք, մյուս վանդակներում նշումներ չպետք է լինեն
Խելամիտ Գիտունիկյան	
Հնարագետ Ժրաջանյան	

Կտրիճ Համարձակյան	
……..	
……..	

2. Դասարանով արշավի գնալու քվեաթերթիկ.

Որոշում	Նշում արեք այն վանդակում, որը համապատասխանում է Ձեր կամքին, մյուս վանդակներում նշումներ չպետք է լինեն		
Հունվարին գնալ արշավի Ձնաձոր	կողմ	դեմ	ձեռնպահ

Այն թերթիկները, որոնցում կա մի քանի նշում, համարվում են ***անվավեր***՝ անուժ, անօրինական:

Եթե քվեարկությունը փակ է, ոչ ոք չպետք է նայի, թե ինչպես է քվեարկում մյուսը: Երբեմն նման դեպքերում առանձին խցիկներ կամ սենյակներ են տրամադրվում, որտեղ քվեարկողները մտնում են միայնակ: Այնտեղ նրանց նկարահանել կամ գաղտնահսկել չի կարելի: Եթե ինչ-որ մեկը դժվարություն ունի, օրինակ, կարդալու կամ նշում անելու, նրա հետ կարող է լինել իրեն օգնող մեկը:

Արդեն նշում կատարած թերթիկները գցվում են հատուկ նախատեսված արկղիկի մեջ, որը պետք է լինի փակ, ցանկալի է՝ կնքված: Դասարանում կատարվելիք քվեարկության համար Դուք արկղիկը կարող եք “կնքել” պլաստիլինով կամ սոսնձած թղթով: Կնիքը բացվում է քվեարկության արդյունքները հաշվելիս դրա համար ընտրված հանձնաժողովի կողմից: Ապա հերթով նայվում են քվեաթերթիկները, որպեսզի անվավեր չլինեն ու գրանցվում են արդյունքները ստորև ներկայացված աղյուսակի նման աղյուսակում.

Թերթիկ	Ձայնը տրված է			Թերթիկն անվավեր է
	Խ. Գ.-ին	Հ. Ժ. -ին	Կ. Հ.-ին	
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				
ԸՆԴԱՄԵՆԸ				

Յուրաքանչյուր թեթիկի տողի դիմաց համապատասխան սյունակում կատարվում է նշում, իսկ ամենավերջում ընդհանուրի են բերվում արդյունքներն ու նշվում “Ընդամենը” տողում: Արշավի գնալու խնդրի դեպքում նույն կերպ թեկնածուների անունների փոխարեն կարելի է գրել “կողմ”, “դեմ”, “ձեռնպահ” բառերը:

Որոշում ընդունելու համար անհրաժեշտ է, որ քվեարկողների ուղիղ կեսն ու ևս մեկ ձայն լինեն կողմ տվյալ թեկնածուին կամ որոշմանը: Օրինակ, եթե քվեարկում եք քսան հոգով, տասնմեկ հոգին պետք է կողմ լինեն որոշմանը: Եթե թեկնածուներից ոչ մեկը չի հավաքում ընտրողների ձայների կեսից ավելին, առավելաքույն քվեներ ստացած երկու թեկնածուները կարող են անցնել հաջորդ փուլ: Այս փուլում հաղթող կհամարվի այն թեկնածուն, ով ուղղակի ավելի շատ քվեներ է ստացել:

Դուք ծանոթացաք քվեարկության ընթացակարգին: Քվեարկությունը համարվում է արդար, եթե ոչ մի կեղծում չի արվել ո՛չ քվեարկելիս, ո՛չ արդյունքները հաշվելիս և արդյունքները ամփոփելիս:

Նյութին ծանոթանալուց հետո փորձեք դասարանում անցկացնել քվեարկություն որևէ խնդրի շուրջ՝ ունենալով հետևյալ փուլերը.

1. Խնդրի ընտրություն
2. Թեկնածուների կամ լուծման ուղիների այլընտրանքների առաջադրում
3. Այլընտրանքների ներկայացում և առաջմղում (“քարոզարշավ”)
4. Քվեարկություն անցկացնելու և հաշվիչ հանձնաժողովի ընտրում (3 աշակերտ)
5. Քվեարկության անցկացում
6. Հաշվիչ հանձնաժողովի կողմից ձայների հաշվում և զեկույց
7. Անդրադարձ կատարվածին:

Անդրադարձ կատարելիս քննարկեք հետևյալ հարցերը.

- Քվեարկությունը ինչո՞ւ է համարվում իրավունք:
- Ո՞րն է ավելի արդյունավետ. որոշումներն ընդունել առանց քվեարկության, թե՝ քվեարկության միջոցով: Ինչո՞ւ:
- Ի՞նչ պատասխանատվություն են ձեռք բերում քվեարկողները:
- Կարևո՞ր է, արդյոք, որ քաղաքացիները մասնակցեն երկրի նախագահի կամ Ազգային ժողովի պատգամավորների ընտրություններին: Ինչո՞ւ:

ԳԼՈՒԽ 3. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 18. Ի՞ՆՉ Է ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒԺ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Դասի նպատակը

Սովորելով այս դասը՝ Դուք կկարողանաք վերլուծել “ուժ” և “իշխանություն” հասկացությունները, կհամեմատեք դրանք և կպատկերացնեք ուժի և իշխանության գործադրման տարբերությունները:

ԸՆԹԵՐՑԵ'Ք ՏԵՔՍՏԸ

…Էստեղ ի՞նչն է գլխավոր:
Ուժեղի մոտ միշտ էլ
Թույլն է մեղավոր…
Աթաբեկ Խնկոյան

- Մտորե՛ք դասի բնաբանի շուրջ: Գայլի և գառան կերպարներում ո՞ւմ նկատի ունի առակագիրը: Ի՞նչ եք կարծում, “Գայլն ու գառը” ինչի՞ շնորհիվ է արժանացել ժողովրդի հավանությանը: Համաձա՞յն եք, որ ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր, ինչո՞ւ…

Զարմանալի կարող է թվալ, որ հասարակագիտության դասընթացում նույնպես հանդիպում եք ֆիզիկայից Ձեզ այնքան ծանոթ “ուժ” հասկացությանը: Բայց պարզվում է, որ ուժերը գործում են ոչ միայն բնության մեջ, այլև հասարակական հարաբերություններում:

Ուժը *ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին (այդ թվում նաև՝ ինքն իրեն) ուղղորդելու կամ վերահսկելու կարողությունն է*: Եթե մարդն առողջ է, ինչպես ասում են “ոտքերում ուժ կա”, նա կարող է երկար տարածություններ քայլել, կատարել ֆիզիկական աշխատանք, իսկ եթե ուժ չունի, նա կարող է արագ հոգնել ու չկարողանալ իրագործել նպատակը: “Ուժ” բառն օգտագործվում է մի քանի իմաստով: Նախ, որպես մարդ էակին բնորոշ բնական հատկություն՝ ֆիզիկական ուժ:

- Երբ Դուք միմյանց հետ բազկամարտի մեջ եք մտնում, փորձելով պարզել “ձեռքի ուժը”, Դուք կիրառում եք ֆիզիկական ուժ:

Բայց ֆիզիկական ուժի կողքին կա նաև հոգևոր ուժը, որը հաճախ ուղղորդում ու վերահսկում է մարդու ֆիզիկական ուժը: Այստեղ կարելի է խոսել կամքի ուժի, ուժեղ մտքի, տպավորությունների և երևակայության ուժգնության մասին և այլն:

- Երբ մարդն ունենում է բարձր նպատակներ և կենտրոնանում է դրանց վրա, նրա ֆիզիկական ուժն էլ կարծես ավելանում է: Պատերազմի դաշտում եղել են դեպքեր, երբ փոքրամարմին բուժքույրերն իրենց ուսին դրած կրակի տակից դուրս են բերել հաղթանդամ զինվորների, ինչն այլ պայմաններում նրանց կթվար անհնար:

Բացի առանձին մարդուն նկարագրելուց “ուժ” բառը կարող է նկարագրել նաև խմբերին ու ողջ հասարակությանը. Կարող են լինել ուժեր (այսինքն՝ որոշակի հասարակական շերտեր), որոնք դրդում են նախագահին որևէ որոշում կայացնել:

Նման մեկ այլ ուժի օրինակ է հասարակական կարծիքը, որը կարող է ճնշել մարդուն, թելադրել իր կանոնները:

- Ծանո՞թ է նման իրավիճակ: Մայրիկը հագուստ է գնել Ձեզ համար, որ չեք ցանկանում հագնել, ոչ թե այն պատճառով, որ Ձեզ դուր չի գալիս, այլ մտածելով, որ միջավայրում այն կարող է չընդունվել՝ իսկ ի՞նչ կասեն ընկեր-ընկերուհիները:
- Կարդացե՞լ եք Շիրվանզադեի "Նամուսը": Կարո՞ղ եք նշել, թե ինչ ուժեր էին ազդում հերոսների վրա... Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է անկախ լինել հասարակական կարծիքից:

Իրենց առօրյա գործունեության մեջ մարդիկ, որպես կանոն, օգտագործում են իրենց ուժերը. Ֆիզիկական, մտավոր, կառավարչական և այլն: *Տնտեսագետները խոսում են աշխատուժի մասին. դա մարդն է, որն իր ուժն օգտագործում է աշխատելու և դրա դիմաց գումար ստանալու համար:* Օրինակ, շինարարը պատ է շարում, բեռնակիրը բեռ է կրում, իսկ մտավոր գործունեությամբ զբաղվողները օգտագործում են իրենց գիտելիքներն ու հմտությունները որպես ուժ:

- 17-րդ դարում անգլիացի իմաստասեր Ֆրենսիս Բեկոնը պնդում է, որ "**Գիտությունը ուժ է**": Համաձա՞յն եք այդ մտքի հետ, թե՝ ոչ: Ինչո՞ւ:

Ստեղծագործելու և ընդհանրապես գործելու ընթացքը ենթադրում է ուժերի գործադրում: Բայց բացի նման ստեղծարար գործադրումից կարող է լինել նաև ուժի սահմանափակող, արգելող, վնասող ու ոչնչացնող գործադրում: Նման դեպքերում հարկ է լինում ուժի մասին խոսել իրավունքի և իշխանության տեսանկյունից:

- Օրինակ՝ մեքենան ցանկանում է մտնել տվյալ փողոցն, իսկ ոստիկանն արգելում է: Կամ Դուք ցանկանում եք երեկոյան արթուն մնալ ու դիտել սիրելի կինոֆիլմը, իսկ հայրիկը հրահանգում է գնալ քնելու: Ի՞նչ եք կարծում, նրանք կարո՞ղ են նման ուժ կիրառել, ի՞նչն է հայրիկին ու ոստիկանին տալիս այդ հնարավորությունը:

Այդ հնարավորությունը նրանց տալիս է իշխանությունը: ***Իշխանությունը*** *ուժն է՝ համակցված այն գործադրելու իրավունքի հետ*: Ոստիկանն իշխանության ուժով կարող է որոշակի իրավիճակներում արգելել մեքենաների մուտքը այս կամ այն փողոց, իսկ հայրիկն իր ծնողական իրավունքի ուժով կարող է խնամել ու հոգ տանել երեխայի առողջության ու անվտանգության մասին՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով հարկադրելու ուժ:

Իսկ այժմ դիտարկենք երկու օրինակ.

- Դուք նորագույն ֆոտոապարատ եք նվեր ստացել ու տարել բակ: Բակում երկու տղա ֆիզիկական ուժի սպառնալիքով Ձեզանից խլում են ֆոտոապարատը, ասելով, որ վաղը կվերադարձնեն:
- Դուք դասարանով այցելում եք որևէ պետական հաստատություն, որտեղ նկարահանել չի կարելի: Ձեզանից կարող են վերցնել նկարահանող սարքերը՝ խոստանալով այցի ավարտին վերադարձնել:

Առաջին հայացքից թվում է, թե երկու օրինակները նույնական են, քանի որ հանգամանքները, կարծես թե, նման են. Ձեր հանդեպ ուժ է կիրառվում: Բայց բակի տղաները իրավունք չունեին վերցնելու Ձեր ֆոտոապարատը, իսկ պետական հաստատության ծառայողները իրավունք ունեին նման կերպ վարվելու (դա արվում է անվտանգության նպատակներից ելնելով ու հստակ սահմանվում է որոշակի կանոններով): Այսինքն՝ վերջիններն ունեին *իշխանություն*:

Առանց իշխանության ուժի վնասող գործադրումը *ուժի չարաշահում* է, որի համար նախատեսվում են պատիժներ (օրնակ՝ ունեցվածքի հափշտակության, ծեծի, սպանության և այլ հանցագործությունների համար օրենքները նախատեսում են խիստ պատիժներ): Սակայն իշխանություն ունենալու դեպքում ուժի օգտագործումը նույնպես ունի սահմաններ, որոնք նշվում են համապատասխան փաստաթղթերում: *Իշխանության չարաշահումը* նույնպես օրենքից դուրս է; Այդ մասին կխոսվի հաջորդ դասերին:

Հարցեր մտորելու համար.

- Ի՞նչ է ուժը: Ի՞նչ իմաստներով է այն մեկնաբանվում մարդու և հասարակության մասին խոսելիս:
- Դուք ուժ կիրառո՞ւմ եք: Ի՞նչ նպատակով:
- Ֆիզիկայի օրենքներից մեկի համաձայն ազդող և հակազդող ուժերը մեծությամբ հավասար են: Ի՞նչ եք կարծում, այս օրենքը հասարակությունում գործո՞ւմ է: Համաձա՞յն եք հետևյալ կարգախոսի հետ. “*Հարգի՛ր և կհարգվես*”: Ինչո՞ւ:

- Ձեր հանդեպ ֆիզիկական ուժ կիրառվե՞լ է: Ի՞նչ զգացումներ է դա առաջ բերել: Դա Ձեր ո՞ր ազատություններն ու իրավունքներն է ոտնահարում:
- Ի՞նչ է հարկադրանքը: Ո՞վ ունի հարկադրանք կիրառելու իրավունք:
- Ի՞նչ է իշխանությունը: Ի՞նչ եք կարծում, իշխանության ներկայացուցիչները կարո՞ղ են կամայականորեն օգտագործել ուժ կիրառելու իրենց տրված իրավունքը:

Առաջադրանք

Կարդացեք ստորև բերվող իրավիճակները և որոշեք, թե որ դեպքում է կիրառվում ուժ առանց իշխանության, իսկ որ դեպքում՝ իշխանություն.

- Ավագ եղբայրը կրտսեր քրոջն ու եղբորը չի թողնում օգտվել համակարգչից:
- Ձկնորսները ձուկ որսալու նպատակով պայթուցիկներ են օգտագործում:
- Շինարարական կազմակերպությունը պայթեցնում է կիսավեր շինությունը, դրա տեղում նորը կառուցելու նպատակով:
- Ճանապարհային ոստիկանության ներկայացուցիչը կանգնեցնում է թույլատրվածից արագ ընթացող մեքենան:
- Ուսուցիչը նկատողություն է անում դասից ուշացող աշակերտին:
- Անցորդը նկատողություն է անում ծառի ճյուղը կոտրող երեխաներին:

Առաջադրանք

- Կարդացեք վերջին շաբաթվա լրագրերը կամ ինտերնետային լրահոսը և դուրս գրեք առանց իշխանության ուժի և իշխանության կիրառման երկուական դեպք: Լրացրեք ետևյալ աղյուսակը.

Աղբյուրը (լրագրի անվանումը կամ կայքի հասցեն, ամսաթիվ)	Ուժի կիրառում առանց իշխանության	Իշխանության կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ
Գարեգին Նժդեհը ուժի մասին

◊ ◊ ◊

Սահման չի տրված ինքնաճանաչ
անհատի հոգեկան ուժերին…

Կուզեի, որ դո՛ւ, հա՛յ երիտասարդ, որ դու յուրացնեիր ինքնաճանաչությունը՝ որպես ուժի, հաղթանակի և բարձր երջանկության ամենակարճ և ամենաստույգ ճամփան:

Ծանի՛ր զքեզ:

Գիտցի՛ր, որ մարդս գաճաճ է իր ներքին հսկայի բաղդատմամբ:

Ծանի՛ր զքեզ:

Կուզեի, որ իմաստասիրական այս հրամայականը քանդակված լիներ մեր դպրոցական շենքերի ճակտին, ապա և մեր աշակերտության ուղեղի մեջ:

Այն ողորմելիորեն տկար էակը չէ մարդը, որպիսին ճգնում է նրան ներկայացնել նյութապաշտական կարճատես գիտությունը: Նա գրեթե ամենակարող է, երբ գիտակցում է, թե իր մեջ թաքուն ուժերի մի ամբողջ ծով կա, որից առատորեն օգտվում է ինքնաճանաչ անհատը:

Դու ավելի ուժեղ ես, քան կարող ես երևակայել և զգալ քեզ:

Դու օժտված ես անսպառ հոգեկան ուժով, որի մեծագույն մասը անինքնաճանաչության պատճառով շարունակում է մնալ քնած վիճակի մեջ և անօգտագործելի:

Քեզ տրված ներքին ուժերի բերումով դու գրեթե ամենակարող ես, հրաշագործ, եթե վստահելով քո ներքին մարդուն, նրա ուժերից օգտվես միայն բարձր նպատակների համար: Մեր ուժերի մեծագույն մասը շարունակում է մնալ թմրած վիճակի մեջ, երբ նրանց մասին գաղափար չունենք:

Բայց երբ ձգտել սկսեցինք որևէ բարձր նպատակի և նոր ուժերի կարիքն զգացինք – մեր մեջ անմիջապես զգում ենք ներկայությունը մեր թաքուն ուժերի: Ո՞վ չի զգացել իր մեջ երբեմն կորովի հանկարծական ծովացում: Ո՞վ չի ունեցել երբեմն հանճարեղ ներշնչումներ…

Ուրեմն, եղի՛ր ինքնաճանաչ, երիտասարդ բարեկամ, հավատա՛ թաքուն ուժերիդ, օգնության կանչիր քո ներքին մարդուն, որ ավելի Աստված է, քան տկար արարած, որպեսզի աշխարհը չկարողանա սահման դնել քո հոգու ավյունի թափին, թռիչքին:

(Գ. Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2001, էջ 96-97)

◊ ◊ ◊

Ապրե՞լ ենք ուզում՝ լինենք ուժեղ ազգովին:

Լինենք ուժեղ ազգովին, ահա՛ հրամայականը:

Լինենք ուժեղ այնքան, որ մեր անպարտելիությունը առ ոչինչ դարձնի մեզ ծանոթ այն բոլոր դժբախտ պայմանները, որոնք դժվարացնում են մեր ցեղի ինքնապաշտպանության գործը:

Թվական, տեխնիկա, ընդհանրապես նյութական տեսակետից մեր ժողովուրդը, հասկանալի պատճառներով, երբեք չի կարող ուժեղ լինել իր հակառակորդներից: Սակայն ուժը միայն նյութական ազդակները չեն, այլև մի ժողովրդի առաքինությունները:

Կա հոգեբանական գերադասությունը, կա բարոյական ուժը – աշխարհի պես հին, բայց միշտ էլ թարմ և հրաշագործ, որին տիրապետող ազգը քիչ անգամ է գլուխ ծռել իրենից նյութապես տասնապատիկ ուժեղ թշնամու առաջ:

Բարոյական ուժն է գոտեպնդում փոքր ժողովուրդներին ու բանակներին անհավասար կռվում. նա՛ է դեպի հաջողություն ու հաղթանակ առաջնորդում թվապես թույլերին մեծամեծ հակառակորդների դեմ:

Եվ այսօր, մեր դրության մեջ, միայն նա – բարոյական ուժը, կարող է ապրեցնել մեզ:

(Գ. Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2001, էջ 36)

Հարցեր մտորելու համար.

- Ուժի ի՞նչ մեկնաբանություն է տալիս Գարեգին Նժդեհը:
- Կա՞ն մտքեր, որոնց հետ ցանկանում եք բանավիճել:
- Ձեր ուժերն ու ընդունակություններն արդյոք զարգացնո՞ւմ եք, թե՝ թողնում ինքնահոսի:
- Ըստ Ձեզ, ո՞րոնք են ուժեղ լինելու հայտանշանները:

ԴԱՍ 19. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ: ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Դասի նպատակը

Այս դասի ուսումնասիրման արդյունքում Ձեզ համար պարզ կլինի, թե ինչու է իշխանությունն անհրաժեշտ: Դուք կմտորեք այն խնդրի շուրջ, թե ինչ կլիներ, եթե չլիներ իշխանություն: Ինչպես նաև կկարողանաք տարբերակել իշխանության որոշ գործառույթներ:

ԸՆԹԵՐՑԵ'Ք ՏԵՔՍՏԸ

Նախորդ դասին արդեն իմացաք, որ մարդիկ իրենց գործունեության ընթացքում անընդհատ ուժ են կիրառում միմյանց հանդեպ իրենց նպատակներին հասնելու համար: Իշխանությունը նույնպես ունի ուժ, որ կիրառում է իր նպատակներն ու գործառույթներն իրականացնելու համար: Բայց այդ պատճառով մենք հաճախ ենթարկվում ենք սահմանափակումների: Եկեք մի պահ պատկերացնենք, որ իշխանություն չկա:

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ տեղի կունենա նման պարագայում: Առաջին հայացքից թվում է, թե լավ կլինի. վերջապես կարող եք անել այն ամենն, ինչ նախկինում չէր կարելի: Օրինակ, գնալ օդանավակայան ու անարգել մտնել ինքնաթիռ: Կամ մտնել խանութ ու վերցնել այն ամենն, ինչ սրտներդ կուզի: Բայց չէ՞որ միայն Դուք չեք ազատվել սահմանափակումներից, ազատվել են բոլորը: Եվ ինչ-որ մեկի մտքով անցնում է Ձեր ինքնաթիռը փախցնել մեկ այլ երկիր, ու Դուք ակամա դառնում եք պատանդ: Ո՞ւմ դիմել… Ինքնաթիռի դեպքում առանց իշխանության, կարծես թե, լավ չի ստացվում, վերադառնանք խանութ: Իսկ այստեղ էլ հայտնվում է ֆիզիկապես շատ ուժեղ մեկը կամ ամենալավ զինվածը, որը հրամայում է իրեն տալ ոչ միայն խանութից վերցրածն, այլև այն ամենն, ինչ ունեք: Ո՞վ կպաշտպանի Ձեզ դեպքերի նման զարգացումից:

Մենք հիմա մտովին ենք փորձում պատկերացնել, թե ինչ կլինի, եթե չլինի իշխանություն, այնինչ հասարակության պատմությանը հայտնի են ժամանակներ, երբ եղել է նման իրավիճակ: Այդ դրությունը իմաստասերները անվանում են “բոլորի պայքարը բոլորի դեմ”: Այո՛, պատկերացրեք, որ ոչ թե իշխանությունն է պաշտպանում մարդկանց, օրինակ, անձեռնամխելիությունը, այլ հենց իրենք: Այդ դեպքում բոլորը պետք է լինեն զինված, կամ տեղաշարժվեն խմբերով, ընդ որում ամեն պահի սպասելով հարձակման: Դա կլինի լրիվ այլ կյանք մշտական ահուդողի, լարվածության և անկանխատեսելիության պայաններում: Պատերազմների, իշխանափոխությունների ժամանակ երբեմն նման դրություններ են ստեղծվում նաև արդի ժամանակներում տարբեր երկրներում: Հետագայում անիշխանության այդ ժամանակահատվածը մարդիկ հիշում են որպես մղձավանջ: Ինչո՞ւ: Քանի որ իշխանությունները իրականացնում են մի շարք գործառույթներ, որոնք կարևոր դեր են կատարում հասարակության կյանքում:

Իշխանությունները կազմակերպում են հասարակության կյանքը: Իշխանությունների շնորհիվ հասարակությունը սկսում է գործել ժամացույցի մեխանիզմի նման, որտեղ յուրաքանչյուր զսպանակ և պտուտակ ունի իր դերը, կատարում է կոնկրետ գործառույթ՝ նպաստելով ողջ մեխանիզմի ճշգրիտ

աշխատանքին: Իշխանությունները հնարավորություն են ստեղծում ունենալ կրթության, առողջապահության, անվտանգության և այլ համակարգեր, որոնց նպատակը հասարակության կյանքի կարգավորումն է: *Իշխանությունները կարգ ու կանոն են հաստատում՝ ստեղծելով օրենքներ, որոնք հստակ սահմանում են իշխանության տարբեր օղակների, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները:*

- Երբ Դուք սեպտեմբերին գնում եք դպրոց, Ձեզ տալիս են դասացուցակ, որը հստակ կարգավորում է Ձեր առօրյան դպրոցում. Դուք գիտեք, թե որ ժամին ինչով պետք է զբաղվեք: Դպրոցի ղեկավարությունը նաև հոգացել է, որ դուք դասասենյակներ որոնելու կարիք չունենաք:

Իշխանությունները միավորում են մարդկանց: Իշխանությունների օգնությամբ տարբեր շահեր ու ցանկություններ ունեցող մարդկանց խմբերը երկխոսության մեջ են մտնում: Եթե առաջանում են վեճեր, *իշխանության կիրառումը նպաստում է, որ դրանք լուծվեն խաղաղ և հնարավորինս արդարացի կերպով*: Օրինակ՝ քաղաքացին կարող է դիմել դատարան, որպեսզի վերջինս օգնի լուծել սեփականության մասին վեճը: Իշխանությունները նաև կոչված են պաշտպանելու մարդկանց իրավունքներն ու ազատությունները:

- Դպրոցում Դուք միավորված եք դասարաններում, խմբակներում, որտեղ իրականացնում եք համատեղ գործունեություն: Եթե վեճեր առաջանան, դասղեկը, ուսուցիչները կամ դպրոցի ղեկավարության որևէ ներկայացուցիչ Ձեզ կօգնեն հարթել դրանք:

Իշխանությունները կառավարում են գործընթացները: Կազմակերպելով հասարակության կյանքը որոշակի կարգ ու կանոն հաստատելու միջոցով, իշխանությունները որոշ տարերային գործընթացներ նույնպես կառավարում են՝ ելնելով ողջ հասարակության շահերից: Օրինակ՝ նրանք կարող են համեմատաբար ունևոր խավերից ավելի շատ հարկեր գանձել, որպեսզի կորիքավորներին նպաստներ ու թոշակներ վճարեն: *Իշխանությունների խնդիրն է նաև*

հասարակությանը մատակարարել այնպիսի ծառայություններ, որոնք առանձին ձեռներեցները կամ չեն կարող, կամ չեն ցանկանա մատակարարել:

- Իշխանությունները կառուցում են, վերանորոգում և ֆինանսավորում հանրային (ոչ մասնավոր) դպրոցներ, որպեսզի իրականացվի բոլոր երեխաների կրթություն ստանալու իրավունքը: Իսկ մասնավոր դպրոցները ստեղծվում են հիմնականում շահույթ ստանալու ակնկալիքով:

Դուք արդեն գիտեք, որ իշխանությունները կարող են հարկադրանք կիրառել, եթե դրա անհրաժեշտությունը կա հասարակության կյանքի բնականոն ընթացքն ապահովելու համար:

- Ոստիկանությունն ահազանգ է ստացել, որ, օրինակ, գործարանի շենքում պայթուցիկ է տեղադրված: Նա կարող է տարհանել շենքում եղած մարդկանց՝ անկախ նրանց ցանկությունից, հարկադրաբար, սակայն ելնելով հենց նրանց շահերից:
- Ինքնաթիռ մտնելիս յուրաքանչյուր ուղևոր ենթարկվում է զննության, դա նույնպես ելնում է բոլոր ուղևորների և ինքնաթիռի անվտանգությունն ապահովելու նպատակից:

Ի վերջո, չմոռանանք, որ ***իշխանությունները իրականացնում են նաև վերահսկողություն,*** որպեսզի տեսնեն, թե արդյոք իրականացվո՞ւմ են նախանշված գործընթացները և արդյոք հենց ա՞յն եղանակով, որոնք ամրագրված են օրենքներում: Արդյոք ուժի կամ իշխանության չարաշահումներ չկա՞ն: Իշխանությունն իրականացնում է նաև ինքնավերահսկում. այսինքն՝ իշխանության մի օղակը վերահսկում է մյուսին: Բայց այս մասին՝ հաջորդ դասերին:

Հարցեր մտորելու համար.

- Ի՞նչ եք կարծում, ինչպիսի իրադրություն կլինի անիշխանության պայմաններում:
- Ո՞ր հանգամանքներն են, ըստ Ձեզ, իշխանություն ստեղծելու համար ամենակարևորները:

- Իշխանությունը օգնո՞ւմ է մարդկանց, թե՝ սահմանափակում:
- Ի՞նչ գործառույթներ է իրականացնում իշխանությունը:

Առաջադրանք

- ԶԼՄ-ներից տեղեկացե՛ք վերջին շաբաթվա ընթացքում իշխանությունների կատարած գործողությունների մասին և դասակարգեք, թե ինչպիսի գործառույթ էին դրանք իրականացնում:

Լրացուցիչ ընթերցանության նյութ

*Հատվածներ Հակոբ և Շահամիր Շահամիրյանների "**Որոգայթ փառաց**"[1] երկից*

Արդ, ահա Ձեզ ներկայացնեմ ընդհանուրի թագավորության առանձնահատկությունները: Եթե կամենում եք ազատ լինել, հավասար կերպով թագավորել Ձեր երկրում, ազատորեն տեր լինել Ձեր ստացվածքին, պատվի արժանանալ Ձեր առաքինության համար, սրբել անօրինության կեղտերը և մաքրել Ձեր խղճմտանքը, անհրաժեշտ է, որ Ձեզ համար շինեք իմաստության տներ՝ խորհրդականներով և Ձեր բանական հոգու զորությամբ, համահավասար ժողովրդի կամքի ու ցանկության համաձայն, Ձեզ համար ընտրեք բարի օրենքներ՝ ապրելով ու կախման մեջ մնալով Ձեր օրենքներից, քանզի ոչ ոք իրավունք չպիտի ունենա իշխելու Ձեզ բացի Ձեր օրենքներից: *Ինչ որ Դուք կազմեք, այն էլ պիտի իշխի Ձեզ վրա, որպեսզի ոչ մեկը ճանապարհ չգտնի անօրենություն կատարելու, իսկ օրինախախտն էլ՝ գանգատվելու իր պատժի համար:*

*Այդ անխախտելի օրենքը մեր աշխարհը կլցնի մարդկանցով, կերջանկացնի մեզ, մեր իշխաններին կազատի խղճմտանքից ու դատաստանից, կփակի վայրահաչողների բերանը, **մեզ կազատի ենթարկվածությունից, կզսպի մեր վարքը հպարտությունից ու ինքնահավանությունից** և մեզ կմղի բարի գործեր կատարելու:* Դրանով նա մեզ կպարտավորեցնի խուսափել չար գործերից, որոնց համար ըստ մեր

[1] "Որոգայթ փառաց" նշանակում է թակարդ մեծամտության և կանոններին չհետևելու համար: Սա օրենքների ու կանոնների ժողովածու է, որը վերնագրված է "Գիրք, որ կոչվում է ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՑ՝ կալանքի ենթարկելու համար ամեն անկարգ գործ" և տպագրվել է 1773թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում:

օրենքի ընդունելու ենք պատիժ ու նախատինք: Նրանով ամենքը կճանաչեն իրենց ձեռքով կատարածի արդյունքը, կամովին կհատուցենք միմյանց մեր պարտքերը՝ հարկեր, մաքսեր, պատիվներ, նարազանդություն և այլն: Պետք չէ, որ ես մեկ առ մեկ բացատրեմ այդքան երջանկոևության պատճառը՝ անխախտելի օրենք ընդունելու շնորհիվ:

Այսպիսով, ամեն ոք, ինչ էլ կամենա, ***ազատորեն*** *կարող է գործել՝ թե՛ բարի, թե՛ չար և պարտավոր է* ***ըստ օրենքի*** *ընդունել իր ձեռքով կատարածի վարձատրությունը՝* ***պատիվ կամ պատիժ:*** Նրանով է զսպվում մեր բնությունը և ընթանում դեպի բարի գործ՝ գիտենալով մեր վճիռը, որ իրենով է կայացել իր նկատմամբ՝ ակն ընդ ական և ատամն ընդ ատաման: Դրա համար էլ իր ձեռքն անզգամորեն չի խփի ուրիշի աչքին կամ ատամին, որովհետև շատ լավ գիտե, թե իր անպատկառ վարմունքի արդյունքը կամ լկտի շարժման վարձն ինչ է:

Բնականաբար գիտեմ, որ այս գրքի ընթերցողը, հասնելով սույն հոդվածին, իր մտքում ճիգ կարող է թափել իմանալու, թե մի՛թե լայնատարած մի երկրի երեսին ապրող *մի ողջ ազգ կարող է միախումբ հավաքվել՝ լսելու* ***իրավունքի*** *մասին, կազմելու* ***օրենքներ****, ընդունելու կամ հակադրվելու* ***կարգադրությունների,*** *և կամ ընդունելուց հետո ո՞վ է լինելու, որ այդ ամենին* ***կիրառություն*** *պիտի տա գործի մեջ:* Այդպիսի մտածության կապակցությամբ ուզում եմ փարատել քո մտքի տարակուսանքը: Մեր երկրի երեսին ապրող յուրաքանչյուր տասը հազար տուն բնակչից հրավիրելով ու կանչելով միայն երկու մարդու, որոնք **ընտրված ու ընդունված** լինեն տասը հազար տնից, այդ երկու հոգին, լինելով և մնալով իբրև տեղակալ և փոխանորդ մեկ տասը հազար տների, *կկատարեն իրենց առաքած այդ բյուրավոր անձանց գործը:* Այդ կերպ համայն Հայոց աշխարհին հարկավոր չէ, որ ամենքի փոխարեն հավաքի ավելին, քան ոչ ավել և ոչ պակաս հինգ հարյուր մարդու. Սրանցով կարող է մեր ամբողջ աշխարհի համար ընդունելի օրենքներ ընտրել և հաստատել:

Իսկ այն մասին, որ մտածեցիր, թե ո՛վ է, որ կարող է կիրառել օրենքները մեր նկատմամբ, կասեմ՝ նա՛, որին մեր օրենքը հրամայում է և շնորհում պաշտոնավարության հրաման, որ օրենքով կարգվի ու մնա մեր ողջ ազգի սպասավոր և ջատագով[1] մեր օրենքների: *Այդ մարդը պարտավոր է լինել հայոց* ***սպասավոր***, ինչպես Տերն է ասում, թե՝ Ով որ ձեր մեջ մեծն է, նա է սպասավոր, կրտսեր պաշտոնակատար, ծառայելու համար ամենքին: *Նա պետք է լինի հայոց ազգի բերանը և շարժվի այն գործի ու պաշտոնի մեջ, որ ավանդել է նրան Հայոց տունն իր ծերակույտի կողմից՝ համաձայն օրենքի: Նա ևս ըստ օրինաց պետք է ընդունի իր ձեռքի պտուղը, ինչպես ես և դու՝ ընթերցողդ: Նա չի կարող ոչ մի բանով առավելություն ունենալ:* Նրա առավելությունը ոչ մի բան չէ, եթե ոչ իր պաշտոնով հավատարմորեն ծառայելը հանուն իր ազգի…

(“Որոգայթ փառաց”, Երևան, 2002, էջեր 14; 34-36:)

[1] Ջատագով – պաշտպան, սատար:

Հարցեր մտորելու համար

- Կիսո՞ւմ եք, արդյոք, հեղինակի ոգևորությունը իշխանության անհրաժեշտության խնդրում: Արդյո՞ք լավ օրենքների հաստատումը կբերի սպասված երջանկության: Ինչո՞ւ:
- Ձեզ արդեն ծանոթ *ազատության, պատասխանատվության, արդարության և հավասարության* արժեքների տեսանկյունից վերլուծե՛ք ընթերցված հատվածը:
- Ի՞նչ եք կարծում, իշխանությունները կարող են զսպել չարամիտ մարդկանց, որպեսզի վերջիններս իրենց “անպատկառ և լկտի” չպահեն:
- Գիտե՞ք, թե ինչ է նշանակում “ակն ընդ ական և ատամն ընդ ատաման” արտահայտությունը, որտեղի՞ց է այն:
- Ի՞նչ է նշանակում “*իշխանավորը սպասավոր է*” արտահայտությունը: Արդյոք իրական կյանքում այդպե՞ս է: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ:
- Համաձա՞յն եք, որ իշխանությունները պետք է ծառայեն ժողովրդին: Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կարելի է հասնել դրան:

ԴԱՍ 20. ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասի նպատակը

Այս դասն ուսումնասիրելով կխորացնեք իշխանության մասին Ձեր ունեցած պատկերացումները՝ վերլուծելով իշխանության աղբյուրները: Դուք նաև կուսումնասիրեք “առաջնորդություն” և “հեղինակություն” հասկացությունները՝ փորձելով պարզել, թե ինչպիսի հատկանիշներ պետք է ունենան իշխանավորները:

ԸՆԹԵՐՑԵ'Ք ՏԵՔՍՏԸ

> Այնտեղ, որտեղ իշխանավորները մեծ իմաստուններ են, ժողովուրդը չի նկատում անգամ նրանց գոյությունը: Այնտեղ, որտեղ իշխում են ոչ մեծ իմաստուններ, ժողովուրդը կապված է լինում նրանց հետ ու գովում է նրանց: Իսկ այնտեղ, որտեղ իշխում են առավել սակավ իմաստուններ, ժողովուրդը վախենում է նրանցից: Եվ վերջապես այնտեղ, որտեղ ամենասակավ իմաստությունն է իշխում, ժողովուրդն արհամարհում է այն…
>
> ***Լաո-Ցզի***

Արդեն պարզ է, որ իշխանություն ունենալն անհրաժեշտություն է, սակայն այժմ առաջանում է մի նոր հարց. Իսկ ի՞նչն է օժտում այս կամ այն մարդուն կամ խմբին իշխանությամբ: Այլ կերպ ասած՝ որո՞նք են իշխանության աղբյուրները:

Շատ վաղ անցյալում մեր հեռավոր նախնիներին թվում էր, թե **իշխելու կարողությունը գտնվում է իրերի մեջ**: Օրինակ՝ մոգական կամ կախարդական փայտիկի, սրբազան ծառի, լեռան մեջ, սրբազան կենդանու կամ քարի մեջ և այլն: Ով որ ցույց էր տալիս, որ ինքը տիրում է տվյալ իրին կամ վայրին, նրան էլ մարդիկ ճանաչում էին որպես իշխանավոր:

Այնուհետև իշխանությունը աստիճանաբար սկսեցին պատկերացնել որպես **շնորհ, ձիրք, որ տրվում է գերագույն էակի՝ Աստծո կողմից**: Այդ դարաշրջանում մարդիկ տարբերակեցին հասարակության շերտերը, առանձնացնելով իշխանավորների խավին, որը իր **իշխանությունը ստանում էր Աստծուց և փոխանցում ժառանգաբար՝ սերնդե-սերունդ**:

- Պատմության դասընթացից ծանոթ եք, օրինակ, թագավորական իշխանությանը: Գիտեք, թե ինչ արքայական տներ ենք ունեցել հայերս: Ծանո՞թ եք արդյոք, մեր արքայատոհմերի զինանշաններին:

Դարեր ի վեր լինելով ժառանգաբար իշխողների տիրապետության տակ, մարդիկ սկսեցին մտորել, որ այնուամենայնիվ, այնքան էլ արդարացի չէ իշխանության ժառանգական փոխանցումը: Առավել արդարացի սկսեցին համարել իշխանությամբ օժտելը նրանց, ում ***կառավարվողները տալիս են իրենց համաձայնությունը, վստահությունը***: Այսպես առաջացան ընտրական համակարգերը. *ժողովուրդն ընտրում է ներկայացուցիչներ իրեն կառավարելու համար՝ համաձայնելով ենթարկվել նրանց ընդունած օրենքներին, որոշումներին ու հրահանգներին:*

Այսպիսով տեսանք, որ վաղնջական ժամանակներում իշխանությունն այլ իրերի պես համարվում էր **իր**, որին պետք էր տիրանալ, իսկ այնուհետև այն դիտարկվեց որպես **հատկություն**, որով օժտված են որոշ մարդիկ կամ խմբեր, իսկ մյուսները՝ ոչ: Իսկ ժամանակակից աշխարհում իշխանությունը համարվում է մարդկանց միջև որոշակի **հարաբերություն**[1], ընդ որում մարդկանց ոչ մի խումբ չի համարվում իշխանության մշտական կրող: **Իշխանությունը փոխանցվում է նրանց, ովքեր ստանում են իշխվողների համաձայնությունն իշխել իրենց**: Սակայն որոշ ժամանակ հետո (ասենք, ընտրությունների միջոցով) իշխանությունը կարող է անցնել այլ մարդկանց կամ խմբերի:

Ժամանակակից աշխարհում առավել շեշտվել է իշխանության ևս մեկ աղբյուր՝ **գիտելիքը, ինֆորմացիան**: Ինչ խոսք, անցյալում նույնպես իշխանավորները կարևորագույն գիտելիքի տերն էին, ինչը նրանց հնարավորություն էր տալիս կառավարել մի շարք գործընթացներ:

- Կարևորագույն գիտելիքները անցյալում պահվում էին խիստ գաղտնի, իսկ դրանք բացահայտողներին հասնում էին մեծ պատիժներ: Մտաբերե՛ք Պրոմեթևսի առասպելը: Պրոմեթևսը կրակը և որոշ գիտելիքներ աստվածներից մարդկանց հասցնելու համար ստացավ հավերժական պատիժ. Արծիվն ամեն անգամ պետք է կտցեր նրա լյարդը, որը դարձյալ պետք է գիշերը վերականգնվեր, որպեսզի արծիվը նորից կտցի՝ մշտական տառապանք պատճառելով Պրոմեթևսին:

Բայց արդի ինֆորմացիոն հասարակության մեջ գիտելիքի, տեղեկույթի դերը գնալով ավելի ու ավելի է մեծանում և այն տիրապետողներին օժտում իշխանությամբ:

Իսկ այժմ մտածենք, թե առանձին մարդն ինչպես կարող է հասնել իշխանության: Ընդհանրապես տարբերում են երեք ուղի՝ *բռնությունը, իրավունքը և հեղինակությունը*: Բռնությունն, ինչպես արդեն գիտեք, կոպիտ ուժի կիրառումն է:

- Վաղ անցյալում մարդիկ բիրտ ուժ էին գործադրում միմյանց հանդեպ և իշխում էին նրանք, որոնք առավել ուժեղ էին: Ամերիկայի տարածքները նվաճելիս եվրոպացիներին հաջողվում է զավթել իշխանությունը, քանի որ նրանք ունեին հրազեն, ինչով բնիկների ֆիզիկապես անգամ ամենաուժեղ տոհմերին կարողացան ընկճել: Ներկայումս իշխանությունները որոշ դեպքերում նույնպես ունեն բռնություն գործադրելու իրավունք: Օրինակ՝ եթե զինված հանցագործը պատանդ է վերցրել բանկում գտնվող մարդկանց, ոստիկանները կարող են ուժ կիրառել նրա դեմ:
- Մտածեք, արդյոք, Ձեր նպատակներին հասնելու համար դիմո՞ւմ եք կոպիտ ուժի: Դա ընդունելի՞ է Ձեր կարծիքով:

[1] Հարաբերություն – մարդկանց միջև փոխազդեցության որոշակի ձև

Իրավունքն, ինչպես արդեն տեսանք, ծնվում է իշխանության վերոնշյալ աղբյուրներից ու իշխողին տալիս օրինական հնարավորություն իրականացնելու իր իշխանությունը:

Իսկ ի՞նչ է *հեղինակությունը:*

- Դուք ունեք դասարանի ավագ: Ինչպե՞ս եք ընտրել նրան: Գուցե՞ դասղեկն է նշանակել: Եթե Դուք եք ընտրել, ապա ո՞ր հատկությունների հիման վրա: Նա հարգվա՞ծ է, դասարանում հեղինակություն ունի՞:

Հեղինակությունը *տվյալ խմբում տվյալ մարդու դրական հատկանիշների ճանաչումն ու ընդունումն է, նրան լսելու, նրա հետ խորհրդակցելու խմբի անդամների հակվածությունը*: Հեղինակավոր են համարվում համընդհանուր հարգանք վայելող մարդիկ, որոնք ունեն մի շարք հատկություններ: Օրինակ՝ բարեկրթություն, խորը գիտելիքներ, գործի իմացություն, հուսալի են, համարձակ, կարողանում են համագործակցել այլոց հետ, հարգում են մնացածի իրավունքներն ու կարիքները, արձագանքում են դրանց, դավանում են մարդասիրական արժեքներ և այլն: *Այն մարդիկ, որոնց հասարակությունն ընտրում է՝ ելնելով նրանց հեղինակությունից, կոչվում են* ***առաջնորդ***: Ի տարբերություն դրա, այն մարդիկ, որոնց վերևից նշանակում են, կոչվում են **ղեկավար**: Երբեմն առաջնորդը և ղեկավարը կարող է լինել նույն անձը, բայց լինում է նաև, որ նշանակվում է մեկը, իսկ խմբում իրական հեղինակություն վայելում է մեկ ուրիշը: Այդ դեպքում ասում են, որ վերջինս խմբի ոչ պաշտոնական առաջնորդն է:

- Կարելի՞ է ասել, որ Ձեր դասարանի ավագը Ձեր առաջնորդն է, թե՝ կա այլ աշակերտ, որին առավել մեծ ցանկությամբ եք հետևում:

Առաջնորդությունը նույնպես հարաբերություն է. առաջնորդ-հետևորդ հարաբերություն: Բայց որոշ հասարակագետներ գտնում են, որ առաջնորդ լինելը հատկությունների ամբողջություն է, որը ժառանգաբար է տրվում մարդկանց, և այդ պատճառով է, որ դարեր շարունակ մարդիկ իշխվել են արքայական տոհմերի կողմից: Իսկ այլոք գտնում են, որ առաջնորդական հատկանիշները կարող են դաստիարակության և ինքնադաստիարակության միջոցով զարգացվել յուրաքանչյուր մարդու մեջ:

- Մտորե՛ք, թե Ձեզ որ տեսակետն է առավել սրտամոտ:

Առաջնորդությունը *ոչ միայն այլոց, այլև ինքն իրեն իշխելու կարողություն է, որը ենթադրում է ուժեղ կամք ու ինքնատիրապետում*: Ներկայումս արդեն պարզ է, որ յուրաքանչյուր մարդ իր կյանքի այս կամ այն բնագավառում կատարում է առաջնորդի դեր, օրինակ՝ ընտանիքում, աշխատավայրում, սիրողական խմբում կամ ընկերական միջավայրում: Սա նշանակում է, որ վերոնշյալ հատկություններն

իր մեջ զարգացնելու կարիք ունի ամեն ոք, քանի որ կյանքի բերումով նա կարող է լինել այնպիսի իրավիճակներում, որտեղ պետք է առաջնորդություն հանդես բերի:

Հարցեր մտորելու համար.

- Իշխանության ի՞նչ աղբյուրների ծանոթացաք: Դրանցից ո՞րն է Ձեզ համար ամենաընդունելին:
- Կա՞ն, արդյոք, այլ աղբյուրներ, օրինակ՝ սովորույթները, բարոյական արժեքները, օրենքները կարո՞ղ են համարվել իշխանության աղբյուրներ:
- Ի՞նչ է հեղինակությունը: Դուք ո՞ւմ կհամարեք հեղինակավոր:
- Ի՞նչ է առաջնորդությունը, այն ժառանգակա՞ն է, թե՝ ձեռքբերովի:

Լրացուցիչ ընթերցանության նյութ

Զրույցներ Կոնֆուցիոսի հետ

Կոնֆուցիոսը հին Չինաստանի ականավոր իմաստասերներից մեկն է, որն աշակերտների հետ զրուցել է մի շարք թեմաներով, այդ թվում՝ իշխանության և իշխանավորների մասին:

◊ ◊ ◊

Ցզի-գունը հարցրեց, թե որն է լավ կառավարությունը:

Կոնֆուցիոսը պատասխանեց.

- Դա այն կառավարությունն է, որը երաշխավորում է առատ սնունդ, ապահովում երկրի անվտանգությունը թշնամիներից, և հոգ է տանում այն մասին, որ ժողովուրդը հավատա իրեն:

Ցզի-Գունը կրկին հարց տվեց.

-Եթե անհրաժեշտ լինի այդ երեքից միայն երկուսը թողնել, ապա ո՞ր մեկից կարելի է հրաժարվել:

-Բանակից, - ասաց Ուսուցիչը:

-Իսկ եթե հարկ լինի մնացած երկուսից մեկը թողնել, ապա որի՞ց կարելի է հրաժարվել:

Կոնֆուցիոսը պատասխանեց.

-Սննդի մասին հոգալուց: ռանց սննդի մարդիկ կմեռնեն, բայց մահը, ի վերջո, բոլորի ճակատագիրն է: Իսկ եթե ժողովուրդը չհավատա իր կառավարությանը, այն ժամանակ կմեռնի պետությունը:

◊ ◊ ◊

“Ի՞նչ բան է կառավարումը” հարցին Կոնֆուցիոսը պատասխանեց.

- Իշխանը պետք է իշխան լինի, հպատակը՝ հպատակ, հայրը՝ հայր, որդին՝ որդի:

◊ ◊ ◊

Կոնֆուցիոսն ասաց.

-Եթե իշխողները հարգեն վարվեցողության և արարողության այն օրենքները, որ ընդհանուր են բոլորի համար, ապա ժողովուրդը շատ ավելի հեշտ կկառավարվի:

◊ ◊ ◊

Ցզի-Լուն հարցրեց Ուսուցչին, թե ինչով է աչքի ընկնում ազնվականը: Կոնֆուցիոսը պատասխանեց.

- Ազնվականը իրեն դաստիարակում է այն բանի համար, որ բարեխղճորեն կատարի իր պարտքը:

_Եվ վե՞րջ, - ասաց Ցզի-Լուն:

- Նա իրեն դաստիարակում է այն բանի համար, որ խաղաղություն և հանգստություն տա մարդկանց, - եղավ պատասխանը: -Բայց դա դժվար էր անգամ հին կայսրեր Յաոյի և Շունի համար:

◊ ◊ ◊

Կոնֆուցիոսն ասաց.

-Չխոսել այն մարդու հետ, որի հետ անհրաժեշտ է խոսել, նշանակում է մարդ կորցնել:

Խոսել այն մարդու հետ, որի հետ չարժե խոսել, նշանակում է բառեր կորցնել:
Իմաստունը նա է, որ չի կորցնում ոչ մարդուն, ոչ էլ բառերը:

◊ ◊ ◊

Ռան Քիուն ցանկացավ իմանալ, թե որն է բարոյական վարքը: Կոնֆուցիոսը պատասխանեց.

-Մարդկանց ընդունիր այն նույն քաղաքավարությամբ, որով դիմավորում ես թանկ հյուրերիդ:

Վարվիր նրանց հետ այն նույն ուշադրությամբ, որով Մեծ Զոհն է մատուցվում:

Ինչ չես ցանկանում քեզ, մի արա նաև ուրիշներին:

Այդ դեպքում ոչ ոք չի զայրանա քեզ վրա ոչ պետության մեջ, ոչ էլ ընտանիքում:

Հարցեր մտորելու համար.

- Կոնֆուցիոսն ապրել է մեզանից մոտ երկուսուկես հազարամյակ առաջ: Ի՞նչ եք կարծում, նրա ո՞ր մտքերն են արդիական, իսկ որոնք են արդեն ապրել իրենց դարը:
- Ուսուցչի խորհուրդներից ո՞րն եք համարում ամենակարևորը: Ինչո՞ւ:
- Կառավարելու համար ի՞նչ հատկություններ է կարևորում չին իմաստասերը:
- Հայ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը 1995 թվականին գրում է հետևյալ տողերը.

Ինչպե՞ս ազատվել այն երկաթացանց,
խեղդող ուռկանից,
Որ իշխանություն անունն է կրում:
Ժողովրդավար կոչվող կարգերից,
Ուր ժողովրդին իրոք վարում են
Դեպի խոտառատ արոտավայրեր…
Օ, թվում է, թե ինքդ էլ ես արդեն
Թքոտվում, եղծվում,
Երբ հանդուրժում ես, լռում մեղկորեն
Ու երբ անզոր ես այս համատարած եղծության հանդեպ:
Օ, եթե իրավ մենք անկարող ենք
Դուրս վանել նրանց մեր այս սուրբ հողից,
Քանզի ամրորեն պատված են նրանք
Զենքով, զորքերով ու չափ չունեցող անզգամությամբ,
Մնում է, որ մենք դուրս գանք ինքնե՛րս…
Թող նրանց մնա թագ ու գայիսոն՝
Իրենց անօրեն օրենքների հետ…

Ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ սխալներ են թույլ տվել իշխանավորները, որ արժանացել են բանաստեղծուհու նման կրքոտ բողոքին: Ինչո՞ւ է բանաստեղծուհին իշխանությունն անվանում “երկաթացանց խեղդող ուռկան”, իսկ օրենքները՝ “անօրեն”: Կարևո՞ր է, որ իշխանությունները վայելեն ժողովրդի հարգանքն ու համակրանքը, ինչո՞ւ…

ԾԱՆԻ՛Ր ԶՔԵԶ

Ընթերցե՛ք ստորև առաջարկվող հատկանիշների ցանկը և նշե՛ք, թե դրանցից յուրաքանչյուրը որքանով է կարևոր առաջնորդ լինելու համար:

Հատկանիշ	Շատ կարևոր է	Կարևոր է	Այնքան էլ կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ
Բարեխղճություն				
Պարտաճանաչություն				
Բարեկրթություն				
Գործիմացություն				
Հարստություն				
Զենք				
Համագործակցելու կարողություն				
Այլոց իրավունքների ու կարիքների հարգում				
Լավատեսություն				
Արդարամտություն				
Ստեղծագործականություն				
Հանդուրժողականություն				
Պատասխանատվություն				
Հոգատարություն				
Համառություն				
Կամակորություն				
Ճկունություն				
Հավասարակշռվածություն				
Համոզելու կարողություն				
Լսելու ընդունակություն				
Գաղտնապահություն				

- Ի՞նչ եք կարծում, փոքր և մեծ խմբերի առաջնորդները պետք է նույնանման հատկանիշներով օժտված լինեն, թե՝ տարբեր: Ինչո՞ւ:

ԴԱՍ 21. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Դասի նպատակը

Այս դասի ընթացքում կուսումնասիրեք “պետություն” հասկացությունը և կանդրադառնաք պետական իշխանության գաղափարին:

ԸՆԹԵՐՑԵ'Ք ՏԵՔՍՏԸ

> Պետությունը մեկ միասնական “դեմք” է, որի գործողությունների համար պատասխանատու է մարդկանց հսկայական բազմությունը, որը փոխադարձ համաձայնությամբ որոշել է այդ “դեմքին” օժտել ուժ գործադրելու և բոլորի միջոցներն այնպես տնօրինելու կարողությամբ, ինչպես ինքն է նպատակահարմար գտնում…
>
> ***Թոմաս Հոբս***

Աշխարհագրությունից, ինչ խոսք, ծանոթ եք աշխարհի քաղաքական քարտեզին ու գիտեք, թե տարբեր մայրցամաքներում ինչ պետություններ կան: Իսկ ի՞նչ է պետությունը, ինչպիսի՞ հատկություններ ունի: Քարտեզն արդեն հուշում է, որ *պետություններն ունեն **տարածք և սահմաններ***: Այդ տարածքում *բնակչությունը և իշխանությունը բաժանվում են ըստ **վարչատարածքային միավորների***: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում կան *մարզեր*, որոնք իրենց հերթին բաղկացած են *համայնքներից*: Պետությունը նաև ունի ***ինքնիշխանություն***: *Սա նշանակում է, որ տվյալ պետական իշխանությունը **գերակայում** է տվյալ երկրի ներսում* (օրինակ՝ մարզպետներն ու համայնքների ղեկավարները ենթարկվում են կենտրոնական իշխանություններին), *իսկ այլ երկրների հետ հարաբերություններում տվյալ պետական իշխանությունը հանդես է գալիս **անկախորեն** և **ինքնուրույն**: Պետությունը երկրի տարածքում հաստատում է **կարգ ու կանոն օրինաստեղծ** գործունեության միջոցով: Եվ վերջապես, գոյությունը պահպանելու համար պետությանն անհրաժեշտ են նյութական միջոցներ, որոնք ստացվում են **հարկեր հավաքելու** միջոցով:*

Պետությունները հասարակության պատմական զարգացման արդյունք են: Դրանք միշտ չեն եղել: Պատմության դասընթացից հիշում եք, որ մարդիկ շատ վաղ անցյալում միավորվել են տոհմերով, ցեղերով, համայնքներով: Այս միավորման դեպքում իշխանությունը համայնական էր, քանի որ համայնքների ներկայացուցիչները համատեղ կառավարում էին իրենց կյանքը: Սակայն պատմական զարգացումը բերում է այն բանին, որ աստիճանաբար մարդկանց միավորումների մասշտաբները մեծանում են և շուտով ձևավորվում են բազմահազարանոց մեծ սոցիալական խմբեր: Հասկանալի է, որ նման խմբերում հնարավոր չէ համայնական կառավարում իրականացնել, և մարդկանց այդ մեծ զանգվածից աստիճանաբար առանձնանում է մի փոքր, բայց լավ կազմակերպված խումբ, որը սկսում է իրականացնել ամբողջ մեծ խմբի կառավարումը: Կարելի է ասել, որ խշխանավորների և իշխողների նման բաժանման ընթացքում առաջանում է պետությունը: ***Պետությունը** մարդկանց միավորման պատմական ձև է, որը հնարավորություն է տալիս որոշակի տարածքում կիրառել բոլորի համար*

պարտադիր օրենքներ ու կանոններ և կառավարել հասարակության կյանքը ինքնիշխանորեն՝ այսինքն, այլ նման միավորումներից անկախ և սեփական տարածքում գերակայող կերպով: Պետությունը իրավունքի մարմնացումն է հասարակության մեջ, իրավունքի իրականացնողն ու երաշխավորը: Լավագույն պետությունը նպատակ ունի հասնել իր քաղաքացիների բարօրությանն ու ազատությանը՝ լինելով հասարակությունը կազմող մեծամասնության կամքի արտահայտիչը, բայց չանտեսելով միաժամանակ փոքրամասնության իրավունքները:

- Ի՞նչ եք կարծում, նման պետություն գոյություն ունի՞:

Պետության առաջացման մասին կան տարբեր մոտեցումներ: Ոմանք գտնում են, որ պետությունները առաջացել են *նահապետական* ընտանիքի ընդլայնումից: Նման պետության ղեկավար համարվում է տվյալ տոհմի նահապետը:

- Հիշե՛ք Հայկի և Բելի առասպելը, ըստ որի առաջացավ Հայք- Հայաստանը:

Այլոք հավատում են, որ պետությունը նույնպես *աստվածային* ծագում ունի, ստեղծվել է Աստծո կամքով, որպեսզի մարդիկ ապրեն կարգ ու կանոնի մեջ:

Իսկ որոշ իմաստասերներ մտածում են, որ պետություններն առաջացել են փոխադարձ *զավթումների* ու պատերազմների արդյունքում որպես ուժային կառույցներ արտաքին թշնամիներից պաշտպանվելու համար: Ըստ այս մոտեցման, պետությունը նաև հարկադրանք է գործադրում իր կողմից նվաճվածների վրա, որպեսզի վերջիններս չընդվզեն տվյալ պետության դեմ:

Եվ վերջապես, կա պետության առաջացման մասին *պայմանագրային* ուսմունք, կամ այլ կերպ՝ հասարակական դաշինքի ուսմունքը, որի մասին կարող եք կարդալ լրացուցիչ ընթերցանության նյութը: Բայց մինչ այդ նորից ընթերցեք դասի բնաբանը ու մտածեք Հոբսի այն դրույթի շուրջ, որ պետությունը մարդկանց փոխադարձ համաձայնության արդյունքն է:

- Արդյո՞ք դա այդպես է: Այդ դեպքում հասարակության պատմության մեջ ինչո՞ւ են եղել բռնատիրություններ: Ի՞նչը կարող է պաշտպանել իշխանության ապօրինի զավթումից:

Հարցեր մտորելու համար.

- Ի՞նչ է պետությունը: Եղե՞լ է ժամանակ, երբ պետություն չի եղել: Ինչպե՞ս են միավորվել մարդիկ այդժամ:
- Պետության ինչպիսի՞ հատկանիշներ գիտեք:
- Ի՞նչ է ինքնիշխանությունը:
- Ի՞նչ եք կարծում, հարկադրանք կիրառելը պետության հատկանի՞շ է, թե՝ ոչ: Ինչո՞ւ:
- Պատմության դասընթացից պետական կառավարման ինչպիսի տարատեսակների եք ծանոթացել:
- Պետության առաջացման ինչպիսի՞ մոտեցումների ծանոթացաք: Ո՞րն է դրանցից նախընտրելի Ձեզ համար: Ինչո՞ւ:

Լրացուցիչ ընթերցանության նյութ

Հասարակական դաշինքի մաին գաղափարներ առաջ են քաշվել դեռևս հին աշխարհի մտածողների կողմից, սակայն այդ ուսմունքն իր ամբողջական ձևակերպումը ստացել է 17-րդ դարի անգլիացի մտածողներ Թոմաս Հոբսի և Ջոն Լոկի տեսություններում: Հոբսը գտնում էր, որ վաղ անցյալում մարդիկ ապրել են ամեն մեկն իր համար, եղել են եսասեր ու ձգտել իրենց նեղ անձնական նպատակներին: Բայց քանի որ բոլորն էլ հավասարապես ձգտում էին հագուրդ տալ անձնական ընչաքաղցությանը, առաջանում է մի իրավիճակ, որը Հոբսն անվանում է ‘բոլորի պատերազմը բոլորի դեմ’, ըստ նրա, այդ իրադրությունում ‘մարդը մարդուն գայլ է’: Այսպիսի իրավիճակը հավասարապես վտանգավոր էր բոլորի՝ և° թույլերի, և° ուժեղների համար: Թույլերը ոտնահարվում էին ուժեղների կողմից, իսկ ուժեղներն էլ միշտ չէ, որ մնում էին ամենուժեղը: Առաջ էին գալիս նոր մարդիկ՝ ավելի ուժեղ ու ճնշում նախկինում ուժեղ համարվողներին: Այդ համընդհանուր վախի ու ատելության իրադրությունը չէր խոստանում ոչ մի լավ բան, և մարդիկ հասկանալով դա, որոշում են գալ համաձայնության՝ դաշինքի: Դրա համար նրանցից յուրաքանչյուրը հրաժարվում է ամեն ինչի նկատմամբ իր նախկինում ունեցած անսահմանափակ իրավունքից, դրա մի մասը փոխանցելով ուրիշներին: Այս դաշինքի հետևանքով առաջանում է ղեկավարման մարմին՝ պետություն, որը վերցնելով իր անկախ քաղաքացիների իրավունքների մի մասը, սկսում է պաշտպանել նրանց բոլոր տեսակի վտանգներից: Ըստ Հոբսի, հասարակական դաշինքի կնքումով հասարակության պատմության մեջ ավարտվում է ‘բնական փուլը’ և սկսվում է ‘քաղաքացիական հասարակության’ փուլը:

Լոկը զարգացնում է Հոբսի գաղափարները, նշելով, որ ‘բնական վիճակում’ մարդն ուներ ոչ միայն ազատություն, այլև իր սեփականությունն ուզածի պես տնօրինելու իրավունք: Պետությունը ծագում է այն ժամանակ, երբ ազատ մարդիկ հրաժարվում են ինքնապաշտպանության բնական իրավունքից և այդ իրավունքը տրամադրում ամբողջ հասարակությանը: Բնական վիճակից քաղաքացիականին անցնելու պատճառը բնական վիճակում իրավունքների անհուսալիությունն է: Լոկը կատարում է մեկ կարևոր հավելում. անհատը կարող է չենթարկվել այն պետությանը, որը չի ծառայում իր նպատակին, այն է՝ իր քաղաքացիների ազատությունների ու սեփականության պահպանմանը: Պետական իշխանությունը

չի կարող լինել կամայական, դրա համար այն պետք է բաժանվի ճյուղերի, որոնք կվերահսկվեն մեկը մյուսի կողմից:

Հարցեր

- Համոզի՞չ է արդյոք հասարակական դաշինքի մասին տեսությունը:
- Ի՞նչ եք կարծում, պատմականորեն ինչպես է ընթացել մարդկանց միավորումը:
- Արդի կյանքում լինո՞ւմ են դեպքեր, երբ մարդկանց որևէ խումբ հավաքվում է ու իրեն իշխելու գործառույթը տրամադրում մեկ կամ մի քանի հոգու: Կարո՞ղ եք բերել նման օրինակներ:
- Ըստ Ձեզ, ո՞րն է պետության նպատակը:
- Մեկ անգամ ևս անդրադարձեք նախորդ դասում ընթերցված “Որոգայթ փառաց”-ից բերված հատվածին և մտորեք, թե պետության անհրաժեշտությունը հասարակության կյանքում ինչով է պայմանավորված:

ԴԱՍ 22-23 ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Դասի նպատակը

Այս դասը սովորելուց հետո դուք կհասկանաք ժողովրդավարական իշխանության առանձնահատկությունները: Կհասկանաք իշխանության սահմանափակման անհրաժեշտությունը, սկզբունքները: Պատկերացում կունենաք իշխանության ճյուղերի տարանջատման, բայց նաև՝ փոխկապվածության ու փոխկախվածության մասին: Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության որոշ գլուխներ՝ կիմանաք իշխանության ճյուղերի լիազորությունների ու սահմանափակումների մասին: Ձեր տեսական գիտելիքները կկիրառեք կոնկրետ հարցերի պատասխանելու նպատակով:

Անսահմանափակ իշխանություն

Ընթերցեք հետևյալ սցենարները և պատասխանեք հաջորդող հարցերին

1. “Բոնապետ” կոչվող երկրի Սահմանադրությամբ նախատեսված է, որ Նախագահը նշանակում և ազատում է վարչապետին, նախարարներին, փոխնախարարներին, քաղաքապետերին, գյուղապետերին, դպրոցների տնօրեններին: Նախագահը ընդունում է օրենքներ, փոփոխություններ կատարում դրանցում: Նա իրավունք ունի հանցագործներին դատապարտել, ներում շնորհել: Միայն Նախագահի թույլտվությամբ են հրատարակվում թերթերի հոդվածները, եթեր հեռարձակվում հեռուստահաղորդումները:
2. “Ամեն ինչ թույլատրելի է” կոչվող երկրի խորհրդարանի անդամները նշանակվում են ցմահ: Նրանց ոչ մի դեպքում չի կարելի հեռացնել իրենց պաշտոնից:
3. “Դպրոցը՝ ես եմ” ուսումնական հաստատության տնօրենը իր հրամանով նշանակում է աշակերտական ինքնավարության մարմնի՝ աշակերտական խորհրդի նախագահ ու նրան տալիս անսահմանափակ լիազորություններ: “Դու կարող ես աշակերտների հետ վարվել այնպես, ինչպես ուզում ես, կարող ես կայացնել քո համար ընդունելի որոշումներ: Ես քեզ կպաշտպանեմ”, ասում է դպրոցի տնօրենը աշակերտական խորհրդի նախագահին:
4. “Արգելված բառ” երկրում ոստիկանության աշխատակիցները ձերբակալում են բոլոր այն լրագրողներին ու քաղաքացիներին, ովքեր գրում կամ խոսում են ոստիկանության մասին:

Պատասխանեք հետևյալ հարցերին

1. Նշեք, թե օրինակներից յուրաքանչյուրում ինչն է անընդունելի:
2. Ինչպե՞ս կբնութագրեք այն երկրները, որոնցում կատարվում են այդ իրադարձությունները:
3. Նշեք, թե ժողովրդավարական երկրի ինչ օրենքների խախտումներ կան վերոնշյալ օրինակներում:
4. Փորձեք օրինակները վերաշարադրել այնպես, որ համապատասխանեն ժողովրդավարական երկրի օրենքներին:

Իշխանության սահմանափակման սկզբունքները

Ընթերցե՛ք տեքստը

Նախաբան

Հայաստանը որդեգրել է սահմանադրական ժողովրդավարության ճանապարհը: Սա նշանակում է, որ Հայաստանում ժողովրդավարական սկզբունքները արտահայտված են Սահմանադրությունում: Իսկ մեր Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ "Հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ... ":

Սահմանադրական ժողովրդավարության բնութագրիչներից մեկը իշխանության սահմանափակումներն են: Հայաստանում, ինչպես և շատ երկրներում, կան իշխանության երեք ճյուղեր՝ օրենսդիր, գործադիր եւ դատական: Օրենսդիր իշխանությունը Ազգային ժողովն է, գործադիրը՝ կառավարությունը, դատականը՝ դատարանները: Իսկ Հայաստանի Նախագահը ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Իշխանության լիազորությունները սահմանափակվում են օրենքով: Այս խնդիրը լուծվում է կոնկրետ իրավական մեխանիզմներով: Առանձնացվում է իշխանության սահմանափակման 4 հիմնական սկզբունք:

Իշխանության սահմանափակման **առաջին սկզբունքը իշխանության տարանջատման և գործառույթների կիսման սկզբունքն է**: Իշխանության տարանջատման սկզբունքը առաջադրել են 17-րդ դարի անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկը և 18-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփա Շարլ Լուի Մոնտեսքյոն: "Օրենքների ոգին" աշխատության մեջ Մոնտեսքյոն գրում է, որ իշխանության տարանջատման սկզբունքը կարևոր է այն իմաստով, որ իշխանության ճյուղերը, վերահսկելով միմյանց, ապահովում են քաղաքացիների ազատությունները: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված է իշխանության տարանջատման սկզբունքը. "Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա: Պետական մարմինները

և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ”: Ինչ վերաբերում է իշխանության ճյուղերի գործառույթների կիսման սկզբունքին, ապա սա ամրագրված է Հայաստանի Սահմանադրության բազմաթիվ հոդվածներում: Մասնավորապես, կան շատ գործառույթներ, որոնք իրականացվում են Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության, դատական իշխանությունների մասնակցությամբ:

- Ուսումնասիրեք ՀՀ Սահմանադրության 3-րդ, 4-րդ, 5-րդ գլուխները: Դուրս գրեք իշխանության ճյուղերի տարանջատումը և գործառույթների կիսումը հավաստող դրույթներ:

Իշխանության սահմանափակման **երկրորդ սկզբունքը հակակշիռների և զսպումների սկզբունքն է:** Իշխանության յուրաքանչյուր օղակ ունի մյուսներին հակակշռելու, զսպելու, վերահսկելու իրավասություններ: Այսինքն, իշխանության ոչ մի օղակ չունի անսահմանափակ լիազորություններ: Արդյունքում՝ իշխանության ոչ մի օղակ գերիշխող դեր չունի: Օրինակ՝ Նախագահը որոշակի լծակներ ունի հակակշռելու Ազգային ժողովի լիազորությունները: Իր հերթին, Ազգային ժողովն էլ կարող է հակակշռել Նախագահի որոշ լիազորություններ: Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության գործունեությունը վերահսկելու լիազորություններ ունեն դատարանները:

- Ուսումնասիրեք ՀՀ Սահմանադրության 3-րդ, 4-րդ և 6-րդ գլուխները: Դուրս գրեք մեխանիզմներ, երբ իշխանության ճյուղերը հակակշռում, զսպում և վերահսկում են միմյանց:

Իշխանության սահմանափակման **երրորդ սկզբունքն այն է, որ կյանքի, անձի անձեռնմխելիության, մտքի և մյուս հիմնարար իրավունքներն ու ազատությունները պաշտպանվում են օրենքով:** Այսինքն, իշխանության գործողությունները սահմանափակված են, և նրանք քաղաքացիների հետ պետք է հարաբերվեն օրենքի պահանջներին համապատասխան: Եթե քաղաքացին նույնիսկ խախտել է օրենքները, հանցագործություն է կատարել, ապա նրա նկատմամբ իշխանությունների գործողությունները չպետք է լինեն կամայական, այլ պետք է համապատասխանեն օրենքի պահանջներին:

- Ուսումնասիրեք ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխը: Դուրս գրեք դեպքեր, երբ օրենքը սահմանափակում է իշխանության որոշակի գործողություններ քաղաքացիների նկատմամբ:

Չորրորդ սկզբունքը իշխանության հաջորդականությունը ընտրությունների միջոցով իրականացնելն է: Իշխանության սահմանափակումը ենթադրում է, որ ընտրովի պաշտոնները (Նախագահ, պատգամավոր, համայնքի ղեկավար) ունեն ժամկետներ: Ընդ որում դրանք որոշակի են և խիստ : Կան նաև տարիքային սահմանափակումներ:

- Ուսումնասիրեք ՀՀ Սահմանադրության 3-րդ, 4-րդ և 6-րդ գլուխները: Նշեք ժամկետային և տարիքային սահմանափակումներ Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների եւ դատական մարմինների ներկայացուցիչների համար:

Իշխանության սահմանափակումները՝ ըստ ՀՀ Սահմանադրության

Փոքր խմբերով քննարկեք ստորև բերվող սցենարները և պատասխանեք վերջում տրված հարցերին: Խմբերը իրենց սցենարներն ու պատասխանները ներկայացնում են ամբողջ դասարանին:

Սցենարները մտացածին են, բայց ձեզ կօգնեն յուրացնել Հայաստանի Սահմանադրության նորմերը:

Առաջին սցենար

"A երկիրը Հայաստանի բարեկամն է: B բռնատիրական երկրի բանակը հարձակում է գործել ժողովրդավարական A երկրի վրա: Հայաստանի Նախագահը հայտարարում է, որ ինքը՝ որպես Զինված ուժերի գլխավոր հրամանատար, բարեկամական A երկրին աջակցելու նպատակով, հրամանագիր է ստորագրել B երկրին պատերազմ հայտարարելու և դաշնակից երկիր հայկական զորամիավորումներ ուղարկելու մասին":

- Ուսումնասիրելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 4-րդ գլուխները՝ պատասխանեք հետևյալ հարցին.

Նախագահը արդյոք իրավասու՞ է այդ որոշումները կայացնելու: Տվյալ իրավիճակում կա՞ն սահմանափակումներ Նախագահի համար:
Պատասխանները հիմնավորեք Սահմանադրության համապատասխան հոդվածներով:

Երկրորդ սցենար

"Տնտեսական ճգնաժամի պատճառով Հայաստանը հայտնվել է ծանր իրավիճակում: Տարբեր բնակավայրերում անցկացվում են ցույցեր և հանրահավաքներ: Ընդդիմությունը ակտիվ գործունեություն է ծավալում Ազգային ժողովում և քննարկման է դրել Նախագահի պաշտոնանկության խնդիրը: Երկրի իրավիճակը դարձել է անվերահսկելի: Հայաստանի Նախագահը հրամանագիր է ստորագրում, որով, սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգը հիմք ընդունելով, որոշում է ցրել Ազգային ժողովը":

- Ուսումնասիրելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 4-րդ գլուխները՝ պատասխանեք հետեւյալ հարցին.

Նախագահը արդյոք իրավասու՞ է այդ որոշումները կայացնելու: Տվյալ իրավիճակում կա՞ն սահմանափակումներ Նախագահի համար:
Պատասխանները հիմնավորեք Սահմանադրության համապատասխան հոդվածներով:

Երրորդ սցենար

"Հայաստանում ռազմական դրություն է: Ծայրահեղ սրվել են Ազգային ժողովի և կառավարության հարաբերությունները: Ազգային ժողովը երկու ամիս ձգձգում է կառավարության որոշմամբ անհետաձգելի համարված օրենքի նախագծի քննարկումը: Ի վերջո, Ազգային ժողովը միաձայն որոշում է անվստահություն հայտնել կառավարությանը":

- Ուսումնասիրելով ՀՀ Սահմանադրության 4-րդ գլուխը՝ պատասխանեք հետեւյալ հարցին.

Ազգային ժողովը արդյոք իրավասու՞ է նման քայլեր կատարելու: Տվյալ իրավիճակում կա՞ն սահմանափակումներ Ազգային ժողովի համար:
Պատասխանները հիմնավորեք Սահմանադրության համապատասխան հոդվածներով:

Չորրորդ սցենար

"Ազգային ժողովի պատգամավորներից մեկն իր ելույթում վիրավորում է հայտնի գործարարներից մեկին: Գործարարը դիմում է դատախազություն՝ պատգամավորի նկատմամբ քրեական գործ հարուցելու դիմումով: Դատախազությունը, համապատասխան որոշմամբ, քրեական գործ է հարուցում և ձերբակալում պատգամավորին":

- Ուսումնասիրելով ՀՀ Սահմանադրության 2-րդ, 4-րդ և 6-րդ գլուխները՝ պատասխանեք հետևյալ հարցին.

Դատախազությունը արդյոք իրավասու՞ է նման որոշում կայացնելու: Տվյալ իրավիճակում կա՞ն սահմանափակումներ դատախազության համար:

Պատասխանները հիմնավորեք Սահմանադրության համապատասխան հոդվածներով:

Առաջադրանք

Օգտվելով Հայաստանի Սահմանադրությունից՝ գրեք սցենարներ, որոնցում իշխանության որևէ օղակ գերազանցում է օրենքով նախատեսված իր լիազորությունները և դրանով իսկ խախտում իշխանության սահմանափակման սկզբունքները:

ԴԱՍ 24-25. ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԹՐԱՖԻՔԻՆԳ

Դասի նպատակը

Այս դասը սովորելու հետո դուք կկարողանաք սահմանել “կոռուպցիա” և “թրաֆիքինգ” հասկացությունները: Կհասկանաք կոռուպցիայի ձևերը, պատճառներ և դրա հաղթահարման ուղիները:

Կոռուպցիան հասարակական կյանքը վտանգող երևույթ է՝ հանցագործություն: Թարգմանաբար այն նշանակել է բարոյական անկում: Մարդկությունը ջանքեր է թափում այդ երևույթը վերացնելու ուղղությամբ: **Կոռուպցիան հասարակական իշխանության չարաշահումն է անձնական օգուտ ստանալու նպատակով, որը վնասում է անհատի, հասարակության, պետության շահերը:**

Կոռուպցիայի ձևերը

Կոռուպցիայի ձևերը այն արարքներն են, որոնցով վաճառվում են պետական, քաղաքական կամ այլ որոշումներ: Կոռուպցիան հնարավոր է բոլոր ոլորտներում: Թվարկենք կոռուպցիայի մի քանի ձևեր.

- Պաշտոնի կամ աշխատանքի նշանակում կամ պաշտոնի բարձրացում որոշակի ակնկալիքով:
- Հարկեր մուծելուց ազատում:
- Հանցագործության թաքցնում և չգրանցում:
- Գաղտնի տեղեկատվության տրամադրում:

Կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի մեջ մտնում են կաշառք ստանալը, պահանջելը, տալը, պետական գույքի հափշտակությունը, իշխանական լիազորությունների առևտուրը, դրա օգտագործումը անձնական օգուտ ստանալու համար և այլն:

- Կոռուպցիայի ուրիշ ի՞նչ ձևերի ու երևույթների եք հանդիպել:

Կոռուպցիայի տարածված ձևերից է **նեփոթիզմը**: Նեփոթիզմը ազգականների, ընկերների կամ ծանոթների նեղ շրջանակի մարդկանց պաշտոնի նշանակելն է՝ շրջանցելով մրցույթները և նշանակված մարդու իրական մասնագիտական

արժանիքները: Շատ հաստատություններում նեփոթիզմը բացառելու համար արգելվում է ազգականների համատեղ աշխատանքը միևնույն հաստատությունում:

Կոռուպցիայի վնասակար հետևանքներ

Հասարակական կյանքում հատկապես վնասակար են այն հանցագործությունները, որոնք կատարում են պետական պաշտոնյաները: Նման դեպքերում ոչ միայն վնաս է հասցվում, այլև կորում է մարդկանց վստահությունը պետության հանդեպ: Կոռուպցիան և արդյունավետ կառավարումը անհամատեղելի են: Դիտարկենք կոռուպցիայի մի քանի էական վնասներ.

- Կոռուպցիան ավելացնում է պետական բյուջեի ծախսերը:
- Առաջ են մղվում այն ծրագրերը, որոնցից եկամուտներ են ակնկալվում:
- Տուժում են կրթական, առողջապահական և այլ սոցիալական ոլորտներ, ՝ չստանալով բավարար ֆինանսավորում:
- Աճում է բյուրոկրատական քաշքշուկը: Մարդիկ ստիպված են լինում հսկայական ժամանակ և ռեսուրսներ ծախսել հասարակ խնդիրներ լուծելու համար:
- Խաթարվում է մրցակցության իմաստը, ինչը ժամանակակից աշխարհում զարգացման կարևորագույն նախապայման է:
- Կենսաթոշակառուները չեն ստանում բավարար կենսաթոշակ:

Կոռուպցիայի պատճառները և դրա հաղթահարման ուղիները

Կոռուպցիան ունի մարդաբանական պատճառներ: Նրա խորքային արմատները թաքնված են մարդու շահամոլության, եսասիրության մեջ: Մարդիկ ի բնե հակված են նախևառաջ հոգալու իրենց պահանջմունքները: Մարդկանց մեջ արմատավորվող ավելին սպառելու հոգեբանությունը դրդում է անձնական եսասիրության: Մարդը սեփական բարեկեցությունը գերադասում է պետության, հասարակության շահից, ինչը անթույլատրելի է: Առավել վտանգավոր է, երբ այդ գործելակերպը տեղափոխվում է հանրային կառավարման ոլորտ, և պաշտոնյաները իրենց ծառայողական դիրքը օգտագործում են հարստանալու համար: Հանրության համար պաշտոնը դառնում է ոչ թե երկրին ծառայելու, սեփական գաղափարներն ու ծրագրերը կյանքի կոչելու միջոց, այլ հարստությունը բազմապատկելու հնարավորություն:

- Ձեր կարծիքով, երբևիցե հնարավոր կլինի՞ մարդու մեջ արմատախիլ անել շահամալությունը:

Կոռուպցիան ունի պատմամշակութային պատճառներ: Ժողովրդի պատմական ճանապարհը, ավանդույթները կարող են նպաստել կոռուպցիային: Օրինակ՝ Հայաստանի պարագայում, երկար ժամանակաշրջան պետականություն չունենալը, օտարի ազդեցության տակ գտնվելը, խորհրդային ամբողջատիրությունը, բնակչության մեջ արմատավորել են կոռուպցիան արդարացնող գիտակցություն:

Կոռուպցիան ունի սոցիալ-տնտեսական պատճառներ: Տնտեսական վատ վիճակը, գործազրկության բարձր ցուցանիշները ազդում են կոռուպցիայի մակարդակի վրա: Եթե պետական ծառայողների աշխատավարձերը շատ ցածր են, ապա դա բացասական ազդեցություն է ունենում և պաշտոնյաներին դրդում է կոռուպցիայի:

Կոռուպցիան պայմանավորված է պետաիրավական համակարգի թերություններով: Որպես կանոն, ձևավորված համակարգերում, ուր կա օրենքի գերակայություն,

մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը բարձր մակարդակի վրա են, կոռուպցիան շատ մեծ տարածում չի ունենում: Դրան հակառակ՝ ոչ հստակ օրենքները, ժողովրդավարական ավանդույթների բացակայությունը, ոչ թափանցիկ աշխատառճը, անկախ դատական իշխանության բացակայությունը նպաստում են կոռուպցիայի աճին:
Կառավարման ցածր մշակույթը, երկար տարիներ նույն պաշտոնը զբաղեցնելը, իշխանության անձնավորումը, վատ հսկողությունը, մենաշնորհները նպաստում են կոռուպցիայի աճին:
Կոռուպցիայի դեմ պայքարը և դրա հաղթահարման ուղիները:
Դեռևս ձևավորման փուլում գտնվող ժողովրդավարական հասարակարգերում կոռուպցիայի դեմ պայքարը պետք է կրի համակարգված բնույթ: Այն պետք է ներառի իրազեկման աշխատանքներ՝ կոռուպցիայի կործանարար հետևանքների մասին: Անհրաժեշտ է իրականացնել նաև մի շարք բարեփոխումներ: Մասնավորապես.

- Նվազագույնի հասցնել մարդկանց անմիջական շփումը պաշտոնյաների հետ՝ փոխարենը ներդնելով “մեկ պատուհան” և տեղեկույթի էլեկտրոնային փոխանակման մշակույթը:
- Կառավարումը դարձնել թափանցիկ, վերահսկել պաշտոնյաների եկամուտները:

Ակնհայտ է մեկ բան: Մարդիկ կոռուպցիոներ չեն ծնվում: Այդպիսին նրանք դառնում են հասարակական միջավայրի ազդեցությամբ: Հետևաբար, եթե իրականացվեն բարեփոխումներ, ապա հնարավոր կլինի նվազեցնել կոռուպցիան:
Կոռուպցիայի դեմ պայքարում են նաև միջազգային կազմակերպությունները: Այդ նպատակով հիմնադրվել է Թրանսփերենսի ինթերնեյշնլ կազմակերպությունը, որը գործում է նաև Հայաստանում:

Թրաֆիքինգ

Ի թիվս այլ հիմնախնդիրների, գլոբալացման դարաշրջանում ահագնացող պրոբլեմ է դառնում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հիմնախնդիրը:
Թրաֆիկինգը կամ մարդկանց շահագործումը համարվում է 21-րդ դարի ստրկություն, այն հաճախ անվանում են նաև՝սպիտակ ստրկություն՝: Հայտնի են կանանց, անչափահասների և տղամարդկանց աշխատանքային և սեռական շահագործման բազմաթիվ դեպքեր:
Թրաֆիքինգը արդիական խնդիր է նաև Հայաստանի համար: Որպես կանոն, մարդկանց շահագործման զոհեր են դառնում մեր այն հայրենակիցները, ովքեր ցանկանում են խուսափել ցածր կենսապայմաններից ամեն գնով, երբեմն անշրջահայացորեն, այդ նպատակով համաձայնում են լքել մեր հայրենիքը, անզգուշորեն հավատալով եկամուտներն արագ բարձրացնելու իրենց տրված հաճախ սին խոստումներին: Արդյունքում նրանցից շատերը հայտնվում են ծանր կացության մեջ. շահագործվում են անխղճորեն ֆիզիկապես և բարոյապես,

ստիպված են լինում կատարել իրենց ուժերից վեր ծանր աշխատանք, դրա դիմաց չվճարվելով, արժանապատվության նսեմացմամբ, ենթարկվելով ծեծի ու սպառնալիքների:



Թրաֆիքինգի երևույթը ընկալելու համար դիտարկեք ստորև բերվող աղյուսակը:

Թրաֆիքինգ իրականացնողների գործողությունները	Թրաֆիքինգի իրականացման եղանակները	Թրաֆիքինգ իրականացնելու նպատակները
Թրաֆիքինգի դեպքում ստորև նշված գործողությունները կատարվում են շահագործման նպատակով. • հավաքագրելը • տեղափոխելը • փոխանցելը • պահելը • ընդունելը • թաքցնելը • ստանալը	•սպառնալիքի գործադրում • ուժի կիրառում • հարկադրանքի այլ միջոցների կիրառում (օրինակ՝ փաստաթղթերի կեղծում կամ առգրավում) • առևանգում • խարդախություն • խաբեություն • պաշտոնական դիրքի չարաշահում • զոհի վիճակի	Հիմնական նպատակը շահագործումն է, որը կարող է ունենալ հետևյալ ձևերը. • մարմնավաճառության նպատակներով այլ անձանց շահագործում • սեռական շահագործման այլ ձևեր (օրինակ՝ պոռնկագրություն) • հարկադիր աշխատանքներ կամ ծառայություններ • անձի նկատմամբ

	խոցելիության շահարկում • գումարների տրամադրում • կաշառում	վերահսկողություն իրականացնող այլ անձի համաձայնության ձեռք բերում • ստրկություն կամ ստրկությանը հավասարազոր վիճակ (օրինակ՝ մուրացկանություն, որի ողջ եկամուտը շահագործողին է հասնում) • տաժանակիր աշխատանքներ • օրգանների կորզում

Առաջադրանք

1. Այցելե՛ք Թրանսփերենսի ինթերնեյշնլ կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կայք և ուսումնասիրեք Հայաստանին վերաբերող տեղեկատվությունը։
2. Դասարան հրավիրեք իրավապահ որևէ մարմնի աշխատակցի՝ ներկայացնելու համար կոռուպցիայի դեմ պայքարի պետական միջոցառումները։
3. Պատրաստեք հակակոռուպցիոն քարոզչական թերթիկներ և տարածեք դրանք։

ԴԱՍ 26. *Գործնական աշխատանք:* Իշխանության մարմնի գործունեության ուսումնասիրում և գնահատում:

Արդեն գիտեք, որ ժողովրդավարական հասարակություններում կա իշխանության երեք ճյուղ՝ օրենսդիր, գործադիր և դատական: Բաժանվե՛ք 4-5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խումբ ընտրում է իշխանության ճյուղերից որևէ մեկը և սկսում է տվյալ մարմնի գործունեության ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության քայլերը

1. Ձեր ուսուցչի ուղղորդմամբ ընթերցե՛ք ՀՀ Սահմանադրության համապատասխան հատվածները՝ հասկանալու համար, թե ինչ լիազորություններ և գործառույթներ ունի իշխանության տվյալ ճյուղը:
2. Այնուհետև ինտերնետային կայքերի միջոցով ուսումնասիրեք իշխանության տվյալ մարմնի գործառույթները: Եթե դուք ուսումնասիրում եք ՀՀ Նախագահի գործունեությունը, ապա այցելե՛ք www.president.am կայքը: Ազգային ժողովի գործունեությունը ուսումնասիրելու պարագայում այցելե՛ք www.parliament.am, www.parliamentmonitoring.am կայքերը: Գործադիր իշխանության մարմինների պարագայում այցելե՛ք www.gov.am կայքը: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը ուսումնասիրելու պարագայում այցելե՛ք www.region.am կայքը: Իսկ եթե ուսումնասիրում եք դատական ատյանների գործունեությունը, ապա այցելե՛ք www.court.am կայքը:
   Կայքերն այցելելու ժամանակ ուսումնասիրե՛ք տվյալ մարմնի կառուցվածքը, լիազորությունները և գործառույթները: Ծանոթացե՛ք ընթացիկ աշխատանքներին, նորություններին: Ընթացիկ աշխատանքները և նորությունները ուսումնասիրելիս փորձեք պարզել, թե դրանք որքանով են համապատասխանում տվյալ մարմնի գործառույթներին: Արդյո՞ք կան գործառույթներ, որոնք ավելի կարևորվում են, և հակառակը՝ կան գործառույթներ, որոնք անտեսված են:
3. Ինտերնետային որոնման համակարգերի միջոցով գտեք իշխանության տվյալ մարմնի գործունեությանը վերաբերող հրապարակումներ, հետևեք հեռուստահաղորդումներին: Փորձե՛ք հասկանալ, ինչպես են գնահատում զանգվածային լրատվամիջոցները տվյալ հաստատության աշխատանքը:
4. Եթե իշխանության մարմինը, որի գործունեությունը ուսումնասիրում եք, գտնվում է Ձեր բնակավայրին մոտ, ապա անցկացրեք հարցարզրույցներ պաշտոնյաների հետ: Հարցազրույցների ժամանակ տվյալներ հավաքեք այն մասին, թե որոնք իշխանության տվյալ

մարմնի հիմնախնդիրները, ի՞նչ է արվում աշխատանքները բարելավելու ուղղությամբ։ Հարցազրույցներ անցկացրեք նաև բնակիչների հետ՝ պարզելու նրանց տեսակետը տվյալ մարմնի գործունեության վերաբերյալ։

5. Ամփոփեք տվյալները և պատրաստեք բանավոր ներկայացում։ Բանավոր ներկայացումը կատարեք հետևյալ աղյուսակի միջոցով։

Իշխանության մարմնի անվանումը …….

Գործառույթները ըստ օրենսդրության	Վերջին շրջանում կատարած աշխատանքները	Զանգվածային լրատվամիջոցների կարծիքները, գնահատականները	Քաղաքացիների կարծիքները, գնահատականները	Մեր խմբի կարծիքները, գնահատակնները